

ՖՈՒՏԶԱԼ

Խաղի Կանոններ
2014/2015

Հաստատվել է Ֆուտբոլային Ասոցիացիայի Միջազգային Խորհրդի (IFAB) Ենթակոմիտեի կողմից:

Այս գիրքը չի կարող վերարտադրվել կամ թարգմանվել, անբողջությամբ կամ մասամբ, ցանկացած տեսքով, առանց ՖԻՖԱ-ի թույլտվության:

Հրատարակվել է Ֆուտբոլային Ասոցիացիայի Միջազգային Ֆեդերացիայի (ՖԻՖԱ) կողմից
FIFA-Strasse 20, 8044 Zurich, Switzerland.

Տարբեր լեզուներով հրատարակված գրքերում մեկնաբանությունների չհամընկնման դեպքում առաջնությունը տրվում է անգլերեն տարբերակին:

Ֆուտբոլային Ասոցիացիայի Միջազգային Ֆեդերացիա (ՖԻՖԱ)

Նախագահ. Գլխավոր Քարտուղար. Հասցե. 8044 Zurich Switzerland	Յոզեֆ Ս. Բլատեր (Շվեյցարիա) Ջերոմ Վալկե (Ֆրանսիա) FIFA-Strasse 20
Հեռախոս. Ֆաքս. Համացանց.	+41 (0)43 222 7777 +41 (0)43 222 7878 www.FIFA.com

Ֆուտբոլի Կոմիտե

Նախագահ.
Փոխնախագահ.

Ուորաուի Մակուդի
Էուզենիո Ֆիգուերեդո

Թայլանդ
Ուրուգվայ

Անդամներ.

Ջիլոնգ Ժանգ
Պետր Ֆոուսեկ
Ալվարո Մելո Ֆիլո
Ռաֆաել Տինոկո
Հանս Բոլլ
Ալի Կաֆաշիան
Վիտոր Լուպ Կվան Չենգ
Անտոնիո Էսկրիբանո
Ռիզնալ Ֆրանցիսկա
Ռուբեն Հայրապետյան
Մագդի Շամս Էլդին
Քուոք Տուան Տրան
Իլչո Գյորգյիոսկի
Յիլդիրիմ Դեմիրորեն
Ռայմոնդ Գուիշարդ
Ռայմոնդ Թիմ Կիի
Ռոլանդո Լոպես Սանդերս
Դոմինգո Միտույ

Անվար Ալթաշանի
Ջուլես Հմեուն
Ջունեիդի Տիլմո

Չինաստան
Չեխիա
Բրազիլիա
Գվատեմալա
Նիդերլանդներ
Իրան
Մակաու
Իսպանիա
Կուրակաո
Հայաստան
Սուդան
Վիետնամ
ՆՀՀ Մակեդոնիա
Թուրքիա
Անգոլա
Տրինիդադ և Տոբագո
Նիկարագուա
Հասարակածային
Գվինեա
Լիբիա
Նոր Կալեդոնիա
Եթովպիա

ՆՇՈՒՄՆԵՐ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ձևափոխումներ

Չնայած անդամ ասոցիացիաների համաձայնության և կանոնների սկզբունքների խստորեն պահպանման, կանոնների կիրառումը կարող է ձևափոխվել մինչև 16 տարեկան, կին, վետերան (35-ից բարձր) և հաշմանդամ ֆուտբոլիստների խաղերի համար: Թույլատրելի են հետևյալ ձևափոխումներն ըստ կետերի կամ ամբողջությամբ.

- խաղադաշտի չափերը
- գնդակի չափը, քաշը և նյութը, որից այն պատրաստված է
- դարպասասյուների միջև եղած հեռավորությունը և հեծանի բարձրությունը հատակից
- խաղակետերի տեղությունը
- փոխարինումների քանակը

Այլ ձևափոխումներ թույլատրելի են միայն ՖԻՖԱ-ի Մրցավարական Բաժնի համաձայնությամբ և ՖԻՖԱ-ի Ֆուտզալի Կոմիտեի հաստատմամբ:

Ֆիզիկական անձանց վերաբերվող նշումները վերաբերվում են երկու սեռերին:

Նշում

Այս նշանը օգտագործվում է Ֆուտզալ Խաղի Կանոններում: Լուսանցքում գտնվող գիծը մատնանշում է Կանոնների նոր փոփոխությունները:



Բաժին	Էջ
1 - Խաղահրապարակը.....	6
2 - Գնդակը.....	13
3 - Խաղացողների քանակը.....	15
4 - Խաղացողների հանդերձանքը.....	19
5 - Մրցավարները.....	21
6 - Մրցավարի օգնականները.....	25
7 - Խաղի տևողությունը	29
8 - Խաղի սկսումը և վերսկսումը	33
9 - Գնդակի՝ խաղի մեջ և խաղից դուրս լինելը.....	36
10 - Դարպասի գրավման մեթոդը.....	37
11 - «Խաղից դուրս».....	38
12 - Խախտումներ և ոչ պատշաճ վարքագիծ.....	39
13 - Տուգանային/ազատ հարվածներ.....	43
14 - 6 մետրանոց տուգանային հարված.....	51
15 - Կողագծից հարված.....	54
16 - Նետում դարպասից.....	57
17 - Անկյունային հարված.....	59
Խաղի կամ դաշտի տեր – հյուր խաղերում հաղթողին որոշելու ընթացակարգեր.....	61
Տեխնիկական գոտի.....	64
Մրցավարի պահեստային օգնական.....	66
Մրցավարի և մրցավարի օգնականի ազդանշաններ.....	67
Ֆուտզալ խաղի կանոնների մեկնաբանություններ և ուղեցույցներ մրցավարների համար.....	77

Խաղահրապարակի ծածկույթ

Մրցումների անցկացման կանոնակարգի համաձայն, հանդիպումները պետք է անցկացվեն փայտից կամ արհեստական նյութից պատրաստված հարթ, ողորկ և անվտանգ մակերևույթների վրա: Բետոնե կամ ասֆալտե մակերևույթներից պետք է խուսափել:

Արհեստական խտածածկով խաղահրապարակները թույլատրվում են բացառիկ դեպքերում և միայն ազգային առաջնություններում:

Խաղահրապարակի գծանշումներ

Խաղահրապարակը պետք է լինի ուղղանկյուն և գծանշված: Այդ գծերը, որոնք սահմանազատում են խաղահրապարակի տարածքները, հանդիսանում են տվյալ տարածքի մաս և իրենց զույնով պետք է ակնհայտորեն զանազանելի լինեն խաղահրապարակի մակերևույթի գույնից:

Խաղահրապարակը եզրագծող երկու երկար գծերը կոչվում են կողային, իսկ երկու կարճերը՝ դարպասային գծեր:

Խաղահրապարակը բաժանվում է 2 կիսաղաշտի՝ միջին գծով, որը միացնում է կողագծերի միջնակետերը:

Միջին գծի միջնակետը ցույց է տալիս խաղահրապարակի կենտրոնը, որի շուրջը գծվում է 3մ շառավղով շրջանագիծ:

Խաղահրապարակի սահմաններից դուրս՝ անկյունային աղեղից 5 մ հեռավորության վրա, դարպասային գծին ուղղահայաց պետք է կատարել նշում, որպեսզի անկյունային հարվածի ժամանակ պաշտպանվող թիմի խաղացողները պահպանեն այդ հեռավորությունը: Այդ նշման լայնությունը 8 սմ է:

Երկու լրացուցիչ նշում պետք է կատարել 10 մետրանոց հարվածի նշակետից աջ և ձախ, յուրաքանչյուրը 5 մ հեռավորության վրա, ցույց տալու համար այն նվազագույն տարածությունը, որը պետք է պահպանել 10 մետրանոց հարվածի կատարման ժամանակ: Այդ նշման լայնությունը 8 սմ է:

Չափսեր

Խաղաղաշտի կողային գծի երկարությունը պետք է գերազանցի դարպասային գծի երկարությանը:

Բոլոր գծերի լայնությունը պետք է լինի 8 սմ:

Ոչ միջազգային խաղերի համար չափսերը հետևյալն են.

Երկարություն (կողային գիծ)՝	նվազագույնը	25 մ
	առավելագույնը	42 մ
Լայնություն (դարպասային գիծ)՝	նվազագույնը	16 մ
	առավելագույնը	25 մ

Միջազգային խաղերի համար չափսերը հետևյալն են.

Երկարություն (կողային գիծ)՝	նվազագույնը	38 մ
	առավելագույնը	42 մ
Լայնություն (դարպասային գիծ)՝	նվազագույնը	20 մ
	առավելագույնը	25 մ

Տուգանային հրապարակը

6 մ երկարությամբ երկու երևակայական գծեր են տարվում դարպասասյուների արտաքին մասից՝ դարպասային գծին ուղղահայաց: Այդ գծերի վերջից դեպի մոտակա կողագիծը գծվում է 6 մ շառավղով քառորդ շրջանագիծ, որի կենտրոնը դարպասայան արտաքին մասն է: Այդ աղեղների վերևի մասերը միացվում են իրար դարպասասյուների միջև դարպասային գծին զուգահեռ՝ 3.16 մ երկարությամբ գծով: Այդ գծերով և դարպասային գծով սահմանազատված տարածքը կոչվում է տուգանային հրապարակ:

Յուրաքանչյուր տուգանային հրապարակում, դարպասասյուների միջև դարպասային գծի միջնակետից 6 մ հեռավորության վրա, նշվում է 6 մետրանոց տուգանային հարվածի նշակետը:

10 մետրանոց տուգանային հարվածի նշակետը

Դարպասասյուների միջև դարպասային գծի միջնակետից 10 մ հեռավորության վրա նշվում է 10 մետրանոց տուգանային հարվածի նշակետը:

Անկյունային աղեղ

Խաղահրապարակի սահմաններում, յուրաքանչյուր անկյունից 25 սմ շառավղով, գծանշվում է քառորդ շրջանագիծ:

Դարպասներ

Դարպաս պետք է տեղադրված լինի յուրաքանչյուր դարպասային գծի կենտրոնում:

Դարպասը բաղկացած է անկյուններից հավասար հեռավորության վրա գտնվող երկու ուղղահայաց դարպասասյուներից և վերևից դրանք միացնող հորիզոնական հեծանից: Դարպասասյուներն ու հեծանը պետք է պատրաստված լինեն փայտից, մետաղից կամ այլ թույլատրված նյութից: Դրանք ձևով պետք է լինեն քառակուսի, ուղղանկյուն, կլոր կամ էլիպսածև և չպետք է վտանգավոր լինեն խաղացողների համար:

Դարպասասյուների միջև ընկած հեռավորությունը (դարպասասյուների ներքին չափումներով) 3 մ է, իսկ հեծանի ներքևի մասի բարձրությունը գետնից՝ 2 մ:

Երկու դարպասասյուները և հեծանը ունեն միևնույն լայնությունը և խորությունը՝ 8 սմ: Ցանցերը պետք է պատրաստված լինեն կանեփից, ջուտից, նեյլոնից կամ այլ թույլատրված նյութից և պետք է ամրացված լինեն դարպասասյուներին ու հեծանին (հետևի մասում): Դրանք պետք է ամրացված լինեն բավականաչափ հուսալի և չխանգարեն դարպասապահին:

Դարպասասյուները և հեծանները գույնով պետք է տարբերվեն խաղահրապարակի գույնից:


Դարպասները պետք է ունենան կայունացնող համակարգ, որը կկանխի դրանց շուռ գալը: Շարժական դարպասներ կարող են օգտագործվել միայն, եթե դրանք համապատասխանում են այս պայմանին:

Փոխարինման գոտիները


Փոխարինման գոտիները, որոնց նպատակը նկարագրված է Կանոն 3 – ում, կողագծի վրայի այն տարածքներն են, որոնք գտնվում են թիմերի փոխարինողների նստարանների դիմաց:

- Դրանք գտնվում են տեխնիկական գոտիների դիմաց և ունեն 5 մ երկարություն: Յուրաքանչյուր ծայրում դրանք գծանշված են 8 սմ լայնությամբ և 80 սմ երկարությամբ գծով, որի 40 սմ-ը գծված է խաղահրապարակի ներսում, իսկ 40 սմ-ը՝ դրսում:
- Պետք է ազատ պահվի ժամանակաչափորդի սեղանի դիմաց գտնվող՝ միջնագծից յուրաքանչյուր ուղղությամբ 5 մ երկարությամբ ձգվող տարածքը:
- Թիմի փոխարինման գոտին գտնվում է խաղահրապարակի այն կիսադաշտում, որում տվյալ թիմը պաշտպանվում է: Խաղի կամ լրացուցիչ ժամանակի խաղակեսերին թիմերը փոխվում են փոխարինման գոտիներով:


Խաղահրապարակ




Խաղահրապարակի չափեր




Տուգանային հրապարակ



Դարպաս



Փոխարինման գոտի և տեխնիկական գոտի



Որոշում 1

Տեխնիկական գոտին պետք է համապատասխանի «Տեխնիկական Գոտի» բաժնում նշված պահանջներին:

Որակ և չափսեր

Գնդակը.

- գնդածև է
- պատրաստված է կաշվից կամ այլ հաստատված նյութից,
- ունի շրջագծի առավելագույնը 64 սմ, իսկ նվազագույնը՝ 62 սմ երկարություն,
- խաղի սկզբում ունի առավելագույնը 440 գրամ, իսկ նվազագույնը 400 գրամ կշիռ,
- ունի 0.6-0.9 մթն. ճնշում ծովի մակերևույթին (600-900 գ/քառ.սմ),
- 2 մ-ից մետելու դեպքում առաջին անդրադարձի բարձրությունը պետք է լինի առավելագույնը 65 սմ, իսկ նվազագույնը՝ 50 սմ:

Ոչ պիտանի գնդակի փոխարինումը

Եթե խաղի ընթացքում գնդակը պայթում կամ դառնում է ոչ պիտանի, ապա խաղը կանգնեցվում է.

- խաղը վերսկսվում է փոխարինված գնդակի վիճաբանական նետումով այնտեղից, որտեղ հիմնական գնդակը դարձել է ոչ պիտանի, բացառությամբ, երբ խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում, մրցավարներից մեկը փոխարինված գնդակով կատարում է վիճաբանական նետումը տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է ոչ պիտանի դարձած հիմնական գնդակի գտնվելու տեղին, խաղը կանգնեցնելու պահին:
- խաղը վերսկսվում է տվյալ հարվածի կրկնումով, եթե գնդակն առանց պատի տուգանային, 10 մ/ 6 մ-ոց հարվածից հետո, չդիպչելով մեկ այլ խաղացողի, դարպասասյանը կամ հեծանին պայթել կամ դարձել է ոչ պիտանի և մինչ այդ այլ խախտում չի կատարվել:

Եթե գնդակը պայթել կամ դարձել է ոչ պիտանի այն ժամանակ, երբ խաղի մեջ չի եղել (սկզբնահարված, նետում դարպասից, անկյունային հարված, վիճաբանական գնդակի նետում, տուգանային/ազատ հարված, 6 մ/10 մ-ոց հարված կամ կողագծից հարված), ապա.

- խաղը վերսկսվում է համաձայն Ֆուտզալ խաղի Կանոնների:

Խաղի ընթացքում գնդակը չի կարելի փոխարինել, առանց մրցավարների թույլտվության:

Տարբերանշաններ (լոգո) գնդակների վրա

Ի լրացումն Կանոն 2-ի պահանջների, ՖԻՖԱ-ի կամ կոնֆեդերացիաների հովանու ներքո անցկացվող պաշտոնական մրցաշարերի ժամանակ թույլատրվում է օգտագործել այնպիսի գնդակներ, որոնք կրում են.

- “FIFA APPROVED” տարբերանշանը (լոգո),
- “FIFA INSPECTED” տարբերանշանը (լոգո),
- “INTERNATIONAL MATCHBALL STANDARD” տարբերանշանը (լոգո):



Գնդակի վրայի այսպիսի տարբերանշանը վկայում է, որ գնդակը պաշտոնապես ստուգվել է և համապատասխանում է հատուկ տեխնիկական պահանջներին (դրանք տարբեր են յուրաքանչյուր տարբերանշանի համար), որոնք լրացնում են Կանոն 2-ում սահմանված նվազագույն պահանջները: Յուրաքանչյուր տարբերանշանով գնդակի համար՝ համապատասխան հատուկ տեխնիկական պահանջների ցանկը պետք է հաստատված լինի Միջազգային Խորհրդի կողմից: Ստուգումն իրականացնող կազմակերպությունները հաստատվում են ՖԻՖԱ-ի կողմից:

Անդամ ասոցիացիաները նույնպես կարող են պահանջել, որ իրենց առաջնությունների ժամանակ օգտագործվեն այս երեք տարբերանշաններով գնդակներից որևէ մեկը:

Գովազդ

ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիաների և անդամ ասոցիացիաների հովանու ներքո կազմակերպված հանդիպումներում չի թույլատրվում գնդակների վրա գետեղել որևէ կոմերցիոն գովազդ, բացառությամբ տվյալ մրցաշարի տարբերանշանի, կազմակերպիչ կազմակերպության անվանման և գնդակն արտադրողի հաստատված առևտրային ապրանքանիշի: Մրցման կանոնակարգը կարող է սահմանել այդ տարբերանշանների չափերն ու քանակը:

Խաղացողներ

Խաղն անցկացվում է երկու թիմերի մասնակցությամբ՝ յուրաքանչյուրում առավելագույնը հինգ խաղացողներ, որոնցից մեկը դարպասապահն է: Խաղը չի կարող սկսվել, եթե թիմերից մեկն իր կազմում ունի երեքից պակաս խաղացող:

Խաղը դադարեցվում է, եթե խաղահրապարակում թիմերից մեկի կազմում կա երեքից պակաս խաղացող:

Պաշտոնական մրցաշարեր

ՖԻՖԱ-ի, կոնֆեդերացիաների և անդամ ասոցիացիաների հովանու ներքո կազմակերպվող պաշտոնական մրցաշարերի ցանկացած խաղի ժամանակ կարելի է օգտագործել առավելագույնը ինը փոխարինող: Մրցման կանոնակարգը պետք է հստակ սահմանի արձանագրվող փոխարինողների թույլատրելի քանակը՝ առավելագույնը ինը:

Խաղի ընթացքում կարելի է կատարել անսահմանափակ փոխարինումներ:

Այլ հանդիպումներ

Ազգային հավաքականների հանդիպումների ընթացքում կարելի է օգտագործել առավելագույնը տասը փոխարինող:

Բոլոր այլ հանդիպումներում կարելի է օգտագործել ավելի շատ փոխարինողներ, եթե.

- մասնակից թիմերը նախնական համաձայնության են եկել փոխարինողների առավելագույն քանակի հարցում,
- մրցավարները տեղեկացված են այդ մասին խաղից առաջ:

Եթե մրցավարները տեղեկացված չեն այդ մասին կամ թիմերը չեն եկել համաձայնության, ապա թույլատրվում է առավելագույնը տասը փոխարինող:

Բոլոր խաղերում

Բոլոր հանդիպումների խաղասկզբից առաջ՝ սահմանված ժամկետներում, տվյալ խաղին մասնակցող բոլոր խաղացողների և փոխարինողների ազգանունները՝ անկախ նրանց ներկայությունից, պետք է ներկայացվեն մրցավարներին: Ցանկացած փոխարինող, ում անունը սահմանված ժամկետում չի ներկայացվել, չի կարող մասնակցել խաղին:

Փոխարինման ընթացակարգ

Փոխարինում կարելի է կատարել ցանկացած ժամանակ, անկախ նրանից, զնդակը խաղի մե՞ջ է, թե՞ ոչ: Փոխարինողով հիմնական խաղացողին փոխարինելիս պետք է պահպանվեն հետևյալ պայմանները.

- Բացառությամբ «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ում նշված դեպքերից, խաղացողը թողնում է խաղահրապարակը իր թիմի փոխարինման գոտուց
- Փոխարինողը խաղահրապարակ է մտնում միայն, երբ փոխարինված խաղացողը թողնում է խաղահրապարակը
- Փոխարինողը մտնում է խաղահրապարակ իր թիմի փոխարինման գոտուց
- Փոխարինումը համարվում է ավարտված, երբ փոխարինողը իր ժիլետը փոխարինված խաղացողին փոխանցելուց հետո մտնում է խաղահրապարակ իր թիմի փոխարինման գոտուց, բացառությամբ, երբ փոխարինվողը թողել է խաղահրապարակը այլ գոտուց՝ համաձայն «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ում նշված դեպքերի: Այդ դեպքում փոխարինողը պետք է փոխանցի իր ժիլետը երրորդ մրցավարին
- Այդ պահից սկսած՝ փոխարինողը դառնում է հիմնական խաղացող, իսկ խաղացողը, որին նա փոխարինել է, դառնում է փոխարինված
- Փոխարինված խաղացողը հետագայում կարող է մասնակցել խաղին
- Բոլոր փոխարինողները մրցավարի իրավասության ներքո են, անկախ նրանց խաղալու կամ չխաղալու հանգամանքից
- Եթե խաղակեսի ժամանակը երկարաձգվել է 6մ/10մ-ոց կամ առանց պատի տուգանային հարված կատարելու համար, ապա միայն պաշտպանվող թիմի դարպասապահը կարող է փոխարինվել

Դարպասապահի փոխարինում

- Ցանկացած փոխարինող առանց մրցավարին տեղեկացնելու կամ խաղադադարի սպասելու կարող է փոխարինել դարպասապահին
- Ցանկացած խաղացող կարող է տեղերով փոխվել դարպասապահի հետ
- Խաղացողը, ով իր տեղը փոխում է դարպասապահի հետ, դա պետք է կատարի խաղադադարի ժամանակ և նախապես այդ մասին պետք է տեղյակ պահի մրցավարներին
- Խաղացողը կամ փոխարինողը, ով փոխարինել է դարպասապահին պետք է կրի իր համարով դարպասապահի մարզաշապիկ:

Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե փոխարինողը մտնում է խաղահրապարակ մինչ փոխարինվողը կթողնի այն կամ փոխարինման ընթացքում փոխարինողը մտնում է խաղահրապարակ ոչ իր թիմի փոխարինման գոտուց, ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը (ոչ անմիջապես, եթե կարող են կիրառել առավելություն տալու սկզբունքը),
- մրցավարները զգուշացնում են նրան փոխարինման ընթացակարգը խախտելու համար և հրահանգում թողնել խաղահրապարակը:

Եթե մրցավարները խաղը կանգնեցրել են, ապա այն վերսկսվում է մրցակցի կողմից ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը խաղը կանգնեցնելու պահին (տե՛ս Կանոն 13 -Տուգանային/ազատ հարվածների դիրքեր): Եթե այս փոխարինողը կամ նրա թիմը կատարում է նաև այլ խախտում, ապա խաղը վերսկսվում է «Ֆուտզալ խաղի կանոնների մեկնաբանություններ և ուղեցույցներ մրցավարների համար» բաժնին համապատասխան (Կանոն 3):

Եթե փոխարինման ժամանակ փոխարինվողը թողնում է խաղահրապարակը «Ֆուտզալ խաղի կանոններ»-ում չնշված պատճառներով և ոչ իր թիմի փոխարինման գոտուց, ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը (ոչ անմիջապես, եթե կարող են կիրառել առավելություն տալու սկզբունքը),
- մրցավարները զգուշացնում են խաղացողին փոխարինման ընթացակարգը խախտելու համար:

Եթե մրցավարները խաղը կանգնեցրել են, ապա այն վերսկսվում է մրցակցի կողմից ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը խաղը կանգնեցնելու պահին (տե՛ս Կանոն 13 -Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Այս Կանոնի ցանկացած այլ խախտումների դեպքում.

- խախտում կատարած խաղացողներն զգուշացվում են,
- խաղը վերսկսվում է մրցակցի կողմից ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը խաղի կանգնեցնելու պահին (տե՛ս Կանոն 13 -Տուգանային/ազատ հարվածների դիրքեր): Չատուկ դեպքերում խաղը վերսկսվում է «Ֆուտզալ խաղի կանոնների մեկնաբանություններ և ուղեցույցներ մրցավարների համար» բաժնին համապատասխան (Կանոն 3):

Չեռացված խաղացողներ և փոխարինողներ

Խաղացողը, ով հեռացվել է մինչև սկզբնահարվածը, կարող է փոխարինվել միայն գրանցված փոխարինողներից որևէ մեկով:

Գրանցված փոխարինողը, ով հեռացվել է մինչև սկզբնահարվածը կամ խաղը սկսվելուց հետո, չի կարող փոխարինվել:

Չեռացումից հետո, փոխարինողը կարող է փոխարինել հեռացված խաղացողին և մտնել խաղահրապարակ՝ խաղային երկու ռուպեն լրանալուց հետո՝ ստանալով ժամանակաչափորդի կամ երրորդ մրցավարի թույլտվությունը (մրցավարի օգնականներ), բացառությամբ, եթե մինչ երկու ռուպեի լրանալը գոլ է խփվում: Այդ դեպքում կիրառվում են հետևյալ պայմանները.

- Եթե հինգով ընդդեմ չորսի խաղացող թիմը գոլ է խփում, ապա չորս խաղացողով թիմը կարող է լրացվել հինգերորդով
- Եթե երկու թիմերն էլ խաղում են երեք կամ չորս խաղացողներով և գոլ է խփվում, ապա թիմերի խաղացողների քանակը մնում է նույնը
- Եթե հինգով ընդդեմ երեքի կամ չորսով ընդդեմ երեքի խաղացող թիմը գոլ է խփում, ապա երեք խաղացողով թիմը կարող է ավելացվել միայն մեկ խաղացողով
- Եթե ավելի քիչ խաղացողներով խաղացող թիմը գոլ է խփում, ապա խաղը շարունակվում է առանց խաղացողների քանակի փոփոխության:

Անվտանգություն

Խաղացողը չպետք է կրի այնպիսի հանդերձանք կամ որևէ բան, որը վտանգավոր է իր կամ այլ խաղացողի համար (ներառյալ՝ ցանկացած տեսակի զարդեր):

Հիմնական հանդերձանք

Խաղացողի հիմնական պարտադիր հանդերձանքի բաղկացուցիչներն են.

- Շապիկ կամ մարզաշապիկ - եթե կրում են ներքնաշապիկ, ապա դրա թևքերը պետք է լինեն շապիկի կամ մարզաշապիկի հիմնական գույնի
- Վարտիք - եթե կրում են ներքնավարտիք, ապա այն պետք է լինի վարտիքի հիմնական գույնի: Դարպասապահին թույլատրվում է կրել երկար շալվար
- Ջանկապաններ - եթե տեսանելի կաչույն ժապավեն կամ նմանատիպ նյութ է օգտագործվում, ապա այն պետք է լինի զանկապանի տվյալ մասի գույնի
- Սրնքակալներ
- Խաղակոշիկ – քաթանե կամ փափուկ կաշվե մարզումային կամ մարմնամարզության կոշիկներ ռետինե կամ նմանատիպ նյութից ներաններով

Սրնքակալները

Պետք է.

- ամբողջապես ծածկված լինեն զանկապաններով
- պատրաստված լինեն ռետինից, պլաստիկ կամ նմանատիպ այլ հարմար նյութից
- ապահովեն պաշտպանվածության բավարար աստիճան

Գույներ

- Երկու թիմերը պետք է կրեն խաղային հանդերձանքի այնպիսի գույներ, որոնցով կտարբերվեն իրարից, ինչպես նաև մրցավարից և մրցավարի օգնականներից
- Յուրաքանչյուր դարպասապահ պետք է կրի խաղային հանդերձանքի այնպիսի գույներ, որոնցով կտարբերվի մյուս խաղացողներից, մրցավարից և մրցավարի օգնականներից

Խախտումներ և պատժամիջոցներ

Այս կանոնի ցանկացած խախտման դեպքում.

- պետք չէ խաղը կանգնեցնել

- մեղավոր խաղացողը հրահանգ է ստանում մրցավարներից՝ թողնելու խաղահրապարակը, հանդերձանքը կարգի բերելու համար, այն պահին, երբ զնդակը հերթական անգամ դուրս է գալիս խաղից, եթե մինչ այդ նա կարգի չի բերել իր հանդերձանքը
- ցանկացած խաղացող, որին մրցավարը հրահանգել է թողնել խաղահրապարակը՝ հանդերձանքը կարգի բերելու համար, չպետք է վերադառնա առանց մրցավարների կամ երրորդ մրցավարի թույլտվության
- նախքան խաղահրապարակ վերադառնալու թույլտվություն տալը, մրցավարները անձամբ կամ երրորդ մրցավարի օգնությամբ ստուգում են խաղացողի հանդերձանքը
- խաղացողին, եթե նա չի փոխարինվել, թույլատրվում է վերադառնալ խաղահրապարակ միայն, երբ զնդակը խաղի մեջ չէ կամ երրորդ մրցավարի հսկողությամբ, երբ զնդակը խաղի մեջ է:

Խաղացողը, որին մրցավարը հրահանգել է թողնել խաղադաշտը՝ այս կանոնի խախտման համար, և որը չի փոխարինվել, առանց մրցավարների կամ երրորդ մրցավարի թույլտվության խաղահրապարակ վերադառնալու դեպքում պետք է զգուշացվի:

Խաղի վերսկսում

Եթե խաղը կանգնեցվել է մրցավարների կողմից՝ զգուշացում տալու համար, ապա.

- խաղը վերսկսվում է մրցակցի կողմից ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը խաղը կանգնեցնելու պահին (տես Կանոն 13 -Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Հանդերձանքի վրայի գովազդ

Հիմնական պարտադիր հանդերձանք

Հիմնական պարտադիր հանդերձանքը չպետք է կրի որևէ քաղաքական, կրոնական, անձնական կարգախոսներ, նկարներ կամ հայտարարություններ: Այն թիմը, որի խաղացողի հիմնական պարտադիր հանդերձանքի վրա կլինի որևէ քաղաքական, կրոնական, անձնական կարգախոսներ, նկարներ կամ հայտարարություններ, կպատժվի մրցման կազմակերպչի կամ ՖԻՖԱ-ի կողմից:

Ներքնահագուստ

Խաղացողները չպետք է ցուցադրեն ներքնահագուստներ, որոնց վրա կլինեն քաղաքական, կրոնական, անձնական կարգախոսներ, նկարներ, հայտարարություններ կամ արտադրողի ապրանքանիշից բացի որևէ այլ գովազդ:

Խաղացողները կամ թիմերը, որոնք կցուցադրեն քաղաքական, կրոնական, անձնական կարգախոսներ, նկարներ, հայտարարություններ կամ, արտադրողի ապրանքանիշից բացի որևէ այլ գովազդով ներքնահագուստներ, կպատժվեն մրցաշարի կազմակերպչի կամ ՖԻՖԱ-ի կողմից:

Մրցավարների լիազորությունները

Յուրաքանչյուր խաղ վերահսկվում է մրցավարի և երկրորդ մրցավարի կողմից, որոնք ունեն լիակատար լիազորություններ՝ կիրառելու «Ֆուտզալ խաղի կանոններ»-ը այն համդիպման ընթացքում, որին նշանակված են:

Իրավունքներ և պարտականություններ

Մրցավարները.

- կիրառում են «Ֆուտզալ խաղի կանոններ»-ը
- վերահսկում են խաղը՝ համագործակցելով մրցավարի օգնականների հետ, որտեղ դա կիրառելի է
- ապահովում են, որ օգտագործվող ցանկացած գնդակ համապատասխանի Կանոն 2-ի պահանջներին
- ապահովում են, որ խաղացողների հանդերձանքը համապատասխանի Կանոն 4-ի պահանջներին
- կատարում են խաղի գրառումները
- կանգնեցնում են խաղը, եթե, իրենց կարծիքով, կատարվել է «Ֆուտզալ խաղի կանոններ»-ի ցանկացած խախտում
- կանգնեցնում են խաղը՝ ցանկացած տեսակի արտաքին միջամտության դեպքում
- կանգնեցնում են խաղը, եթե իրենց կարծիքով, խաղացողը ստացել է լուրջ վնասվածք և ապահովում նրա դուրս բերումը խաղահրապարակից: Վնասվածք ստացած խաղացողը կարող է վերադառնալ խաղահրապարակ՝ միայն խաղը վերսկսելուց հետո
- թույլատրում են շարունակել խաղը մինչ հաջորդ խաղադադարը, եթե, իրենց կարծիքով, խաղացողը ստացել է թեթև վնասվածք
- ապահովում են, որ արյունահոսող վնասվածք ունեցող ցանկացած խաղացող թողնի խաղահրապարակը: Խաղացողը կարող է վերադառնալ խաղահրապարակ՝ մրցավարներից ազդանշան ստանալուց հետո, որոնք իրենց հերթին պետք է հանդգնեն անձամբ կամ երրորդ մրցավարի օգնությամբ, որ արյունահոսությունը դադարել է
- թույլատրում են շարունակել խաղը, եթե թիմը, որի նկատմամբ խախտում է կատարվել, կշահի նման առավելությունից, և պատժում են սկզբնական խախտումը, եթե սպասված առավելություն չի հաջորդում պատժում են առավել լուրջ խախտումը, եթե խաղացողը միաժամանակ կատարել է մեկից ավելի խախտում
- պատժում են խաղացողի առավել լուրջ ոչ պատշաճ վարքագիծը , եթե դրա դրսևորումը միաժամանակ մեկից ավելի է
- կիրառում են կարգապահական պատժամիջոցներ այն խաղացողների նկատմամբ, ովքեր կատարել են զգուշացման կամ հեռացման արժանի խախտումներ: Նրանք պարտավոր չեն միջոցները կիրառել անմիջապես, բայց պետք է դա կատարեն հաջորդ խաղադադարի ժամանակ

- միջոցներ են կիրառում թիմի պաշտոնյաների նկատմամբ, ովքեր իրենց պահում են ոչ պատշաճ: Իրենց հայեցողությամբ՝ կարող են նրանց հեռացնել տեխնիկական գոտիներից և խաղահրապարակի շրջակայքից ապահովում են, որպեսզի որևէ կողմնակի անձ չհայտնվի խաղահրապարակում
- ազդարարում են խաղի վերսկսումն՝ այն կանգնեցնելուց հետո
- ցույց են տալիս այնպիսի ազդանշաններ, որոնք նկարագրված են «Մրցավարի և մրցավարի օգնականի ազդանշաններ» բաժնում
- անհրաժեշտության դեպքում դիրքավորվում են խաղահրապարակում այնպես, ինչպես նկարագրված է «Դիրքեր, երբ գնդակը խաղի մեջ է» և «Դիրքեր, երբ գնդակը խաղի մեջ չէ» ենթաբաժիններում, որոնք «Ֆուտզալ խաղի կանոնների մեկնաբանություններ և ուղեցույցներ մրցավարների համար» (Կանոն 5 - Մրցավարներ) բաժնի մասեր են
- համապատասխան մարմիններին ներկայացնում են խաղի արձանագրությունը, որը պարունակում է տեղեկություններ հանդիպումից առաջ, ընթացքում կամ հետո տեղի ունեցած ցանկացած միջադեպերի, ինչպես նաև խաղացողների և/կամ թիմերի պաշտոնյաների նկատմամբ կիրառված ցանկացած կարգապահական որոշումների մասին:

Մրցավարը.

- կատարում է նաև ժամանակաչափորդի և երրորդ մրցավարի պարտականությունները, եթե նրանք բացակայում են
- ժամանակավորապես հետաձգում կամ ընդհանրապես դադարեցնում է խաղն իր հայեցողությամբ՝ «Ֆուտզալ խաղի կանոններ»-ի ցանկացած խախտման դեպքում
- ժամանակավորապես հետաձգում կամ ընդհանրապես դադարեցնում է խաղը՝ ցանկացած տեսակի արտաքին միջամտության դեպքում

Երկրորդ մրցավարը.

- փոխարինում է մրցավարին, եթե նա վնասվածք է ստանում կամ ի վիճակի չէ շարունակել խաղը

Մրցավարների որոշումներ

Մրցավարների որոշումները, որոնք վերաբերում են խաղին առնչվող փաստերին, ներառյալ՝ գոլ խփվել⁶ է, թե^o ոչ, և հանդիպման արդյունքին, վերջնական են:

Մրցավարները կարող են որոշում փոխել միայն այն դեպքում, երբ հասկանում են, որ այն սխալ է, կամ զիտակցաբար ընդունում են մրցավարի օգնականի խորհուրդը, պայմանով, որ հանդիպումը չեն վերսկսել կամ ավարտել:

Եթե մրցավարը և երկրորդ մրցավարը խախտում են արձանագրել, բայց նրանց միջև կա անհամաձայնություն, ապա վերջնական է համարվում մրցավարի որոշումը:

Անհարկի միջամտության կամ ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում, մրցավարը կարող է ազատել երկրորդ մրցավարին կամ մրցավարի օգնականներին իրենց պարտականություններից՝ կարգավորելով նրանց փոխարինումը: Այդ մասին նա պետք է զեկուցագիր ներկայացնի համապատասխան մարմիններին:

Մրցավարների պատասխանատվություններ

Մրցավարները (կամ, կախված իրավիճակից, մրցավարի օգնականները) պատասխանատու չեն.

- խաղացողի, պաշտոնյայի կամ հանդիսատեսի ստացած ցանկացած վնասվածքի համար
- ցանկացած տեսակի սեփականությանը հասցված որևէ վնասի համար
- ցանկացած անհատի, ակումբի, կազմակերպության, ասոցիացիայի կամ մեկ այլ մարմնի ցանկացած որևէ այլ կորստի համար, որը հետևանք է կամ կարող է հետևանք հանդիսանալ՝ «Ֆուտզալ խաղի կանոններ»-ի կամ խաղի կազմակերպման, անցկացման և վերահսկման անհրաժեշտ ընթացակարգերի համաձայն՝ նրանց ընդունած ցանկացած որոշման արդյունքում:

Այսպիսի որոշումները կարող են ներառել.

- որոշում՝ թույլատրել⁶ է, թե^o ոչ խաղի անցկացումը՝ ելնելով խաղահրապարակի կամ նրա շրջակայքի վիճակից կամ եղանակային պայմաններից
- որոշում՝ ինչ-որ պատճառով խաղն ավարտելու վերաբերյալ
- որոշում՝ խաղի ժամանակ օգտագործվող պարագաների և գույքի համապատասխանության վերաբերյալ
- որոշում՝ կանգնեցնել⁶ խաղը, թե^o ոչ՝ հանդիսատեսի միջամտության կամ հանդիսատեսի համար նախատեսված գոտիներում ծագած ցանկացած խնդրի դեպքում

- որոշում՝ կանգնեցնել խաղը, թե՞ ոչ, որպեսզի վնասվածք ստացած խաղացողը բուժօգնություն ստանալու համար դուրս բերվի խաղահրապարակից
- որոշում՝ պահանջել, որ վնասվածք ստացած խաղացողը բուժօգնություն ստանալու համար դուրս բերվի խաղահրապարակից
- որոշում՝ թույլատրել, թե՞ ոչ խաղացողին կրելու որոշակի հագուստ կամ հանդերձանք,
- որոշում (իր պարտականությունների սահմաններում) թույլատրել, թե՞ ոչ ցանկացած անձի (ներառյալ՝ թիմի կամ մարզադաշտի պաշտոնյաներին, անվտանգության աշխատակիցներին, լուսանկարիչներին կամ այլ լրատվամիջոցների ներկայացուցիչներին) գտնվելու խաղահրապարակի մերձակայքում
- ցանկացած այլ որոշում, որը նրանք կարող են ընդունել համաձայն «Ֆուտզալ խաղի կանոններ»-ի կամ համապատասխան իրենց պարտականությունների, նախատեսված ՖԻՖԱ-ի, կոմֆեդերացիայի, անդամ ասոցիացիայի կամ լիգայի օրենքով կամ կանոնակարգով, որի հովանու տակ անցկացվում է խաղը:

Միջազգային խաղեր

Միջազգային խաղերում երկրորդ մրցավարը պարտադիր է:

Մրցավարի պահեստային օգնական

Այն մրցաշարերում և առաջնություններում, որտեղ մրցավարի պահեստային օգնական է նշանակված, նրա դերն ու պարտականությունները պետք է համապատասխանեն «Ֆուտզալ խաղի կանոններ»-ով սահմանված դրույթներին:

Մրցավարի օգնականների լիազորությունները

Խաղին կարող են նշանակվել երկու մրցավարի օգնականներ (երրորդ մրցավար և ժամանակաչափորդ), որոնք պետք է կատարեն իրենց պարտականությունները՝ «Ֆուտզալ խաղի կանոններ»-ին համապատասխան: Նրանք գտնվում են խաղահրապարակից դուրս, միջնագծի ուղղությամբ, փոխարինումների գոտիների կողմում: Ժամանակաչափորդը մնում է նստած իր սեղանի մոտ, իսկ երրորդ մրցավարն իր պարտականությունները կարող է կատարել նստած կամ կանգնած:

Ասոցիացիան կամ ակումբը, որի հովանու ներքո անցկացվում է խաղը՝ ժամանակաչափորդին և երրորդ մրցավարին տրամադրում է ժամանակաչափ և անհրաժեշտ գույք՝ կուտակային տուգանքները գրանցելու համար: Նրանց համար ապահովվում է ժամանակաչափորդի սեղան՝ իրենց պարտականությունները որակով կատարելու համար:

Իրավունքներ և պարտականություններ

Երրորդ մրցավարը.

- աջակցում է մրցավարներին և ժամանակաչափորդին
- կատարում է խաղին մասնակցող խաղացողների համապատասխան գրառումները
- մրցավարի պահանջի դեպքում վերահսկում է գնդակների փոխարինումը
- ստուգում է փոխարինողների հանդերձանքը՝ մինչ նրանց խաղահրապարակ մտնելը
- գրանցում է գոլ խփող խաղացողների համարները
- եթե թիմի պաշտոնյան խնդրում է մեկ թույլատրյալ ընդմիջում, այդ մասին տեղեկացնում է ժամանակաչափորդին (տես Կանոն 7 – խաղի տևողությունը)
- ժամանակաչափորդի ծայնային ազդանշանը հնչեցնելուց հետո ցույց է տալիս մեկ թույլատրյալ ընդմիջման պարտադիր ազդանշանը՝ մրցավարներին և թիմերին տեղեկացնելու համար, որ տրվել է մեկ թույլատրյալ ընդմիջում
- կատարում է մեկ թույլատրյալ ընդմիջումների գրառումները
- յուրաքանչյուր խաղակեսում գրանցում է մրցավարների կողմից արձանագրված յուրաքանչյուր թիմի կուտակային տուգանքները

- ցույց է տալիս համապատասխան պարտադիր ազդանշանը, եթե մեկ խաղակետում թիմը կատարել է հինգ կուտակային տուգանք
- ժամանակաչափորդի սեղանին տեղադրում է տեսանելի նշան՝ ցույց տալու համար, որ մեկ խաղակետում թիմը կատարել է հինգ կուտակային տուգանք
- գրանցում է զգուշացված և հեռացված խաղացողների անուններն ու համարները
- յուրաքանչյուր խաղակեսից առաջ թիմերի պաշտոնյաներին փոխանցում է մեկ րոպեանոց ընդմիջման համապատասխան փաստաթուղթը և յուրաքանչյուր խաղակեսից հետո հետ է վերցնում դա, եթե այն չի օգտագործվել



TIME-OUT TEMP MORT TIEMPO MUERTO AUSZEIT

- յուրաքանչյուր թիմի պաշտոնյաներին փոխանցում է համապատասխան փաստաթուղթը, որում նշված է, թե երբ փոխարինողը կարող է մտնել խաղահրապարակ՝ հեռացված խաղացողին փոխարինելու համար



THE SUBSTITUTE PLAYER WILL BE ABLE TO ENTER THE FIELD OF PLAY, WHEN THERE ARE - ____ MINUTE(S) AND ____ SECOND(S) ON THE CHRONOMETER LEFT TO END THE ____ PERIOD.

LE JOUEUR SUBSTITUT POURRA ENTRER DANS LE TERRAIN DE JEU QUAND LE CHRONOMETRE INDIQUERA ____ MINUTE(S) ET ____ SECONDE(S) ____ POUR FINIR LA ____ PERIODE.

EL JUGADOR SUSTITUTO PODRÁ ENTRAR EN EL TERRENO DE JUEGO CUANDO EL CRONOMETRO ESTÁ EN EL MINUTO ____ Y SEGUNDOS ____ PARA FINALIZAR EL ____ PERIODO.

DER ERSATZSPIELER KANN DAS SPIELFELD BETRETEN, WENN AUF DER ZEITMESSUNG NOCH ____ MINUTE(N) UND ____ SEKUNDE(N) FEHLEN, UM DIE ____ PERIODE ZU BEENDEN.

- մրցավարի վերահսկողությամբ՝ հսկում է հանդերձանքը կարգի բերելու նպատակով խաղահրապարակից դուրս եկած խաղացողի վերադարձը
- մրցավարի վերահսկողությամբ՝ հսկում է ցանկացած վնասվածքի պատճառով խաղահրապարակից դուրս եկած խաղացողի վերադարձը
- ազդանշան է տալիս մրցավարներին, եթե ակնհայտ սխալ է կատարվել խաղացողին զգուշացնելիս կամ հեռացնելիս կամ նրանց տեսադաշտից դուրս կատարվել է, բռնարարք: Ամեն դեպքում խաղի ցանկացած փաստի հետ կապված վերջնական որոշումները կայացնում են մրցավարները
- վերահսկում է տեխնիկական գոտում (եթե այն կա) և պահեստայիններին նստարանին գտնվող անձանց վարքագիծը: Ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում այդ մասին տեղեկացնում է մրցավարներին
- գրանցում է արտաքին միջամտության հետևանքով եղած խաղի ընդհատումները և դրանց պատճառները
- ներկայացնում է խաղի հետ կապված ցանկացած այլ տեղեկատվություն
- դիրքավորվում է խաղահրապարակում այնպես, ինչպես նկարագրված է «Դիրքեր, երբ գնդակը խաղի մեջ է» և «Դիրքեր, երբ գնդակը խաղի մեջ չէ» ենթաբաժիններում, որոնք «Ֆուտզալ խաղի կանոնների մեկնաբանություններ և ուղեցույցներ մրցավարների համար» (Կանոն 5 - Մրցավարներ) բաժնի մասեր են
- փոխարինում է երկրորդ մրցավարին, եթե մրցավարը կամ երկրորդ մրցավարը վնասվածք են ստանում կամ ի վիճակի չեն շարունակել խաղը

Ժամանակաչափորդը ապահովում է, որ խաղի տևողությունը համապատասխանի Կանոն 7-ի պահանջներին.

- միացնելով ժամանակաչափը սկզբնահարվածի ճիշտ կատարումից հետո
- անջատելով ժամանակաչափը, երբ գնդակը դուրս է գալիս խաղից
- կրկին միացնելով այն, երբ խաղը ճիշտ վերսկսվում է կողագծից հարվածով, դարպասից նետումով, անկյունային հարվածով կամ սկզբնահարվածով, տուգանային/ազատ հարվածով, 6/10 մետրանոց տուգանային հարվածով կամ վիճաբանական գնդակի նետումով
- ցուցատախտակի վրա (եթե այն կա) արձանագրում է գոլերը, կուտակային տուգանքները, խաղակեսերը
- թիմերից մեկ թուպեանոց ընդմիջման խնդրանքի վերաբերյալ երրորդ մրցավարից տեղեկություն ստանալուց հետո ազդարարում է այն՝ սուլիչով կամ ձայնային ազդանշանով (մրցավարների սուլիչից տարբեր)
- հաշվարկում է մեկ թուպեանոց ընդմիջման տևողությունը
- ազդարարում է մեկ թուպեանոց ընդմիջման ավարտը՝ սուլիչով կամ ձայնային ազդանշանով (մրցավարների սուլիչից տարբեր)
- թիմերից մեկի հինգերորդ կուտակային տուգանքի մասին երրորդ մրցավարից տեղեկություն ստանալուց հետո ազդարարում է այն՝ սուլիչով կամ ձայնային ազդանշանով (մրցավարների սուլիչից տարբեր)

- հեռացված խաղացողի դեպքում՝ հաշվարկում է երկու թուպե ժամանակահատվածը
- ազդարարում է առաջին խաղակեսի, խաղի կամ լրացուցիչ ժամանակի (եթե այն եղել է) խաղակեսերի ավարտը՝ սուլիչով կամ ծայնային ազդանշանով (մրցավարների սուլիչից տարբեր)
- դիրքավորվում է խաղահրապարակում այնպես, ինչպես նկարագրված է «Դիրքեր, երբ գնդակը խաղի մեջ է» և «Դիրքեր, երբ գնդակը խաղի մեջ չէ» ենթաբաժիններում, որոնք «Ֆուտզալ խաղի կանոնների մեկնաբանություններ և ուղեցույցներ մրցավարների համար» (Կանոն 5 - Մրցավարներ) բաժնի մասեր են
- երրորդ մրցավարի բացակայության դեպքում կատարում է նաև նրա պարտականությունները
- տրամադրում է խաղին վերաբերող ցանկացած այլ տեղեկատվություն

Միջազգային խաղեր

Միջազգային խաղերում երրորդ մրցավարի և ժամանակաչափորդի ներկայությունը պարտադիր է:

Միջազգային խաղերում օգտագործվող ժամանակաչափը և ցուցատախտակը պետք է հագեցած լինեն բոլոր անհրաժեշտ գործողություններով:

Խաղակեսեր

Խաղը բաղկացած է 20 թույլատրելի երկու հավասար խաղակեսերից, եթե չկա այլ փոխհամաձայնություն մրցավարի և երկու մասնակից թիմերի միջև: Խաղակեսերի տևողությունը փոփոխելու վերաբերյալ ցանկացած համաձայնություն պետք է ձեռք բերվի խաղը սկսելուց առաջ և պետք է համապատասխանի մրցաշարի կանոնակարգին:

Խաղակեսերի ավարտելը

Ժամանակաչափորդը ձայնային ազդանշանով ազդարարում է յուրաքանչյուր 20 թույլատրելի խաղակեսի ավարտը: Լսելով ժամանակաչափորդի ձայնային ազդանշանը, մրցավարներից մեկը սուլիչով ազդարարում է խաղի կամ խաղակեսի ավարտը, հաշվի առնելով հետևյալը.

- Եթե պետք է կատարվի կամ կրկնվի 10 մետրանոց կամ տուգանային հարված (սկսած վեցերորդ կուտակային տուգանքից), ապա տվյալ խաղակեսի ժամանակը պետք է երկարաձգվի, որպեսզի հարվածը կատարվի
- Եթե պետք է կատարվի կամ կրկնվի 6 մետրանոց հարված, ապա տվյալ խաղակեսի ժամանակը պետք է երկարաձգվի, որպեսզի հարվածը կատարվի

Եթե, մինչ ժամանակաչափորդի ձայնային ազդանշան հնչեցնելը հարված է կատարվել դարպասներից մեկի ուղղությամբ, ապա մրցավարները պետք է սպասեն հարվածի ավարտին՝ մինչ սուլիչով խաղակեսի կամ խաղի ավարտն ազդարարելը: Խաղակեսը կամ խաղն ավարտվում է, երբ.

- գնդակն ուղղակիորեն դեպի դարպասն է ընթանում և գոլ է խփվում
- գնդակը դուրս է գալիս խաղահրապարակի սահմաններից
- գնդակը դիպչում է դարպասապահին կամ պաշտպանվող թիմի այլ խաղացողի, դարպասայանը, հեծանին կամ գետնին՝ հատում է դարպասային գիծը և գոլ է խփվում
- պաշտպանվող թիմի դարպասապահը կամ այդ թիմի այլ խաղացող դիպչում է գնդակին, կամ գնդակն անդրադարձվում է դարպասայանից/հեծանից և չի հատում դարպասային գիծը
- գնդակը դիպչում է հարվածը կատարող խաղացողի թիմակցին և ուղղվում դեպի մրցակցի դարպասը, բացառությամբ, երբ կատարվել է ազատ հարված
- այդ ընթացքում չի կատարվել տուգանային/ազատ կամ 6 մետրանոց տուգանային հարվածով պատժվող խախտում կամ տուգանային/ազատ/6 մետրանոց տուգանային հարվածը չպետք է կրկնվի

Եթե այս ընթացքում թիմերից մեկը, որն ունի հինգ կուտակային տուգանք, կատարում է խախտում, որի արդյունքում նշանակվում է տուգանային կամ 6 մետրանոց տուգանային հարված, ապա խաղակեսն ավարտվում է, երբ.

- հարվածից հետո գնդակն ուղղակիորեն չի ընթանում դեպի դարպասը
- գնդակն ուղղակիորեն դեպի դարպասն է ընթանում և գոլ է խփվում
- գնդակը դուրս է գալիս խաղահրապարակի սահմաններից

- գնդակը դիպչում է մեկ կամ երկու դարպասասյուներին, հեծանին, դարպասապահին կամ պաշտպանվող թիմի այլ խաղացողի և գոլ է խփվում
- գնդակը դիպչում է մեկ կամ երկու դարպասասյուներին, հեծանին, դարպասապահին կամ պաշտպանվող թիմի այլ խաղացողի և գոլ չի խփվում
- չի կատարվում տուգանային/ազատ կամ 6 մետրանոց տուգանային հարվածով պատժվող այլ խախտում

Եթե այս ընթացքում թիմերից մեկը, որը չունի հինգ կուտակային տուգանք, կատարում է խախտում, որի արդյունքում նշանակվում է տուգանային հարված, ապա խաղակեսն ավարտվում է, երբ.

- հարվածից հետո գնդակն ուղղակիորեն չի ընթանում դեպի դարպասը
- գնդակն ուղղակիորեն դեպի դարպասն է ընթանում և գոլ է խփվում
- գնդակը դուրս է գալիս խաղահրապարակի սահմաններից
- գնդակը դիպչում է մեկ կամ երկու դարպասասյուներին, հեծանին, դարպասապահին կամ պաշտպանվող թիմի այլ խաղացողի և գոլ է խփվում
- գնդակը դիպչում է մեկ կամ երկու դարպասասյուներին, հեծանին, դարպասապահին կամ պաշտպանվող թիմի այլ խաղացողի և գոլ չի խփվում
- գնդակը դիպչում է հարվածը կատարող խաղացողի թիմակցին
- չի կատարվում տուգանային/ազատ կամ 6 մետրանոց տուգանային հարվածով պատժվող այլ խախտում

Եթե այս ընթացքում թիմերից մեկը կատարում է խախտում, որի արդյունքում նշանակվում է ազատ հարված, ապա խաղակեսն ավարտվում է, երբ.

- գնդակն ուղղակիորեն դարպասում է հայտնվում` չդիպչելով այլ խաղացողի կամ գոլ է մտնում` մեկ կամ երկու դարպասասյուներին կամ հեծանին դիպչելուց հետո: Նշված դեպքերում գոլը չի արձանագրվում
- գնդակը դուրս է գալիս խաղահրապարակի սահմաններից
- գնդակը դարպասապահին, պաշտպանվող կամ հարձակվող թիմի այլ խաղացողին (բացառությամբ հարվածողի) դիպչելուց հետո դիպչում է մեկ կամ երկու դարպասասյուներին, հեծանին և գոլ է խփվում
- գնդակը դարպասապահին, պաշտպանվող կամ հարձակվող թիմի այլ խաղացողին (բացառությամբ հարվածողի) դիպչելուց հետո դիպչում է մեկ կամ երկու դարպասասյուներին, հեծանին և գոլ չի խփվում
- չի կատարվում տուգանային/ազատ կամ 6 մետրանոց տուգանային հարվածով պատժվող այլ խախտում

Մեկ թուղթանոց խաղադադար

Թիմերը յուրաքանչյուր խաղակեսի ընթացքում ունեն մեկ թուղթանոց խաղադադարի մեկ իրավունք:

- Կիրառվում են հետևյալ պայմանները.
 - թիմի պաշտոնյաներն իրավունք ունեն մեկ թուղթանոց խաղադադարի խնդրանքով դիմել երրորդ մրցավարին, իսկ նրա բացակայության դեպքում՝ ժամանակաչափորդին, օգտագործելով տրամադրված փաստաթուղթը
 - ժամանակաչափորդը սուլիչով կամ ձայնային ազդանշանով (մրցավարների սուլիչից տարբեր) ազդարարում է մեկ թուղթանոց խաղադադար, երբ դիմող թիմը տիրում է զնդակին և զնդակը խաղի մեջ չէ
 - մեկ թուղթանոց խաղադադարի ընթացքում խաղացողները կարող են գտնվել խաղահրապարակում կամ դրա սահմաններից դուրս, սակայն ջուր խմելիս նրանք պետք է թողնեն խաղահրապարակը
 - մեկ թուղթանոց խաղադադարի ընթացքում փոխարինողները պետք է մնան խաղահրապարակի սահմաններից դուրս
 - մեկ թուղթանոց խաղադադարի ընթացքում պաշտոնյաներին չի թույլատրվում ցուցումներ տալ խաղահրապարակում
 - փոխարինումներ կարելի է կատարել մեկ թուղթանոց խաղադադարի ավարտը ազդարարող սուլիչի կամ ձայնային ազդանշանի հնչելուց հետո
 - թիմը, որը չի դիմել մեկ թուղթանոց խաղադադարի խնդրանքով առաջին խաղակեսում, երկրորդում ունի միայն մեկ խաղադադարի իրավունք
 - եթե խաղին չկա ոչ երրորդ մրցավար, ոչ ժամանակաչափորդ, ապա թիմի պաշտոնյան մեկ թուղթանոց խաղադադարի խնդրանքով կարող է դիմել մրցավարներին
 - եթե խաղացվում է լրացուցիչ ժամանակ, ապա այդ ընթացքում մեկ թուղթանոց խաղադադարներ չեն թույլատրվում

Խաղակեսերի միջև ընդմիջում

Խաղացողները խաղակեսերի միջև ունեն ընդմիջման իրավունք:

Խաղակեսերի միջև ընդմիջումը չպետք է գերազանցի 15 րոպեն:

Մրցաշարի կանոնակարգը պետք է սահմանի խաղակեսերի միջև ընդմիջման տևողությունը:

Խաղակեսերի միջև ընդմիջման տևողությունը կարող է փոփոխության ենթարկվել միայն մրցավարի համաձայնությամբ:

Չավարտված հանդիպում

Չավարտված հանդիպումը վերախաղարկվում է, եթե մրցումների կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:

Խաղը սկսելուց առաջ

Անց է կացվում վիճականետում և այն շահող թիմը որոշում է, թե որ դարպասին է հարձակվելու առաջին խաղակեսում:

Մյուս թիմը կատարում է խաղի սկզբնահարվածը:

Վիճականետումը շահող թիմը կատարում է երկրորդ խաղակեսի սկզբնահարվածը:

Երկրորդ խաղակեսում թիմերը փոխվում են կիսադաշտերով և հարձակվում են հակադիր դարպասներին:

Սկզբնահարված

Սկզբնահարվածը խաղը սկսելու կամ վերսկսելու միջոց է.

- խաղասկզբում
- դարպասի գրավումից հետո
- երկրորդ խաղակեսի սկզբում
- լրացուցիչ ժամանակի յուրաքանչյուր խաղակեսի սկզբում

Անմիջապես սկզբնահարվածից խփված գոլը չի արձանագրվում:

Ընթացակարգ

- Բոլոր խաղացողները պետք է գտնվեն սեփական կիսադաշտում
- Սկզբնահարվածը կատարող թիմի մրցակիցները գտնվում են գնդակից նվազագույնը 3 մ հեռավորության վրա՝ մինչ այն կմտնի խաղի մեջ
- Գնդակը պետք է անշարժ տեղադրված լինի խաղադաշտի կենտրոնում
- Մրցավարն ազդանշան է տալիս
- Գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն շարժվում է առաջ

Դարպասի գրավումից հետո, սկզբնահարվածով խաղը վերսկսում է մյուս թիմը, եթե խաղակեսը չի ավարտվել:

Խախտումներ և պատժամիջոցներ

Երբ գնդակը խաղի մեջ է և սկզբնահարված կատարողը կրկին դիպչում է գնդակին (բացառությամբ ձեռքերով) մինչ այն կդիպչի մեկ այլ խաղացողի, ապա.

- նշանակվում է ազատ հարված մրցակից թիմի օգտին, որն իրացվում է խախտման պահին գնդակի գտնվելու տեղից (տե՛ս Կանոն 13 - Ազատ/տուգանային հարվածների դիրքեր):

Երբ գնդակը խաղի մեջ է և սկզբնահարված կատարողը միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում՝ մինչ այն կդիպչի մեկ այլ խաղացողի, ապա.

- նշանակվում է տուգանային հարված մրցակից թիմի օգտին, որն իրացվում է խախտման պահին գնդակի գտնվելու տեղից (տե՛ս Կանոն 13 - Ազատ/տուգանային հարվածների դիրքեր) և նրա թիմը պատժվում է կուտակային տուգանքով:

Սկզբնահարվածի ընթացակարգի ցանկացած այլ խախտման դեպքում.

- սկզբնահարվածը կրկնվում է և առավելություն չի կարող կիրառվել:


«Վիճաբանական գնդակ»

Եթե մրցավարներին անհրաժեշտ է եղել ժամանակավորապես կանգնեցնել խաղը՝ «Ֆուտզալ խաղի կանոններ»-ում չնշված ցանկացած պատճառով՝ մինչ գնդակը խաղի մեջ էր, ապա այն վերսկսվում է «վիճաբանական գնդակ»-ի նետումով: Խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակ»-ի նետումով՝ նաև, երբ այն նախատեսված է «Ֆուտզալ խաղի կանոններ»-ով:

Ընթացակարգ

Մրցավարը կամ երկրորդ մրցավարը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում են այնտեղ, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին, բացառությամբ, երբ խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտոն էր խաղը կանգնեցնելիս գնդակի գտնվելու տեղին:

Խաղը վերսկսվում է, երբ գնդակը խաղահրապարակի սահմաններում դիպչում է հատակին: Եթե գնդակը հատակին դիպչելուց և խաղի մեջ մտնելուց հետո, ամնիջապես դուրս է գալիս խաղահրապարակից՝ առանց որևէ խաղացողի դիպչելու, ապա «վիճաբանական գնդակ»-ի նետումը կրկնվում է նույն տեղում:



Խախտումներ և պատժամիջոցներ

«Վիճաբանական գնդակ»-ի նետումը կրկնվում է նույն տեղում.

- եթե խաղացողը դիպչում է գնդակին՝ մինչ այն կդիպչի հատակին
- եթե գնդակը հատակին դիպչելուց հետո դուրս է գալիս խաղահրապարակից՝ առանց որևէ խաղացողի դիպչելու
- եթե կատարվել է ցանկացած այլ խախտում՝ մինչ գնդակը կդիպչի հատակին

Եթե գնդակը հատակին դիպչելուց հետո, խաղացողն անմիջապես հարվածում է դրան դարպասներից մեկի ուղղությամբ և այն ուղղակիորեն մտնում է

- մրցակցի դարպասը, ապա նշանակվում է նետում դարպասից սեփական դարպասը, ապա մրցակցի թիմի օգտին նշանակվում է անկյունային հարված

Եթե գնդակը հատակին դիպչելուց հետո, խաղացողը մեկից ավելի հպումով հարվածում է այն դարպասներից մեկի ուղղությամբ և

- գնդակը մտնում է դարպասներից մեկը, ապա գոլն արձանագրվում է

Գնդակը խաղից դուրս է

Գնդակը խաղից դուրս է, երբ.

- այն ամբողջությամբ հատել է դարպասային կամ կողային գիծը՝ հատակի վրայով կամ օդով
- խաղը կանգնեցվել է մրցավարների կողմից
- այն դիպչում է առաստաղին

Գնդակը խաղի մեջ է

Մնացած բոլոր դեպքերում գնդակը խաղի մեջ է, ներառյալ, երբ.

- այն անդրադարձվում է դարպասայունից կամ հեծանից և մնում խաղահրապարակում
- այն անդրադարձվում է մրցավարներից, երբ նրանք գտնվում են խաղահրապարակում

Փակ խաղահրապարակ

Առաստաղի նվազագույն բարձրությունը 4մ է և այն պետք է սահմանված լինի մրցման կանոնակարգով:

Եթե մինչ գնդակը խաղի մեջ է՝ այն դիպչում է առաստաղին, ապա խաղը վերսկսվում է կողային հարվածով այն թիմի մրցակցի կողմից, որը վերջինն է դիպչել գնդակին: Կողային հարվածը կատարվում է կողային գծի այն կետից, որը հատակի վրա ամենամոտն է գնդակի՝ առաստաղին դիպչելու կետին (տե՛ս Կանոն 15 – Կողագծից հարվածի դիրք):

Դարպասի գրավում

Դարպասի գրավումն արձանագրվում է, երբ գնդակն ամբողջությամբ հատում է դարպասային գիծը դարպասայունների միջև և հեծանի ներքևով, պայմանով, որ մինչ այդ գոլ խփող թիմի կողմից չի կատարվել «Ֆուտզալ Խաղի կանոններ»-ի խախտում:

Եթե հարձակվող թիմի դարպասապահն իր տուգանային հրապարակից ձեռքով միտումնավոր նետում է գնդակը կամ ձեռքով հարվածում է գնդակին և այն, առանց որևէ մեկին դիպչելու, հայտնվում է մրցակցի դարպասում, ապա գոլը չի արձանագրվում և խաղը վերսկսվում է մրցակցի թիմի կողմից՝ դարպասից նետումով:

Եթե մրցավարները գոլն արձանագրելուց հետո՝ մինչ խաղի վերսկսելը, հասկանում են, որ գոլ խփող թիմի կազմում եղել է լրացուցիչ խաղացող կամ թիմը խախտել է փոխարինման ընթացակարգը, ապա նրանք չպետք է արձանագրեն գոլը և մշանակեն ազատ հարված՝ խախտում կատարող թիմի մրցակցի օգտին, որը պետք է իրացվի տուգանային հրապարակի ցանկացած կետից: Եթե սկզբնահարվածն արդեն կատարվել է, ապա մրցավարները, համաձայն Կանոն 3-ի, պատժում են խախտում կատարած խաղացողին, բայց գոլն արձանագրվում է: Մրցավարները միջադեպի մասին զեկուցագիր են ներկայացնում համապատասխան մարմիններին: Եթե գոլը խփվել է մրցակցի թիմի կողմից, ապա մրցավարները պետք է արձանագրեն այն:

Չաղթող թիմ

Թիմը, որը խաղի ընթացքում ավելի շատ գոլ է խփում, համարվում է հաղթող: Եթե երկու թիմերը խփում են հավասար քանակությամբ գոլեր կամ գոլեր չեն խփում, ապա խաղն ավարտվում է ոչ-ոքի:

Մրցաշարի կանոնակարգ

Եթե, ըստ մրցաշարի կանոնակարգի, պետք է որոշվի հաղթող թիմ՝ մեկ խաղում կամ դաշտի տեր-հյուր խաղերի արդյունքում, ապա թույլատրելի են հաղթողին որոշելու միայն հետևյալ ընթացակարգերը.

- Մրցակցի դաշտում խփած գոլերի կանոն
- Լրացուցիչ ժամանակ
- 6 մետրանոց հարվածաշար

Նշված ընթացակարգերը նկարագրված են «Խաղի կամ դաշտի տեր-հյուր խաղերի արդյունքում հաղթողին որոշելու ընթացակարգեր» բաժնում:

Ֆուտզալում խաղից դուրս չկա:

Խախտումները և ոչ պատշաճ վարքագծի դրսևորումները, ըստ «Ֆուտզալ Խաղի կանոններ»-ի, պատժվում են հետևյալ կերպ:

Խախտումներ

Խախտումները պատժվում են տուգանային, ազատ կամ 6 մետրանոց հարվածներով:

Տուգանային հարվածով պատժվող խախտումներ

Մրցակից թիմն ստանում է տուգանային հարվածի իրավունք, եթե մրցավարների գնահատմամբ, խաղացողը անզգուշորեն (careless), անզիտակցորեն (reckless) կամ օգտագործելով չափազանց մեծ ուժ (using excessive force) կատարում է հետևյալ յոթ խախտումներից որևէ մեկը.

- Ուտքով հարվածում կամ փորձում է հարվածել մրցակցին
- Ուտք է գցում մրցակցին
- Թռնում է մրցակցի վրա
- Հարձակվում է մրցակցի վրա
- Ձեռքով հարվածում կամ փորձում է հարվածել մրցակցին
- Հրում է մրցակցին
- Սահանկումով հարձակվում է մրցակցի վրա

Մրցակից թիմը ստանում է տուգանային հարվածի իրավունք նաև, եթե խաղացողը կատարում է հետևյալ երեք խախտումներից որևէ մեկը.

- Բռնում է մրցակցին
- Թքում է մրցակցի վրա
- Ձեռքով, միտումնավոր, գնդակ է խաղում (բացառությամբ սեփական տուգանային հրապարակում գտնվող դարպասապահից)

Տուգանային հարվածն իրացվում է այն տեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Վերը նշված խախտումները կուտակային տուգանքներ են:

6 մետրանոց հարվածով պատժվող խախտումներ

6 մետրանոց հարված նշանակվում է, եթե վերը նշված տասը խախտումներից որևէ մեկը խաղացողը կատարում է սեփական տուգանային հրապարակում, անկախ գնդակի գտնվելու տեղից, պայմանով, որ այն լինի խաղի մեջ:

Ազատ հարվածով պատժվող խախտումներ

Մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված, եթե դարպասապահը կատարում է հետևյալ չորս խախտումներից որևէ մեկը.

- Սեփական կիսադաշտում չորս վայրկյանից ավելի ձեռքերով կամ ոտքերով տիրապետում է գնդակին
- Գնդակ խաղալուց հետո, սեփական կիսադաշտում կրկին դիպչում է թիմակցի միտումնավոր իրեն փոխանցած գնդակին, որին մինչ այդ չի դիպչել կամ խաղացել մրցակիցը
- Սեփական տուգանային հրապարակում ձեռքերով դիպչում է թիմակցի՝ ոտքով միտումնավոր իրեն փոխանցած գնդակին
- Սեփական տուգանային հրապարակում ձեռքերով դիպչում է գնդակին՝ թիմակցի կատարած կողագծից հարվածից անմիջապես հետո

Մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված նաև, եթե մրցավարների կարծիքով, խաղացողը.

- մրցակցի համդեպ խաղում է վտանգավոր
- խոչընդոտում է մրցակցի առաջընթացը
- խանգարում է դարպասապահին՝ գնդակը ձեռքով խաղարկելիս
- թիմակցի նկատմամբ կատարում է այն իննը խախտումներից որևէ մեկը, որի համար կնշանակվեր տուգանային հարված, երբ դա կատարվեր մրցակցի նկատմամբ
- կատարում է մինչ այս Կանոն 12-ում կամ այլ Կանոն-ում չնշված ցանկացած այլ խախտում, որի դեպքում խաղը կանգնեցվում է՝ խաղացողին զգուշացնելու կամ հեռացնելու համար:

Ազատ հարվածն իրացվում է այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Ոչ պատշաճ վարքագիծ

Ոչ պատշաճ վարքագիծը պատժվում է զգուշացումով կամ հեռացումով:

Կարգապահական պատժամիջոցներ

Դեղին քարտը կիրառվում է տեղեկացնելու համար, որ խաղացողը կամ փոխարինողը զգուշացվել է:

Կարմիր քարտը կիրառվում է տեղեկացնելու համար, որ խաղացողը կամ փոխարինողը հեռացվել է:

Միայն խաղացողին կամ փոխարինողին կարող է ցույց տրվել կարմիր կամ դեղին քարտ: Քարտ ցույց է տրվում հրապարակավ, միայն խաղահրապարակում, եթե խաղն սկսվել է:

Մնացած դեպքերում մրցավարները կիրառված կարգապահական պատժամիջոցների մասին խաղացողներին և թիմի պաշտոնյաներին տեղեկացնում են բանավոր:

Մրցավարներն իրավասու են կարգապահական պատժամիջոցներ կիրառել այն պահից սկսած, երբ մինչ խաղի սկիզբը մտնում են տարածք, որտեղ գտնվում է խաղահրապարակը՝ մինչև այնտեղից հեռանալը:

Խաղացողը, որը մրցակցի, թիմակցի, մրցավարների կամ ցանկացած այլ անձանց հանդեպ կատարում է զգուշացման կամ հեռացման արժանի խախտում՝ խաղահրապարակում կամ դրա սահմաններից դուրս, պատժվում է համաձայն կատարած խախտման բնույթի:

Զգուշացման արժանի խախտումներ

Խաղացողը զգուշացվում է, եթե կատարում է հետևյալ յոթ խախտումներից որևէ մեկը.

- Դրսևորում է ոչ սպորտային վարքագիծ
- Արտահայտում է անհամաձայնություն բառերով կամ զործողությամբ
- Սխտեմատիկ խախտում է «Ֆուտզալ խաղի կանոններ»-ը
- Ձգձգում է խաղի վերսկսումը
- Չի պահպանում սահմանված հեռավորությունը անկյունային, տուգանային/ ազատ հարվածով, կողագծից հարվածով խաղը վերսկսելիս (պաշտպանվող խաղացողներ)
- Առանց մրցավարների թույլտվության մտնում կամ վերադառնում է խաղահրապարակ կամ խախտում է փոխարինման ընթացակարգը
- Առանց մրցավարների թույլտվության, միտումնավոր, թողնում է խաղահրապարակը

Փոխարինողը զգուշացվում է, եթե կատարում է հետևյալ չորս խախտումներից որևէ մեկը.

- Դրսևորում է ոչ սպորտային վարքագիծ
- Արտահայտում է անհամաձայնություն բառերով կամ գործողությամբ
- Ձգձգում է խաղի վերսկսումը
- Ստնում է խաղահրապարակ՝ խախտելով փոխարինման ընթացակարգը

Չեռացման արժանի խախտումներ

Խաղացողը կամ փոխարինողը հեռացվում է, եթե կատարում է հետևյալ յոթ խախտումներից որևէ մեկը.

- Կանոնների լուրջ խախտում
- Բռնարարք
- Թքում է մրցակցի կամ մեկ այլ անձի վրա
- Ջրկում է մրցակից թիմին գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից՝ ձեռքով միտումնավոր գնդակ խաղալով (սա չի վերաբերում սեփական տուգանային հրապարակում գտնվող դարպասապահին)
- Դեպի դարպասը շարժվող մրցակցին զրկում է ակնհայտ գոլային հնարավորությունից՝ կատարելով տուգանային կամ 6 մետրանոց հարվածով պատժվող խախտում
- Օգտագործում է վիրավորական, նվաստացուցիչ կամ անվայել խոսքեր/ժեստեր
- Նույն խաղում ստանում է երկրորդ զգուշացումը

Փոխարինողը հեռացվում է, եթե կատարում է հետևյալ խախտումը.

- Ջրկում է մրցակցին գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից:

Խաղացողը կամ փոխարինողը՝ ով հեռացվել է, պետք է թողնի խաղահրապարակի մերձակայքը և տեխնիկական գոտին:

Հարվածների տեսակներ

Կանոնների խախտման համար նշանակված հարվածները լինում են ազատ կամ տուգանային:

Տուգանային հարված

Ազդանշան

Մրցավարներից մեկը տուգանային հարվածի ազդանշանը ցույց տալու համար պետք է մի ձեռքը պահի հորիզոնական՝ ցույց տալով կատարվելիք հարվածի ուղղությունը, իսկ մյուս ձեռքով ցույց տա հատակը, որպեսզի երրորդ մրցավարին և ժամանակաչափորդին հասկանալի լինի, որ դա կուտակային տուգանք է:

Գնդակը մտնում է դարպաս

- Եթե ոտքով կատարած տուգանային հարվածից գնդակն անմիջապես մտնում է մրցակցի դարպասը՝ գոլն արձանագրվում է
- Եթե ոտքով կատարած տուգանային հարվածից գնդակն անմիջապես մտնում է սեփական դարպասը՝ մրցակիցը ստանում է անկյունային հարվածի իրավունք

Կուտակային տուգանքներ

- Կուտակային տուգանքները՝ դրանք Կանոն 12-ում նշված տուգանային կամ 6մ հարվածներով պատժվող խախտումներն են
- Յուրաքանչյուր խաղակեսում, յուրաքանչյուր թիմի կողմից կատարված կուտակային տուգանքները նշվում են խաղի արձանագրությունում
- Մրցավարները կարող են թույլատրել շարունակել խաղը՝ կիրառելով առավելության սկզբունքը, եթե թիմը մինչ այդ չի կատարել հինգ կուտակային տուգանք և մրցակիցը չի զրկվում գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից
- Եթե մրցավարները կիրառում են առավելության սկզբունքը, ապա մոտակա խաղադաշտի նրանք օգտագործում են պարտադիր ազդանշանները՝ կուտակային տուգանքը երրորդ մրցավարին և ժամանակաչափորդին ցույց տալու համար
- Եթե խաղացվում է լրացուցիչ ժամանակ, ապա այդ ընթացքում՝ երկրորդ խաղակեսի կուտակային տուգանքները շարունակվում են կուտակվել

Ազատ հարված

Ազդանշան

Մրցավարները ազատ հարվածը ցույց են տալիս՝ մեկ ձեռքը բարձրացնելով գլխից վեր: Նրանք բարձրացրած ձեռքը պահում են այդ դիրքում՝ մինչև գնդակը հարվածից հետո կղիպչի մեկ այլ խաղացողի կամ դուրս կգա խաղից:

Գնդակը մտնում է դարպասը

Դարպասի գրավում կարող է արժանագրվել միայն, երբ մինչև դարպասը մտնելը գնդակը դիպչում է մեկ այլ խաղացողի:

- Եթե ոտքով կատարած ազատ հարվածից գնդակն անմիջապես մտնում է մրցակցի դարպասը, նշանակվում է նետում դարպասից
- Եթե ոտքով կատարած ազատ հարվածից՝ գնդակն անմիջապես մտնում է սեփական դարպասը, մրցակցի օգտին նշանակվում է անկյունային հարված

Ընթացակարգ

Ե՛վ տուգանային, և՛ ազատ հարվածներ կատարելու պահին՝ գնդակը պետք է գտնվի անշարժ վիճակում:

Տուգանային հարված՝ յուրաքանչյուր թիմի վեցերորդ կուտակային տուգանքից սկսած

- Տուգանայինը կատարող խաղացողը հարվածում է գնդակին գոլ խփելու միտումով և չի կարող գնդակը փոխանցել թիմակցին
- Տուգանային հարվածը կատարելուց հետո ոչ մի խաղացող չի կարող դիպչել գնդակին՝ մինչ այն կղիպչի մրցակից թիմի դարպասասպահին կամ կանդիդատնա որևէ մի դարպասասյունից, հեծանից կամ դուրս կգա խաղահրապարակից
- Եթե խաղացողը մրցակցի կիսադաշտում կամ իր կիսադաշտի այն տարածքում, որի սահմաններն են միջնագիծը և 10մ-ոց նշակետով անցնող, միջնագծին զուգահեռ երևակայական գիծը, կատարում է խախտում, որն իր թիմի վեցերորդ կուտակային տուգանքն է, ապա մրցակիցը տուգանայինը կատարում է 10մ-ոց նշակետից: 10մ-ոց նշակետի տեղը նշված է Կանոն 1-ում: Հարվածն իրացվում է համաձայն «Տուգանային/ազատ հարվածների դիրքեր» ենթաբաժնի:
- Եթե խաղացողն իր կիսադաշտի 10մ-ոց նշակետով անցնող երևակայական գծով և դարպասային գծով սահմանափակված տարածքում, բայց տուգանային հրապարակից դուրս խախտում է կատարում և դա իր թիմի վեցերորդ կուտակային տուգանքն է, ապա հարձակվող թիմն է որոշում հարվածը կատարել 10մ-ոց նշակետից, թե՛ խախտման տեղից
- Սկսած վեցերորդ կուտակային տուգանքից՝ յուրաքանչյուր խաղակեսին կամ լրացուցիչ ժամանակի յուրաքանչյուր խաղակեսին թույլատրվում է ավելացնել ժամանակ՝ տուգանայինը կատարելու համար


Տուգանային/ազատ հարվածի դիրք

Տուգանային հրապարակից դուրս տուգանային /ազատ հարված

- Բոլոր մրցակիցները պետք է գտնվեն գնդակից 5 մ հեռավորության վրա՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ
- Գնդակը խաղի մեջ է, երբ ոտքով հարվածից հետո այն շարժվում է
- Տուգանային/ազատ հարվածը կատարվում է այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը, կամ խախտման պահին գնդակի գտնվելու տեղից (խախտմանը համապատասխան), կամ 10 մետրանոց տուգանային հարվածի նշակետից

Տուգանային հրապարակում պաշտպանվող թիմի օգտին տուգանային /ազատ հարված

- Բոլոր մրցակիցները պետք է գտնվեն գնդակից 5 մ հեռավորության վրա՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ
- Բոլոր մրցակիցները պետք է մնան տուգանային հրապարակից դուրս՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ
- Գնդակը խաղի մեջ է, երբ ոտքով հարվածից հետո այն ուղղակիորեն դուրս է գալիս տուգանային հրապարակից
- Տուգանային հրապարակում նշանակված տուգանային/ազատ հարվածը կարելի է կատարել այդ հրապարակի ցանկացած կետից




Տուգանային հարված յուրաքանչյուր խաղակեսում` սկսած վեցերորդ կուտակային տուգանքից

- Պաշտպանվող թիմի խաղացողները չեն կարող պատ կազմել պաշտպանվելու նպատակով
- Հարվածողը պետք է հստակորեն առանձնացված լինի
- Դարպասապահը գտնվում է իր տուգանային հրապարակում` գնդակից նվազագույնը 5 մ հեռավորության վրա
- Խաղացողները գտնվում են խաղահրապարակում, բացառությամբ հարվածողի (ըստ իր ցանկության)
- Բոլոր խաղացողները` բացառությամբ հարվածողի և պաշտպանվող դարպասապահի, գտնվում են դարպասային գծին զուգահեռ գնդակի ուղղությամբ ձգվող երևակայական գծից հետև և տուգանային հրապարակից դուրս, գնդակից նվազագույնը 5 մ հեռավորության վրա: Նրանք չեն կարող խանգարել տուգանային հարվածը կատարողին: Ոչ մի խաղացող` հարվածողից բացի, չի կարող հատել երևակայական գիծը մինչ գնդակը կմտնի խաղի մեջ:

Ազատ հարված հարձակվող թիմի օգտին

- Բոլոր մրցակիցները պետք է գտնվեն գնդակից 5 մ հեռավորության վրա` մինչ գնդակը կմտնի խաղի մեջ
- Գնդակը խաղի մեջ է, երբ ոտքով հարվածից հետո այն շարժվում է
- Տուգանային հրապարակում նշանակված ազատ հարվածը կատարվում է տուգանային հրապարակի գծի այն կետից, որն ամենամոտն է խախտման տեղին



Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե տուգանային կամ ազատ հարվածի կատարման պահին մրցակիցը՝ սահմանված հեռավորությունից մոտ է գնդակին, ապա.

- հարվածը կրկնվում է և խախտում կատարող խաղացողը զգուշացվում է, բացառությամբ, եթե կիրառելի է առավելություն տալու սկզբունքը, կամ եթե կատարվել է 6 մետրանոց հարվածով պատժվող այլ խախտում: Եթե երկրորդ կատարված խախտումը պետք է պատժվի տուգանային/ազատ հարվածով, ապա մրցավարներն են որոշում՝ պատժել սկզբնական (սահմանված հեռավորության չպահպանում) , թե՞ երկրորդ խախտումը: Եթե երկրորդ կատարված խախտումը պետք է պատժվի 6 մետրանոց կամ տուգանային հարվածով, ապա խախտում կատարող թիմին գրանցվում է կուտակային տուգանք:

Եթե պաշտպանվող թիմը սեփական տուգանային հրապարակից կատարում է տուգանային/ ազատ հարված, և գնդակը հարվածից հետո ուղղակիորեն դուրս չի գալիս նշված հրապարակից, ապա.

- հարվածը կրկնվում է

Եթե տուգանային/ ազատ հարված իրացնող թիմը չի կատարում այն 4 վայրկյանի ընթացքում, ապա.

- մրցավարները մրցակից թիմի օգտին նշանակում են ազատ հարված այնտեղից, որտեղից պետք է վերսկսվեր խաղը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Սկսած վեցերորդ կուտակային տուգանքից, եթե խաղացողը հարվածն իրացնում է ոչ գոլ խփելու միտումով, ապա.

- մրցավարները մրցակից թիմի օգտին նշանակում են ազատ հարված այնտեղից, որտեղից կատարվել է հարվածը

Սկսած վեցերորդ կուտակային տուգանքից, եթե հարվածն իրացնում է նախապես որոշված խաղացողի թիմակիցը, ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը, զգուշացնում նրան՝ ոչ սպորտային վարքագծի համար և խաղը վերսկսում ազատ հարվածով պաշտպանվող թիմի օգտին այնտեղից, որտեղից կատարվել է հարվածը

Խաղացողի (ոչ դարպասապահի) կողմից կատարված տուգանային/ազատ հարված

Եթե հարված կատարողը, գնդակը խաղի մեջ մտնելուց հետո, մինչ այն կրիպչի մեկ այլ խաղացողի, կրկին դիպչում է գնդակին (բացառությամբ, ձեռքերով), ապա.

- նշանակվում է ազատ հարված մրցակցի օգտին, որը պետք է կատարվի այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե հարված կատարողը, գնդակը խաղի մեջ մտնելուց հետո, մինչ այն կրիպչի մեկ այլ խաղացողի, միտումնավոր, ձեռքով գնդակ է խաղում, ապա.

- նշանակվում է տուգանային հարված մրցակցի օգտին, որը պետք է կատարվի այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- նշանակվում է 6 մետրանոց հարված, եթե խախտումը կատարվել է հարվածողի տուգանային հրապարակում և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք

Դարպասապահի կողմից կատարված տուգանային/ազատ հարված

Եթե դարպասապահը, գնդակը խաղի մեջ մտնելուց հետո, մինչ այն կրիպչի մեկ այլ խաղացողի, կրկին դիպչում է գնդակին (բացառությամբ ձեռքերով), ապա.

- նշանակվում է ազատ հարված մրցակցի օգտին, որը պետք է կատարվի այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե դարպասապահը, գնդակը խաղի մեջ մտնելուց հետո, մինչ այն կրիպչի մեկ այլ խաղացողի, միտումնավոր ձեռքով գնդակ է խաղում, ապա.

- նշանակվում է տուգանային հարված մրցակցի օգտին, եթե խախտումը կատարվել է դարպասապահի տուգանային հրապարակից դուրս, որը պետք է կատարվի այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- նշանակվում է ազատ հարված մրցակցի օգտին, եթե խախտումը կատարվել է դարպասապահի տուգանային հրապարակում, որը պետք է կատարվի այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Սկսած վեցերորդ կուտակային տուգանքից, եթե մրցավարները տուգանային հարվածն իրացնելու ազդանշան են տալիս և մինչ գնդակը կմտնի խաղի մեջ.

հարվածն իրացնող թիմի խաղացողներից մեկը խախտում է «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ը, բացառությամբ, եթե հարվածողը չի կատարում այն 4 վայրկյանի ընթացքում, ապա.

- մրցավարները թույլատրում են կատարել հարվածը
- եթե գոլ է խփվում, ապա հարվածը կրկնվում է
- եթե գոլ չի խփվում, ապա մրցավարները կանգնեցնում են խաղը և պաշտպանվող թիմի օգտին նշանակում ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

պաշտպանվող թիմի խաղացողներից մեկը խախտում է «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ը, ապա,

- մրցավարները թույլատրում են կատարել հարվածը
- եթե գոլ է խփվում, ապա այն արձանագրվում է
- եթե գոլ չի խփվում, ապա հարվածը կրկնվում է

պաշտպանվող և հարձակվող թիմերի մեկ կամ ավելի խաղացողներ խախտում են «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ը, ապա.

- հարվածը կրկնվում է

Վեցերորդ կուտակային տուգանքից սկսած, եթե տուգանային հարվածից հետո

հարվածողը չի հարվածում գնդակը առաջ՝ գոլ խփելու միտումով, ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը և պաշտպանվող թիմի օգտին նշանակում ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

հարվածողը կրկին դիպչում է գնդակին (բացառությամբ ձեռքերով), մինչ այն կդիպչի մեկ այլ խաղացողի, ապա.

- մրցավարները պաշտպանվող թիմի օգտին նշանակում են ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

մեկ այլ խաղացող (ոչ հարվածողը) դիպչում է գնդակին (բացառությամբ ձեռքերով), մինչ այն կդիպչի պաշտպանվող թիմի դարպասապահին, կանդրադարձվի դարպասասյուներից, հեծանից կամ դուրս կգա խաղահրապարակից, ապա.

- մրցակցի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

խաղացողը, միտումնավոր, ձեռքով գնդակ է խաղում, ապա.

- մրցակցի օգտին նշանակվում է տուգանային հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- նշանակվում է 6 մետրանոց տուգանային հարված, եթե խախտումը կատարվել է պաշտպանի կողմից սեփական տուգանային հրապարակում, բացառությամբ պաշտպանվող թիմի դարպասապահի (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք

առաջ շարժվելուց հետո գնդակը դիպչում է այլ անձի, ապա.

- հարվածը կրկնվում է

դարպասապահից, դարպասասյուներից կամ հեծանից գնդակն անդրադարձվում է խաղահրապարակ և դիպչում այլ անձի, ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը
- խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ այն դիպել է այլ անձին, բացառությամբ, երբ դա կատարվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի զծի այն կետում, որն ամենամոտոն էր խաղը կանգնեցնելիս գնդակի գտնվելու տեղին

խաղի մեջ գտնվող գնդակը, որը մինչ այդ չի դիպել դարպասասյուներին, հեծանին կամ այլ խաղացողի, պայթում կամ դառնում է ոչ պիտանի, ապա.

- հարվածը կրկնվում է

6 մետրանոց հարված է նշանակվում այն թիմի դարպասին, որի խաղացողները սեփական տուգանային հրապարակում կատարում են այն տասը խախտումներից որևէ մեկը, որի համար նշանակվում է տուգանային հարված, երբ գնդակը խաղի մեջ է:

6 մետրանոց հարվածից կարող է ուղղակիորեն գոլ խփվել:

Յուրաքանչյուր խաղակեսի վերջում կան լրացուցիչ ժամանակի խաղակեսերի վերջում ժամանակ է ավելացվում` 6 մետրանոց հարվածի իրացման համար:

Գնդակի և խաղացողների դիրքեր

Գնդակը.

- պետք է գտնվի 6 մետրանոց նշակետի վրա

6 մետրանոց հարված կատարողը.

- պետք է հստակորեն առանձնացված լինի

Պաշտպանվող թիմի դարպասապահը.

- պետք է մնա իր դարպասի դարպասասյուների միջև, դարպասային գծի վրա, դեմքով դեպի հարվածողը` մինչև գնդակին ոտքով կհարվածեն

Մյուս բոլոր խաղացողները` հարվածողից բացի, պետք է գտնվեն.

- խաղահրապարակում
- տուգանային հրապարակից դուրս
- 6 մետրանոց նշակետից հետ
- 6 մետրանոց նշակետից նվազագույնը 5 մ հեռավորության վրա

Ընթացակարգ

- Երբ խաղացողները գրավում են իրենց դիրքերն այս կանոնի համաձայն, մրցավարներից մեկը ազդանշան է տալիս 6 մետրանոց հարվածը կատարելու համար
- 6 մետրանոց հարվածը կատարող խաղացողը պետք է գնդակը հարվածի առաջ
- գնդակը խաղի մեջ է, երբ դրան հարվածում են ոտքով և այն շարժվում է առաջ

Եթե 6 մետրանոց հարվածը կատարվում է խաղի հիմնական ժամանակի ընթացքում կամ 6 մետրանոց հարվածը կատարելու կամ կրկնելու համար խաղի կամ լրացուցիչ ժամանակի խաղակեսերի ավարտին ավելացված ժամանակի ընթացքում, ապա գոլը գրանցվում է, եթե գնդակը մինչ դարպասասյունների միջև և հեծանի տակով անցնելը.

- դիպչում է մեկ կամ երկու դարպասասյուններին և/կամ հեծանին և/կամ դարպասապահին

Մրցավարներն են որոշում 6 մետրանոց հարվածի ավարտը:

Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե հարվածը կատարող խաղացողը չի հարվածում գնդակն առաջ, ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը և 6 մետրանոց նշակետից պաշտպանվող թիմի օգտին նշանակում ազատ հարված (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե 6 մետրանոց հարվածը կատարում է նախապես առանձնացված խաղացողի թիմակիցը, ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը, զգուշացնում նրան` ոչ սպորտային վարքագծի համար, և 6 մետրանոց նշակետից պաշտպանվող թիմի օգտին նշանակում ազատ հարված (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Երբ մրցավարները 6 մետրանոց հարվածը կատարելու ազդանշան են տալիս, և մինչ գնդակի խաղի մեջ մտնելը` ստեղծվում է հետևյալ իրադրություններից որևէ մեկը.

հարվածը կատարողի թիմակիցը խախտում է «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ը.

- մրցավարները թույլ են տալիս հարվածը կատարել
- եթե գնդակը գոլ է մտնում, հարվածը կրկնվում է
- եթե գնդակը գոլ չի մտնում, մրցավարները կանգնեցնում են խաղը և պաշտպանվող թիմի օգտին նշանակում ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

պաշտպանվող թիմի խաղացողը խախտում է «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ը.

- մրցավարները թույլ են տալիս հարվածը կատարել
- եթե գնդակը գոլ է մտնում՝ գոլն արձանագրվում է
- եթե գնդակը գոլ չի մտնում, հարվածը կրկնվում է

պաշտպանվող և հարձակվող թիմերի մեկ կամ ավելի խաղացողներ խախտում են «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ը.

- հարվածը կրկնվում է

Եթե 6 մետրանոց հարվածը կատարելուց հետո.

հարվածողը կրկին դիպչում է գնդակին (ոչ ձեռքերով), մինչ այն կդիպչի ուրիշ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

հարվածողը միտումնավոր, ձեռքով է գնդակ խաղում՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է տուգանային հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք

գնդակն առաջ շարժվելուց հետո դիպել է օտար մարմնի (իրի), ապա.

- հարվածը կրկնվում է

գնդակն անդրադարձվում է խաղահրապարակ դարպասապահից, դարպասասյուներից կամ հեծանից, այնուհետև դիպչում այլ անձի (իրի), ապա.

- մրցավարները կանգնեցնում են խաղը
- խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ այն դիպել է այլ անձի (իրի), բացառությամբ, երբ դա կատարվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր խաղը կանգնեցնելիս գնդակի գտնվելու տեղին

խաղի մեջ գտնվող գնդակը, որը մինչ այդ չի դիպել դարպասասյուներին, հեծանին կամ այլ խաղացողի, պայթում կամ դառնում է ոչ պիտանի, ապա.

- հարվածը կրկնվում է

Կողագծից հարվածը խաղը վերսկսելու միջոց է:

Կողագծից հարվածի իրավունք է տրվում այն խաղացողի մրցակիցներին, որին գնդակը վերջինը դիպչելով, ամբողջությամբ հատել և անցել է կողագիծը գետնի վրայով / օդով կամ դիպել է դահլիճի առաստաղին:

Կողագծից հարվածով չի կարող ուղղակիորեն գոլ խփվել:

Խաղացողների դիրքեր

Մրցակիցները պետք է գտնվեն.

- խաղահրապարակում
- կողագծի այն կետից, որտեղից կատարվում է հարվածը նվազագույնը 5 մետր հեռավորության վրա

Ընթացակարգ

Կա միայն մեկ ընթացակարգ.

- կողագծից հարված

Կողագծից հարվածի դիրք

Չարվածելու պահին՝ հարվածողը.

- մի ոտքով գտնվում է կողագծի վրա կամ խաղահրապարակից դուրս՝ հատակի վրա
- ոտքով հարվածում է գնդակին, որը պետք է անշարժ տեղադրված լինի այն կետում, որտեղից գնդակը դուրս է եկել խաղահրապարակից, կամ դրանից դուրս՝ նշված կետից առավելագույնը 25 սմ հեռավորության վրա
- հարվածին պատրաստ լինելուց հետո կատարում է դա չորս վայրկյանի ընթացքում

Գնդակը խաղի մեջ է, երբ այն մտնում է խաղահրապարակ:

Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե կողագծից հարվածի ժամանակ մրցակիցը սահմանված հեռավորությունից մոտ է գտնվում, ապա.

- կողագծից հարվածը կրկնվում է նույն թիմի կողմից և խախտում կատարող խաղացողն զգուշացվում է, բացառությամբ, եթե կիրառելի է առավելություն տալու սկզբունքը կամ կողագծից հարված կատարող խաղացողի մրցակիցը կատարել է տուգանային/ազատ կամ 6 մետրանոց տուգանային հարվածով պատժվող խախտում

Եթե մրցակիցն անազնիվ կերպով ապակողմնորոշում կամ խանգարում է կողագծից հարված կատարողին, ապա.

- նա զգուշացվում է ոչ սպորտային վարքագծի համար

Կողագծից հարվածի ընթացակարգի ցանկացած այլ խախտման դեպքում.

- կողագծից հարվածի իրավունքը տրվում է մրցակից թիմին

Խաղացողի (ոչ դարպասապահի) կողմից կատարված կողագծից հարված

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո կողագծից հարված կատարողը կրկին դիպչում է գնդակին (ոչ ձեռքերով) մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Եթե կողագծից հարված կատարողը, միտումնավոր, ձեռքով է գնդակ խաղում` մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է տուգանային հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- նշանակվում է 6 մետրանոց հարված, եթե խախտումը կատարվել է կողագծից հարված կատարողի տուգանային հրապարակում և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք

Ղարպասապահի կողմից կատարված կողագծից հարված

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո ղարպասապահը կրկին դիպչում է գնդակին (ոչ ձեռքերով) մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե ղարպասապահը, միտումնավոր, ձեռքով է գնդակ խաղում` մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին խախտման տեղից նշանակվում է տուգանային հարված, եթե խախտումը կատարվել է ղարպասապահի տուգանային հրապարակից դուրս (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված, եթե խախտումը կատարվել է ղարպասապահի տուգանային հրապարակում, որը պետք է կատարվի տուգանային հրապարակի զծի այն կետում, որն ամենամոտն էր խախտման տեղին (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Դարպասից նետումը խաղը վերսկսելու միջոց է:

Նետում դարպասից նշանակվում է, երբ գնդակը՝ վերջինը դիպչելով հարձակվող թիմի խաղացողին, ամբողջությամբ հատում, անցնում է դարպասային գիծը գետնի վրայով կամ օդով և գուլ չի արձանագրվում՝ համաձայն Կանոն 10-ի:

Դարպասից նետումով չի կարող ուղղակիորեն գուլ խփվել:

Խաղացողների դիրքեր

Մրցակիցները պետք է գտնվեն.

- խաղահրապարակում, դարպասից նետում կատարող թիմի տուգանային հրապարակից դուրս՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ

Ընթացակարգ

- Դարպասից նետումը կատարվում է պաշտպանվող թիմի դարպասապահի կողմից՝ տուգանային հրապարակի ցանկացած կետից
- Պաշտպանվող թիմի դարպասապահը, դարպասից նետմանը պատրաստ լինելուց հետո, կատարում է դա 4 վայրկյանի ընթացքում
- Գնդակը խաղի մեջ է, երբ պաշտպանվող թիմի դարպասապահի նետումից հետո այն ուղղակիորեն դուրս է գալիս տուգանային հրապարակից

Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե դարպասից նետումով գնդակն ուղղակիորեն դուրս չի գալիս տուգանային հրապարակից, ապա.

- դարպասից նետումը կրկնվում է, բայց 4 վայրկյանի հաշվարկը չի գրոյացվում, այլ շարունակվում է, երբ դարպասապահը պատրաստ է լինում կրկնել այն

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո դարպասապահը կրկին դիպչում է գնդակին (ոչ ձեռքերով) մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տես Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո դարպասապահը, միտումնավոր, ձեռքով է գնդակ խաղում՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին խախտման տեղից նշանակվում է տուգանային հարված, եթե խախտումը կատարվել է դարպասապահի տուգանային հրապարակից դուրս (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված, եթե խախտումը կատարվել է դարպասապահի տուգանային հրապարակում, որը պետք է կատարվի տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր խախտման տեղին (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո դարպասապահը սեփական կիսադաշտում կրկին դիպչում է թիմակցի կողմից միտումնավոր իրեն փոխանցած գնդակին, և մինչ այդ մրցակիցը չի խաղացել կամ դիպել գնդակին, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե դարպասից նետումը չի կատարվում 4 վայրկյանի ընթացքում, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված, որը պետք է կատարվի տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր խախտման տեղին (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե դարպասից նետման պահին հարձակվող թիմի խաղացողները գտնվել են տուգանային հրապարակում, ապա.

- դարպասից նետումը կրկնվում է, եթե հարձակվող թիմի խաղացողներից որևէ մեկը դիպել է գնդակին կամ խանգարել դարպասից նետման ճիշտ կատարմանը

Այս կանոնի ցանկացած այլ խախտման դեպքում.

- դարպասից նետումը կրկնվում է: Եթե խախտումը կատարվել է դարպասից նետում կատարող թիմի կողմից, ապա 4 վայրկյանի հաշվարկը չի գրոյացվում, այլ շարունակվում է, երբ դարպասապահը պատրաստ է լինում կրկնել դարպասից նետումը

Անկյունային հարվածը խաղը վերսկսելու միջոց է:

Անկյունային հարված նշանակվում է, երբ գնդակը վերջինը դիպչելով պաշտպանվող թիմի խաղացողին, ամբողջությամբ հատում, անցնում է դարպասային գիծը գետնի վրայով կամ օդով և գոլ չի արձանագրվում՝ համաձայն Կանոն 10-ի:

Անկյունային հարվածից ուղղակիորեն կարելի է գոլ խփել, բայց միայն մրցակցի դարպասը:

Գնդակի և խաղացողների դիրքեր

Գնդակը պետք է.

- տեղադրվի այն անկյունային սեկտորի ներսում, որն ամենամոտն է գնդակի դարպասային գիծը հատելու կետին

Մրցակիցները պետք է գտնվեն.

- խաղահրապարակում, անկյունային սեկտորից նվազագույնը 5 մ հեռավորության վրա՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ

Ընթացակարգ

- Հարվածը պետք է կատարվի հարձակվող թիմի խաղացողի կողմից
- Անկյունային հարված կատարող թիմը՝ հարվածին պատրաստ լինելուց հետո, այն պետք է կատարի 4 վայրկյանի ընթացքում
- Գնդակը խաղի մեջ է, երբ նրան հարվածում են ոտքով և այն շարժվում է

Խախտումներ և պատժամիջոցներ

Եթե անկյունային հարվածի ժամանակ մրցակիցը սահմանված հեռավորությունից մոտ է գտնվում, ապա.

- անկյունային հարվածը կրկնվում է նույն թիմի կողմից և խախտում կատարող խաղացողը զգուշացվում է, բացառությամբ, եթե կիրառելի է առավելություն տալու սկզբունքը կամ պաշտպանվող թիմը կատարել է տուգանային/ազատ կամ 6 մետրանոց տուգանային հարվածով պատժվող խախտում

Եթե մրցակիցն անազնիվ կերպով ապակողմնորոշում կամ խանգարում է անկյունային հարված կատարողին, ապա.

- նա զգուշացվում է ոչ սպորտային վարքագծի համար

Եթե անկյունային հարվածը չի կատարվում 4 վայրկյանի ընթացքում, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է նետում դարպասից

Անկյունային հարվածի ընթացակարգի կամ գնդակի դիրքի ցանկացած այլ խախտման դեպքում.

- հարվածը կրկնվում է: Եթե խախտումը կատարվել է անկյունային հարվածը կատարող թիմի կողմից, ապա 4 վայրկյանի հաշվարկը չի գրոյացվում, այլ շարունակվում է, երբ հարվածողը պատրաստ է լինում կրկնել անկյունային հարվածը

Խաղացողի (ոչ դարպասապահի) կողմից կատարված անկյունային հարված

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո անկյունային հարված կատարողը կրկին դիպչում է գնդակին (ոչ ձեռքերով) մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե անկյունային հարված կատարողը, միտումնավոր, ձեռքով է գնդակ խաղում՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է տուգանային հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- նշանակվում է 6 մետրանոց հարված, եթե խախտումը կատարվել է անկյունային հարված կատարողի տուգանային հրապարակում և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք

Դարպասապահի կողմից կատարված անկյունային հարված

Եթե գնդակը խաղի մեջ մտնելուց հետո դարպասապահը կրկին դիպչում է գնդակին (ոչ ձեռքերով), մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Եթե դարպասապահը, միտումնավոր, ձեռքով է գնդակ խաղում՝ մինչ այն կդիպչի այլ խաղացողի, ապա.

- մրցակից թիմի օգտին խախտման տեղից նշանակվում է տուգանային հարված, եթե խախտումը կատարվել է դարպասապահի տուգանային հրապարակից դուրս (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) և նրա թիմին գրանցվում է կուտակային տուգանք
- մրցակից թիմի օգտին նշանակվում է ազատ հարված, եթե խախտումը կատարվել է դարպասապահի տուգանային հրապարակում, որը պետք է կատարվի տուգանային հրապարակի զծի այն կետում, որն ամենամոտն էր խախտման տեղին (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Մրցակցի դաշտում խփած գուլերը, լրացուցիչ ժամանակը և 6 մետրանոց հարվածաշարը հաղթող թիմին որոշելու երեք հաստատված միջոցներն են, եթե ըստ մրցման կանոնակարգի, խաղը ոչ-ոքի ավարտվելու դեպքում պետք է որոշվի հաղթող թիմը: Լրացուցիչ ժամանակը և 6 մետրանոց հարվածաշարը խաղի մաս չեն:

Մրցակցի դաշտում խփած գուլեր

Եթե թիմերը խաղում են դաշտի տեր – հյուր մրցակարգով և երկրորդ խաղից հետո ընդհանուր հաշիվը հավասար է, ապա մրցման կանոնակարգը կարող է նախատեսել, որ մրցակցի դաշտում հյուրընկալվողի խփած գուլերը հաշվեն կրկնակի:

Լրացուցիչ ժամանակ

Մրցման կանոնակարգը կարող է նախատեսել հետագա երկու հավասար խաղակեսերի անցկացում` յուրաքանչյուրը 3 կամ 5 րոպե տևողությամբ: Կիրառվում են Կանոն 8-ի պայմանները: Մրցման կանոնակարգը պետք է սահմանի լրացուցիչ ժամանակի երկու խաղակեսերի ճշգրիտ տևողությունը:

6 մետրանոց հարվածաշար


Մրցման կանոնակարգը կարող է նախատեսել 6 մետրանոց հարվածաշարի անցկացում համաձայն ստորև նշված ընթացակարգի:

Ընթացակարգ

- Մրցավարն ընտրում է դարպասը, որին պետք է կատարվեն հարվածները
- Մրցավարը կատարում է վիճականետում և այն հաղթող թիմի ավագն է որոշում թե՞ իր թիմը կատարելու է առաջի՞ն, թե՞ երկրորդ հարվածը
- Մրցավարը, երկրորդ մրցավարը, երրորդ մրցավարը և ժամանակաչափորդը գրանցում են կատարված հարվածները
- Ստորև նշված պայմանների համաձայն` թիմերը կատարում են երեքական հարված
- Թիմերը կատարում են հարվածները հաջորդաբար
- Եթե մինչ երկու թիմերի երեքական հարված կատարելը` թիմերից մեկն ավելի շատ գուլ է խփում, քան կարող էր խփել մյուս թիմը, նույնիսկ, եթե լրացնի իր երեք հարվածները` հարվածաշարը դադարեցվում է

- Եթե երկու թիմերը, երեքական հարվածները կատարելուց հետո, խփել են հավասար քանակությամբ գոլեր կամ ընդհանրապես գոլ չեն խփել, հարվածները շարունակվում են նույն հերթականությամբ, մինչև միևնույն քանակի հարվածներից հետո՝ թիմերից մեկը կխփի մեկ գոլ ավելի
- Բոլոր խաղացողները և փոխարինողները հարված կատարելու իրավունք ունեն
- Հարվածաշարի ընթացքում ցանկացած խաղացող կարող է փոխարինել դարպասապահին
- Յուրաքանչյուր հարված կատարվում է տարբեր խաղացողների կողմից: Հարվածի իրավունք ունեցող բոլոր խաղացողները պետք է կատարեն մեկական հարված, որից հետո միայն խաղացողը կարող է երկրորդ անգամ հարված կատարել
- Հարվածաշարի ընթացքում հարված կատարելու իրավունք ունեցող խաղացողը, ցանկացած պահի, կարող է տեղերով փոխվել դարպասապահի հետ, պայմանով, որ մրցավարները տեղեկացված լինեն այդ մասին և նա կրի համապատասխան հանդերձանք
- Հարվածաշարի ընթացքում խաղահրապարակում գտնվելու իրավունք ունեն միայն հարվածաշարին մասնակցելու իրավունք ունեցող խաղացողները, ներառյալ դարպասապահները, մրցավարները և երրորդ մրցավարը
- Երրորդ մրցավարը և հարվածաշարին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր խաղացողները, բացառությամբ հարված կատարողի և երկու դարպասապահների, պետք է գտնվեն խաղահրապարակի հակառակ կիսադաշտում
- Հարված կատարողի թիմակից դարպասապահը պետք է գտնվի փոխարինման գոտիների հակառակ կողմում՝ խաղահրապարակի 6 մետրանոց նշակետի ուղղությամբ, դրանից նվազագույնը 5 մետր հեռավորության վրա
- Եթե այլ բան նախատեսված չէ՝ հարվածաշարի ընթացքում կիրառվում են «Ֆուտզալ Խաղի Կանոններ»-ը և ՖԻՖԱ-ի Մրցավարական Բաժնի ուղեցույցները
- Եթե խաղավարտից կամ լրացուցիչ ժամանակից հետո՝ մինչև հարվածաշարի սկիզբը, թիմերից մեկի կազմում մնում է ավելի շատ խաղացող, ներառյալ փոխարինողները, քան մրցակցի կազմում, ապա նրանք քանակը պետք է պակասեցվի՝ մրցակցի խաղացողների թվին հավասարեցնելու համար: Թիմի ավազը պետք է հայտնի մրցավարին համված խաղացողների անուններն ու համարները
- Եթե թիմը պետք է պակասեցնի իր խաղացողների քանակը՝ մրցակցի խաղացողների թվին հավասարեցնելու համար, ապա կարող է հանել դարպասապահներին, որպես հարվածելու իրավունք ունեցող խաղացողներ
- Իր թիմի խաղացողների քանակը մրցակցի խաղացողների քանակին հավասարեցնելու պատճառով՝ 6 մետրանոց հարվածներ կատարելուց հանված, իր թիմի տեխնիկական գոտում գտնվող դարպասապահը՝ ցանկացած պահի կարող է փոխարինել իր թիմի դարպասապահին

- Մինչ հարվածաշարի սկիզբը, մրցավարը պետք է ապահովի, որ խաղահրապարակի հակառակ կիսադաշտում յուրաքանչյուր թիմից մնան հավասար քանակությամբ հարվածելու իրավունք ունեցող խաղացողներ




Տեխնիկական գոտին տեխնիկական անձնակազմի և փոխարինողների համար նախատեսված հատուկ տարածք է:

Տարբեր սպորտային համալիրներում տեխնիկական գոտիների չափերը և դիրքերը կարող են տարբերվել միմյանցից: Չնայած դրան՝ ընդհանուր ուղեցույցի համար արվել են հետևյալ նշումները.

- Տեխնիկական գոտին տարածվում է նստատեղերի գոտու ամեն կողմից 1 մետր հեռավորությամբ և ձգվում առաջ՝ դեպի կողագիծը, գտնվելով դրանից 75 սմ հեռավորության վրա
- Այս գոտին սահմանազատելու համար խորհուրդ է տրվում այն նշագծել
- Տեխնիկական գոտում գտնվելու իրավունք ունեցողների թույլատրվող քանակը սահմանվում է մրցման կանոնակարգով
- Համաձայն մրցման կանոնակարգի՝ տեխնիկական գոտում գտնվողները պետք է որոշվեն և գրանցվեն մինչև խաղի սկիզբը
- Տեխնիկական գոտուց միաժամանակ միայն մեկ թիմի պաշտոնյայի է թույլատրվում տալ տակտիկական ցուցումներ, ով կարող է լինել նաև կանգնած
- Մարզիչը և այլ պաշտոնյաները պետք է մնան տեխնիկական գոտու սահմաններում, բացառությամբ հատուկ իրավիճակների, օրինակ, երբ մերսողը և բժիշկը, մրցավարի թույլտվությամբ, մտնում են խաղահրապարակ՝ վնասվածք ստացած խաղացողին հետազոտելու կամ նրան խաղահրապարակից դուրս տանելու համար
- Տեխնիկական գոտում գտնվող մարզիչը և այլք պետք է ցուցաբերեն պատշաճ վարքագիծ՝ չխանգարելով խաղացողների և մրցավարների տեղաշարժերին

- Փոխարինողները և ֆիզպատրաստության մարզիչը կարող են խաղի ժամանակ նախավարժանք կատարել դրա համար նախատեսված գոտում՝ ցուցաբերելով պատշաճ վարքագիծ ու չխանգարելով խաղացողների և մրցավարների տեղաշարժերին



Մրցավարի պահեստային օգնականը.

- նշանակվում է մրցումների կանոնակարգի համաձայն և փոխարինում է ժամանակաչափորդին, եթե մրցավարներից մեկն ի վիճակի չէ շարունակել խաղը: Նա ամբողջ խաղի ընթացքում աջակցում է մրցավարներին
- մրցավարի պահանջով՝ խաղից առաջ, ընթացքում և հետո, աջակցում է նրան կատարել նախատեսված բոլոր վարչական պարտականությունները
- ներկայացնում է զեկուցագիր համապատասխան մարմիններին՝ մրցավարների տեսադաշտից դուրս տեղի ունեցած ցանկացած միջադեպերի կամ ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ: Նա նաև պետք է աջակցի մրցավարներին՝ որևէ զեկուցագիր կազմելիս
- գրանցում է բոլոր միջադեպերը, որոնք տեղի են ունեցել խաղից առաջ, ընթացքում և հետո
- իր մոտ ունենում է նաև լրացուցիչ ձեռքի ժամանակաչափ, որը կարող է օգտագործվել որևէ միջադեպի արդյունքում
- դիրք է գրավում երևացող տեղում, բայց ոչ մրցավարի օգնականների մոտ


Մրցավարները պետք է ցույց տան ստորև ներկայացված ազդանշանները՝ հիշելով, որ կան ազդանշաններ, որոնք պետք է ցույց տրվեն միայն մեկ մրցավարի կողմից և մեկ ազդանշան, որը պետք է ցույց տրվի երկու մրցավարների կողմից միաժամանակ:

Մրցավարի օգնականները պետք է ցույց տան մեկ թուփեանոց ընդմիջման և հինգերորդ կուտակային տուգանքի ազդանշանները:

Միայն մեկ մրցավարի կողմից ցույց տրվող ազդանշաններ



Սկզբնահարված/խաղի վերսկսում



Տուգանային հարված/6 կամ 10 մետրանոց հարված



Կողագծից հարված (1)



Կողագծից հարված (2)



Անկյունային հարված (1)



Անկյունային հարված (2)



Նետում դարպասից (1)



Նետում դարպասից (2)



Մեկ րոպեանոց խաղադադար




Չորս վայրկյանի հաշվարկ (1)




Չորս վայրկյանի հաշվարկ (2)



Հինգերորդ կուտակային տուգանք



Առավելություն կուտակային տուգանքից հետո



Առավելություն ոչ կուտակային տուգանքից հետո



Կուտակային տուգանք առավելություն տալու սկզբունքը կիրառելուց հետո (1)



Կուտակային տուգանք առավելություն տալու սկզբունքը կիրառելուց հետո (2)



Կուտակային տուգանք առավելություն տալու սկզբունքը կիրառելուց հետո (3)



Կուտակային տուգանք առավելություն տալու սկզբունքը կիրառելուց հետո (4)



Զգուշացում (դեղին քարտ)



Դեռացում (կարմիր քարտ)



Ազատ հարված



Խաղացողի համարը – 1



Խաղացողի համարը – 2



Խաղացողի համարը – 3



Խաղացողի համարը – 4



Խաղացողի համարը – 5



Խաղացողի համարը – 6



Խաղացողի համարը – 7



Խաղացողի համարը – 8



Խաղացողի համարը – 9



Խաղացողի համարը – 10



Խաղացողի համարը – 11



Խաղացողի համարը – 12



Խաղացողի համարը – 13



Խաղացողի համարը – 14



Խաղացողի համարը – 15



Գոլ



Գոլ սեփական դարպասը (1)



Գոլ սեփական դարպասը (2)

Խաղը վերսկսելու երկու մրցավարների կողմից
ցույց տրվող ազդանշան



Ազատ հարված

Մրցավարի օգնականների կողմից ցույց տրվող ազդանշաններ



Մեկ թուպեանոց խաղադադար



Հինգերորդ կուտակային տուգանք



**«ՖՈՒՏԶԱԼ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ»-Ի
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ
ՄՐՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Խաղահրապարակի մակերևույթ

Համաձայն մրցումների կանոնակարգի՝ հանդիպումները պետք է անցկացվեն հարթ մակերևույթների վրա:

Արհեստական խոտածածկ

ՖԻՖԱ-ի անդամ ասոցիացիաները ներկայացնող թիմերի միջև անցկացվող մրցաշարերում կամ միջազգային ակումբային մրցաշարերի խաղերում չի թույլատրվում օգտագործել արհեստական խոտածածկ:

Խաղահրապարակի գծանշումներ

Խաղահրապարակը չի թույլատրվում գծանշել ընդհատվող գծերով:

Եթե խաղացողը չթույլատրվող գծանշումներ է կատարում խաղահրապարակում, նա պետք է զգուշացվի՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Եթե մրցավարները նկատում են դա խաղի ժամանակ, նրանք պետք է կանգնեցնեն խաղը, եթե հնարավոր չէ կիրառել առավելություն տալու սկզբունքը և զգուշացնեն մեղավոր խաղացողին՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Խաղը վերսկսվում է մրցակից թիմի օգտին ազատ հարվածով, այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը՝ խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Պետք է փորձել խաղահրապարակը գծանշել միայն Կանոն 1–ով սահմանված գծերով, բայց, քանի որ սովորաբար ֆուտզալ խաղում են տարբեր մարզածների համար նախատեսված խաղահրապարակներում, թույլատրելի են ֆուտզալում օգտագործվող գծերից բացի այլ գծեր, պայմանով, որ դրանք չապակողմնորոշեն խաղացողներին և մրցավարներին:

10 մ-ոց մշակետից 5 մ հեռավորությամբ ընկած տարածքում և տուգանային հրապարակում չեն թույլատրվում գծեր կամ մշումներ, որոնք ցույց են տալիս այն հեռավորությունը, որը պետք է պահպանի պաշտպանվող դարպասապահը՝ 10 մ-ոց տուգանային հարվածի ժամանակ:

Դարպասներ

Եթե հեծանը տեղաշարժվել կամ կոտրվել է, ապա խաղը պետք է կանգնեցվի՝ մինչ այն կվերանորոգվի կամ կտեղադրվի իր դիրքում: Եթե հեծանը հնարավոր չէ վերանորոգել, ապա խաղը պետք է դադարեցվի: Գոպանի օգտագործումը որպես հեծան չի թույլատրվում: Եթե հեծանը հնարավոր է վերանորոգել, ապա խաղը պետք է վերսկսել «վիճաբանական զնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե այն կանգնեցվել է դարպասային հրապարակում: Այդ

դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական զնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է զնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Անվտանգություն

Մրցման կանոնակարգը պետք է սահմանի խաղահրապարակը սահմանազատող գծերի (կողագծեր և դարպասային գծեր) և հանդիսատեսին առանձնացնող արգելապատնեշների միջև հեռավորությունը՝ միշտ հաշվի առնելով մասնակիցների անվտանգությունը:

Գովազդ խաղահրապարակում

Խաղահրապարակի հատակին՝ գովազդ թույլատրվում է, եթե մրցման կանոնակարգը չի արգելում դա, պայմանով, որ գովազդը չապակողմնորոշի խաղացողներին կամ մրցավարներին և չխանգարի «Ֆուտզալ Խաղի Կանոններ»-ով սահմանված խաղահրապարակը սահմանազատող գծերի տեսանելիությանը:

Գովազդ դարպասային ցանցերի վրա

Դարպասային ցանցերի վրա գովազդ թույլատրվում է, եթե մրցման կանոնակարգը դա չի արգելում, պայմանով, որ գովազդը չապակողմնորոշի խաղացողներին կամ մրցավարներին:

Գովազդ տեխնիկական գոտիներում

Տեխնիկական գոտիների հատակին գովազդ թույլատրվում է, եթե մրցման կանոնակարգը դա չի արգելում, պայմանով, որ գովազդը չապակողմնորոշի նշված գոտիներում գտնվող անձանց, երրորդ մրցավարին կամ մրցավարներին:

Կոմերցիոն գովազդ խաղահրապարակի շուրջ

Ուղղահայաց գովազդները պետք է լինեն նվազագույնը.

1. Խաղահրապարակի կողագծերից 1 մ հեռավորության վրա, բացի տեխնիկական գոտուց և փոխարինման գոտիներից, որտեղ բոլոր տեսակի գովազդներն արգելվում են
2. Դարպասային գծից միևնույն հեռավորության վրա՝ ինչպիսին դարպասային ցանցի խորությունն է
3. Դարպասային ցանցից 1 մ հեռավորության վրա

Լրացուցիչ գնդակներ

Խաղի ընթացքում օգտագործելու նպատակով, խաղադաշտի շուրջը կարող են տեղադրված լինել լրացուցիչ գնդակներ, պայմանով, որ դրանք համապատասխանեն Կանոն 2-ի պահանջներին և դրանց օգտագործումը լինի մրցավարների հսկողության տակ:

Ավելորդ գնդակներ խաղահրապարակում

Եթե խաղի ժամանակ ավելորդ գնդակ է հայտնվում խաղահրապարակում, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը միայն, եթե այն խանգարում է խաղին: Խաղը պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Եթե խաղի ժամանակ ավելորդ գնդակ է հայտնվում խաղահրապարակում, բայց չի խանգարում խաղին, ապա մրցավարները պետք է հեռացնեն՝ այն առաջին հնարավորության դեպքում:

Պայթած կամ ոչ պիտանի գնդակ

Եթե գնդակը՝ դարպասասյուներից մեկին կամ հեծանին դիպչելուց հետո պայթում կամ դառնում է ոչ պիտանի և գուլ է մտնում, ապա մրցավարները պետք է արձանագրեն գուլը:

Փոխարինման ընթացակարգ

- Փոխարինում կարող է կատարվել խաղի կամ խաղադադարի ժամանակ, բացառությամբ մեկ րոպեանոց ընդմիջման
- Փոխարինված խաղացողը՝ խաղահրապարակը թողնելու համար, անհրաժեշտ չէ ստանա մրցավարների թույլտվությունը
- Մրցավարներին անհրաժեշտ չէ թույլտվություն տալ փոխարինողին՝ խաղահրապարակ մտնելու համար
- Մինչ խաղահրապարակ մտնելը, փոխարինողը պետք է սպասի, որ խաղացողը, որին նա փոխարինում է, դուրս գա խաղահրապարակից
- Փոխարինված խաղացողը խաղահրապարակից պետք է դուրս գա սեփական փոխարինման գոտուց, բացառությամբ, եթե նա մինչ այդ արդեն թողել էր խաղահրապարակը՝ մրցավարների թույլտվությամբ կամ Կանոն 3-ում/4-ում նշված որևէ պատճառով
- Որոշակի դեպքերում փոխարինումը կարող է արգելվել, օրինակ, եթե փոխարինողը չունի համապատասխան հանդերձանք
- Փոխարինողը, որը փոխարինման ընթացակարգն ավարտելու համար, իր փոխարինման գոտուց ոտք չի դրել խաղահրապարակ, չի կարող վերսկսել խաղը կողագծից, անկյունային կամ այլ հարվածով
- Փոխարինումը չի կարող կատարվել, եթե խաղացողը, ով պետք է փոխարինվի, հրաժարվում է թողնել խաղահրապարակը
- Եթե փոխարինումը կատարվել է ընդմիջմանը կամ լրացուցիչ ժամանակի խաղակեսերից առաջ, ապա փոխարինողը սեփական փոխարինման գոտուց կարող է մտնել խաղահրապարակ՝ երրորդ մրցավարին կամ նրա բացակայության դեպքում մրցավարին տեղեկացնելուց հետո

Ավելորդ անձինք խաղահրապարակում

Կողմնակի անձինք

Որևէ մեկը, ով խաղից առաջ արձանագրությունում գրանցված չէ որպես խաղացող, փոխարինող կամ թիմի պաշտոնյա՝ համարվում է կողմնակի անձ:

Եթե կողմնակի անձ է մտնում խաղահրապարակ, ապա.

- մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը (ոչ անմիջապես, եթե կողմնակի անձը չի միջամտում խաղին)
- մրցավարները պետք է հեռացնեն նրան խաղահրապարակից և դրա հարակից տարածքներից
- եթե մրցավարները կանգնեցրել են խաղը, ապա այն պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Թիմի պաշտոնյաներ

Եթե թիմի պաշտոնյա է մտնում խաղահրապարակ, ապա.

- մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը (ոչ անմիջապես, եթե թիմի պաշտոնյան չի միջամտում խաղին կամ, եթե կիրառելի է առավելություն տալու սկզբունքը)
- մրցավարները պետք է դուրս հրավիրեն նրան խաղահրապարակից: Եթե նրա վարքագիծը անընդունելի է, ապա պետք է հեռացնեն նրան խաղահրապարակից և դրա հարակից տարածքներից
- եթե մրցավարները կանգնեցրել են խաղը, ապա այն պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս

Ջեռացված խաղացողներ

Եթե հեռացված խաղացող է մտնում խաղահրապարակ, ապա.

- մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը (ոչ անմիջապես, եթե հեռացված խաղացողը չի միջամտում խաղին կամ, եթե կիրառելի է առավելություն տալու սկզբունքը)
- մրցավարները պետք է դուրս հրավիրեն նրան խաղահրապարակից և դրա հարակից տարածքներից
- եթե մրցավարները կանգնեցրել են խաղը, ապա այն պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում: Այդ դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը կատարում է տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն էր գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս

Խաղահրապարակից դուրս գտնվող խաղացող

Եթե խաղացողը, ով, մրցավարների թույլտվությամբ թողել է խաղահրապարակը՝ չհամապատասխանող հանդերձանքը կարգի բերելու, վնասվածքը բուժելու, արյունահոսությունը կանգնեցնելու, հանդերձանքի վրա արյան առկայության կամ որևէ այլ պատճառով՝ վերադառնում է խաղահրապարակ առանց մրցավարների թույլտվության, ապա մրցավարները պետք է.

- կանգնեցնեն խաղը (ոչ անմիջապես, եթե կիրառելի է առավելություն տալու սկզբունքը)
- զգուշացնեն խաղացողին՝ առանց թույլտվության խաղահրապարակ մտնելու համար
- եթե անհրաժեշտ է՝ հրահանգեն խաղացողին թողնելու խաղահրապարակը (օրինակ՝ Կանոն 4-ի խախտում)

Եթե մրցավարները կանգնեցրել են խաղը, ապա այն պետք է վերսկսվի.

- մրցակից թիմի կողմից ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը՝ խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր), եթե այդ ընթացքում այլ խախտում չի կատարվել
- համաձայն Կանոն 12-ի, եթե խաղացողը խախտել է նաև այս կանոնը

Եթե մրցավարների թույլտվությամբ խաղահրապարակից դուրս գտնվող խաղացողը, ով չի փոխարինվել, առանց մրցավարների կամ երրորդ մրցավարի թույլտվության, վերադառնում է խաղահրապարակ և հետագայում կատարում է զգուշացման արժանի այլ խախտում, ապա մրցավարները պետք է հեռացնեն նրան՝ կրկնակի զգուշացում ստանալու համար: Օրինակ՝ խաղացողը առանց մրցավարների կամ երրորդ մրցավարի թույլտվության վերադառնում է խաղահրապարակ և անգիտակցաբար ոտք է զգում մրցակցին: Եթե տվյալ խախտումը կատարվում է չափազանց մեծ ուժի կիրառումով, ապա խաղացողը պետք է միանգամից հեռացվի:

Եթե մրցավարները կանգնեցրել են խաղը, ապա այն պետք է վերսկսվի համաձայն Կանոն 12-ի:

Եթե խաղացողը պատահաբար հատել է խաղահրապարակի սահմանագծերից որևէ մեկը, ապա դա խախտում չի համարվում: Եթե խաղացողը դուրս է եկել խաղահրապարակից, որպես խաղային շարժման մաս, ապա դա խախտում չի համարվում:

Փոխարինողներ

Եթե փոխարինողը մտնում է խաղահրապարակ՝ խախտելով փոխարինման ընթացակարգը, կամ դրա հետևանքով նրա թիմը խաղում է լրացուցիչ խաղացողով, ապա մրցավարները՝ համագործակցելով մրցավարի օգնականների հետ, պետք է առաջնորդվեն հետևյալ ուղեցույցներով.

- Կանգնեցնեն խաղը (ոչ անմիջապես, եթե կիրառելի է առավելություն տալու սկզբունքը)
- Զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար, եթե նրա թիմը խաղում է լրացուցիչ խաղացողով կամ, եթե փոխարինումը սխալ է կատարվել՝ փոխարինման ընթացակարգը խախտելու համար
- Հեռացնեն նրան, եթե նա մրցակցին զրկում է գուլից կամ ակնհայտ զուխփելու հնարավորությունից: Նրա թիմի խաղացողների քանակը պետք է նվազեցվի, անկախ նրանից՝ խախտվել է փոխարինման ընթացակարգը, թե՞ նրա թիմը խաղացել է լրացուցիչ խաղացողով: Այս դեպքում, հեռացված փոխարինողից բացի, մեկ այլ խաղացող նույնպես պետք է թողնի խաղահրապարակը, որպեսզի նրա թիմը հետագայում խաղա մեկ խաղացողով պակաս: Հետագայում թիմը լրացվում է նոր խաղացողով՝ համաձայն Կանոն 3-ի «Հեռացված խաղացողներ և փոխարինողներ» ենթավերնագրի

- Փոխարինողը մոտակա խաղադադարին պետք է թողնի խաղահրապարակը (եթե մինչ այդ դա չի արել), որպեսզի կամ՝ ավարտի փոխարինման ընթացակարգը, եթե դա է եղել խախտումը, կամ՝ գնա տեխնիկական կանոնի, եթե նրա թիմը խաղացել է ավելորդ խաղացողով
- Եթե մրցավարները կիրառել են առավելություն տալու սկզբունքը, ապա նրանք պետք է անմիջապես կանգնեցնեն խաղը, երբ փոխարինողի թիմը տիրի գնդակին և մրցակից թիմի օգտին նշանակեն ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը՝ խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)
- Եթե մրցավարները առավելություն տալու սկզբունքը կիրառելուց հետո կանգնեցրել են խաղը, քանի որ մրցակից թիմը խախտել է կանոնները կամ գնդակը դուրս է եկել խաղահրապարակից, ապա նրանք փոխարինողի մրցակից թիմի օգտին պետք է նշանակեն ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը՝ խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր): Մրցավարները փոխարինողի մրցակցի նկատմամբ, ով խախտում է կատարել, անհրաժեշտության դեպքում, կիրառում են նաև համապատասխան կարգապահական պատժամիջոցներ
- Եթե մրցավարները կիրառել են առավելություն տալու սկզբունքը և փոխարինողի թիմակիցը կատարել է տուգանային կամ 6 մետրանոց հարվածով պատժվող խախտում, ապա նրանք փոխարինողի մրցակից թիմի օգտին պետք է նշանակեն տուգանային (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) կամ 6 մետրանոց հարված: Մրցավարները, անհրաժեշտության դեպքում, կարող են կիրառել նաև համապատասխան կարգապահական պատժամիջոցներ
- Եթե մրցավարները կիրառել են առավելություն տալու սկզբունքը և փոխարինողը, ով խախտել էր փոխարինման ընթացակարգը, կատարում է նաև տուգանային կամ 6 մետրանոց հարվածով պատժվող խախտում, ապա նրանք փոխարինողի մրցակից թիմի օգտին պետք է նշանակեն տուգանային (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) կամ 6 մետրանոց հարված: Մրցավարները, անհրաժեշտության դեպքում, կարող են կիրառել նաև համապատասխան կարգապահական պատժամիջոցներ
- Եթե մրցավարները կիրառել են առավելություն տալու սկզբունքը, երբ փոխարինողի թիմը խաղում էր լրացուցիչ խաղացողով և այդ խաղացողը կատարում է նաև տուգանային կամ 6 մետրանոց հարվածով պատժվող խախտում, ապա նրանք փոխարինողի մրցակից թիմի օգտին նշանակում են ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվել էր գնդակը՝ խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր): Մրցավարները, անհրաժեշտության դեպքում, կարող են կիրառել նաև համապատասխան կարգապահական պատժամիջոցներ

Եթե խաղասկզբին արձանագրությունում նշված փոխարինողը մտնում է խաղահրապարակ արձանագրությունում նշված հիմնական խաղացողի փոխարեն և մրցավարներն ու մրցավարի օգնականները տեղեկացված չեն այս փոփոխության մասին, ապա.

- մրցավարը թույլատրում է արձանագրությունում նշված փոխարինողին շարունակել խաղը
- նշված փոխարինողի նկատմամբ կարգապահական պատժամիջոց չի կիրառվում
- մրցավարը միջադեպի մասին զեկուցագիր է ներկայացնում համապատասխան մարմիններին

Եթե մինչ խաղահրապարակ մտնելը փոխարինողը կատարում է հեռացման արժանի խախտում, ապա նրա թիմի խաղացողների քանակը չի նվազեցվում և այն խաղացողը, ով դուրս էր եկել փոխարինվելու համար կամ այլ փոխարինող կարող է մտնել խաղահրապարակ:

Խաղահրապարակից դուրս գալու թույլատրվող իրավիճակներ

Բացի նորմալ փոխարինումից, խաղացողը, առանց մրցավարների թույլտվության, կարող է թողնել խաղահրապարակը նաև հետևյալ իրավիճակներում.

- Որպես խաղային շարժման մաս, պայմանով, որ անմիջապես վերադառնա խաղահրապարակ: Օրինակ՝ մրցակցի նկատմամբ խաբք կիրառելուց հետո խաղացողը դուրս է եկել խաղահրապարակից և անմիջապես վերադարձել՝ զնդակ խաղալու կամ դիրքային առավելություն ստանալու նպատակով: Այնուամենայնիվ, չի թույլատրվում թողնել խաղահրապարակը և մինչ վերադառնալն անցնել դարպասներից մեկի հետևով՝ մրցակցին ապակողմնորոշելու նպատակով: Եթե դա կատարվում է և առավելություն տալու սկզբունքը կիրառելի չէ, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը: Եթե նրանք կանգնեցրել են խաղը, ապա պետք է մրցակից թիմի օգտին նշանակեն ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը՝ խաղը կանգնեցնելիս (տես՝ Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր): Խաղացողը պետք է զգուշացվի՝ առանց մրցավարների թույլտվության խաղահրապարակից դուրս գալու համար
- Վնասվածքի պատճառով: Խաղացողը խաղահրապարակ վերադառնալու համար պետք է ստանա մրցավարների կամ երրորդ մրցավարի թույլտվությունը, եթե մինչ այդ նա չի փոխարինվել: Եթե նա ունի արյունահոսող վերք, ապա կարող է վերադառնալ խաղահրապարակ միայն արյունահոսությունը կանգնեցնելուց հետո, որը պետք է ստուգվի մրցավարների կամ երրորդ մրցավարի կողմից
- Հանդերձանքը կարգի բերելու համար: Խաղացողը խաղահրապարակ վերադառնալու համար պետք է ստանա մրցավարների կամ երրորդ մրցավարի թույլտվությունը, եթե մինչ այդ նա չի փոխարինվել: Մինչ խաղահրապարակ վերադառնալը, մրցավարները կամ երրորդ մրցավարը պետք է ստուգեն նրա հանդերձանքը:

Խաղահրապարակից դուրս գալու չթույլատրվող իրավիճակներ

Եթե խաղացողը թողնում է խաղահրապարակը առանց մրցավարների թույլտվության և «Ֆուտզալ Խաղի Կանոններ»-ով չթույլատրվող պատճառներով, ապա ժամանակաչափորդը կամ երրորդ մրցավարն այդ մասին մրցավարներին տեղեկացնելու համար հնչեցնում են ձայնային ազդանշանը, եթե առավելություն տալու սկզբունքը կիրառելի չէ: Եթե անհրաժեշտ է կանգնեցնել խաղը, ապա մրցավարները, ի վնաս խախտում կատարող խաղացողի թիմի նշանակում են ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվել է զնդակը խախտման պահին (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրքեր): Եթե կիրառվել է առավելություն տալու սկզբունքը, ապա նրանք պետք է հնչեցնեն ձայնային ազդանշանը հաջորդ խաղադադարին: Խաղացողը պետք է զգուշացվի՝ առանց մրցավարների թույլտվության խաղահրապարակից միտումնավոր դուրս գալու համար:

Խաղացողների նվազագույն քանակ

Չնայած խաղը չի կարող սկսվել, եթե թիմերից մեկի կազմում կա 3-ից պակաս խաղացող, այնուամենայնիվ, խաղը շարունակելու համար պահանջվող խաղացողների նվազագույն քանակը՝ ներառյալ խաղացողները և փոխարինողները, թողնվում է անդամ ասոցիացիաների հայեցողությանը:

Խաղը չի կարող շարունակվել, եթե թիմերից մեկի կազմում կա 3-ից պակաս խաղացող:

Եթե թիմն ունի 3-ից պակաս խաղացող, որովհետև մեկ կամ մի քանի խաղացողներ միտումնավոր թողել են խաղահրապարակը, ապա մրցավարները պարտավոր չեն կանգնեցնել խաղը և կարող են կիրառել առավելություն տալու սկզբունքը: Նման դեպքերում մրցավարները չպետք է թույլատրեն զնդակը խաղից դուրս գալուց հետո՝ խաղը վերսկսել, եթե թիմն իր կազմում չունի նվազագույնը 3 խաղացող:

Վնասվածք ստացած խաղացողներ

Եթե կան վնասվածք ստացած խաղացողներ, ապա մրցավարները պետք է հետևեն հետևյալ ընթացակարգերին.

- Թույլատրեն շարունակել խաղը՝ մինչ մոտակա խաղադադարը, եթե, իրենց կարծիքով, խաղացողը ստացել է թեթև վնասվածք
- Խաղը կանգնեցնեն, եթե, իրենց կարծիքով, խաղացողը ստացել է լուրջ վնասվածք
- Վնասվածք ստացած խաղացողին հարցնելուց հետո՝ մրցավարները կարող են թույլ տալ մեկ կամ առավելագույնը երկու բժշկի մտնելու խաղահրապարակ՝ վնասվածքը զննելու և խաղահրապարակից խաղացողի արագ ու անվտանգ դուրս բերումն ապահովելու համար
- Պատգարակակիրները պատգարակով պետք է մտնեն խաղահրապարակ միայն մրցավարների կողմից տրված ազդանշանից հետո, բժիշկների հետ միաժամանակ, որպեսզի արագացնեն խաղահրապարակից խաղացողի դուրսբերումը
- Մրցավարները պետք է ապահովեն խաղահրապարակից վնասվածք ստացած խաղացողի անվտանգ դուրսբերումը,
- Չի թույլատրվում խաղացողին բուժօգնություն ցույց տալ խաղահրապարակում, բացառությամբ, եթե դա պահանջում է վնասվածքի լրջությունը
- Արյունահոսող վերքով ցանկացած խաղացող պետք է թողնի խաղահրապարակը և նա չի կարող վերադառնալ՝ մինչև մրցավարները չհամոզվեն, որ արյունահոսությունը կանգնեցվել է (երրորդ մրցավարը կարող է դա ստուգել, բայց մրցավարները պետք է նրան թույլատրեն մտնել խաղահրապարակ, եթե նա չի փոխարինվել): Խաղացողին չի թույլատրվում կրել արյունոտ համազգեստ
- Այն պահից, երբ մրցավարները թույլատրում են բժիշկներին մտնել խաղահրապարակ, խաղացողը պետք է թողնի խաղահրապարակը՝ պատգարակով կամ ինքնուրույն: Եթե խաղացողը չի համաձայնվում, նա պետք է զգուշացվի՝ խաղի վերսկսումը ձգձգելու համար: Խաղը չի վերսկսվում, մինչ նշված խաղացողը դուրս չի գալիս խաղահրապարակից
- Վնասվածք ստացած խաղացողը կարող է դուրս գալ խաղահրապարակից, նաև փոխարինման գոտուց, այլ տարածքով: Նա կարող է դա կատարել խաղահրապարակի ցանկացած սահմանագծից
- Վնասվածք ստացած խաղացողը կարող է փոխարինվել, բայց փոխարինողը պետք է մտնի խաղահրապարակ փոխարինման գոտուց, վնասվածք ստացած խաղացողի՝ խաղահրապարակից դուրս գալուց հետո
- Եթե վնասվածք ստացած խաղացողը չի փոխարինվել, ապա նա կարող է վերադառնալ խաղահրապարակ միայն՝ խաղի վերսկսումից հետո
- Եթե վնասվածք ստացած խաղացողը չի փոխարինվել և գնդակը խաղի մեջ է, ապա նա կարող է վերադառնալ խաղահրապարակ՝ միայն կողագծից: Երբ գնդակը խաղի մեջ չէ, նա կարող է վերադառնալ խաղահրապարակ՝ ցանկացած սահմանագծից (դարպասային գիծ և կողագիծ)

- Միայն մրցավարները կարող են թույլատրել վնասվածք ստացած խաղացողին, որը չի փոխարինվել, վերադառնալ խաղահրապարակ՝ անկախ նրանից, գնդակը խաղի մեջ է՞, թե՞ ոչ: Նրան չի թույլատրվում վերադառնալ խաղահրապարակ, եթե գնդակը խաղի մեջ է և խաղն ընթանում է այն տարածքում, որտեղ նա գտնվում է
- Մրցավարները կարող են թույլատրել վնասվածք ստացած խաղացողին վերադառնալ խաղահրապարակ, եթե երրորդ մրցավարը հավաստում է, որ խաղացողը պատրաստ է
- Եթե խաղը կանգնեցվել է այլ պատճառով, կամ, եթե խաղացողի ստացած վնասվածքը «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ի խախտման արդյունք չէ, ապա մրցավարները պետք է խաղը վերսկսեն «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը՝ տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս
- Եթե մրցավարները որոշել են քարտ ցույց տալ վնասվածք ստացած խաղացողին, որը պետք է թողնի խաղահրապարակը՝ բուժօգնություն ստանալու համար, ապա նրանք դա պետք է անեն՝ նախքան խաղացողի խաղահրապարակից դուրս գալը
- Մրցավարները քարտ ցույց չեն տալիս վնասվածք ստացած խաղացողին, որը բուժօգնություն է ստանում, բայց դա կատարում են դրանից հետո՝ մինչ խաղի վերսկսումը: Եթե խաղացողը պետք է թողնի խաղահրապարակը պատգարակով, ապա նրանք քարտը ցույց են տալիս մինչ խաղացողը կթողնի խաղահրապարակը
- Երրորդ մրցավարն օգնում է մրցավարներին և խաղահրապարակ մտնելու թույլտվություն է տալիս վնասվածք ստացած խաղացողներին կամ այն փոխարինողներին, որոնք պետք է փոխարինեն վնասվածք ստացած խաղացողներին

Բացառություններ այս ընթացակարգում կարող են արվել, երբ.

- վնասվածք է ստացել դարպասապահը
- բախվել են դարպասապահն ու ցանկացած այլ խաղացող և անհապաղ օգնության կարիք ունեն
- բախվել են նույն թիմի խաղացողներ և անհապաղ օգնության կարիք ունեն
- լուրջ վնասվածք է տեղի ունեցել, օրինակ՝ լեզվի կուլ գնալ, ուղեղի ցնցում, ոտքի կամ ձեռքի կտրվածք և այլն

Ձուվացնող հեղուկներ

Մրցավարները թույլատրում են խաղացողներին օգտագործել զուվացնող հեղուկներ մեկ թուպեանոց խաղաղաղարների կամ խաղի դաղարների ժամանակ, բայց միայն խաղահրապարակից դուրս, որպեսզի այն չթրջվի: Չի թույլատրվում հեղուկով լի տարաներ նետել խաղահրապարակ:

Չեռացված խաղացողներ

- Եթե խաղացողը խախտում էր կատարել և հեռացվում է՝ կարմիր քարտով կամ երկրորդ զգուշացումով, սակայն մինչ այդ կիրառվել էր առավելություն տալու սկզբունքը, որի ընթացքում նրա թիմը գոլ էր ընդունել, ապա այդ թիմի խաղացողների քանակը չի նվազեցվում, քանի որ խախտումը կատարվել էր մինչև գոլը
- Եթե խաղացողը հեռացման արժանի խախտում է կատարել խաղամիջյան ընդմիջման ընթացքում կամ լրացուցիչ ժամանակի խաղակեսերից առաջ, ապա նրա թիմը սկսում է հաջորդ խաղակեսը կամ լրացուցիչ ժամանակի տվյալ խաղակեսը մեկ խաղացողով պակաս:

Հիմնական հանդերձանք

Գույներ.

- Եթե երկու դարպասապահների խաղաշապիկները նույն գույնի են և չունեն այլ խաղաշապիկ փոխելու համար, ապա մրցավարը թույլատրում է սկսել խաղը

Եթե խաղացողը, պատահաբար, խաղակոշիկը կորցնելուց հետո, անմիջապես գնդակ է խաղում և գոլ խփում, ապա դա խախտում չէ և գոլն արձանագրվում է, քանի-որ նա պատահաբար է կորցրել խաղակոշիկը:

Այլ հանդերձանք

Բացի հիմնական հանդերձանքից, խաղացողները կարող են կրել այլ հանդերձանք, եթե այն նպատակաուղված է նրանց պաշտպանել ֆիզիկապես և անվտանգ է իրենց և մյուս խաղացողների համար:

Մրցավարները պետք է ստուգեն հագուստի և հանդերձանքի բոլոր պարագաները, որպեսզի ապահովեն դրանց անվտանգ լինելը:

Փափուկ, թեթև, ճկուն նյութերից պատրաստված ժամանակակից պաշտպանիչ հանդերձանքները, ինչպիսիք են գլխարկները, դիմակները, արմունկի կամ ծնկի պաշտպանիչները, չեն դիտվում վտանգավոր, հետևաբար՝ թույլատրվում են:

Եթե խաղացողները կրում են գլուխը ծածկող պարագաներ, ապա դրանք պետք է.

- լինեն սև կամ մարգաշապիկի հիմնական գույնի (պայմանով, որ նույն թիմի խաղացողները մոտ այն լինի նույն գույնի)
- համապատասխանեն խաղացողի պրոֆեսիոնալ հանդերձանքի պահանջներին
- ամրացված չլինեն մարգաշապիկին
- չառաջացնեն վտանգ այն կրողի կամ այլ խաղացողի համար (օր. բացվող/փակվող մեխանիզմ պարանոցի շուրջ)
- չունենան մակերեսից դուրս եկած (ցցված) ցանկացած մաս(եր)

Թույլատրվում է կրել սպորտային ակնոցներ, եթե դրանք խաղացողների համար վտանգ չեն առաջացնում:

Եթե հագուստի կամ հանդերձանքի պարագան, որը խաղից առաջ ստուգվել էր և դիտվել՝ անվտանգ, դառնում է վտանգավոր կամ խաղի ժամանակ օգտագործվում է վտանգավոր ձևով, ապա դրա հետագա օգտագործումը պետք է արգելվի:

Խաղացողների և/կամ տեխնիկական անձնակազմի միջև արգելվում է օգտագործել էլեկտրոնային կապ:

Ձարդեղեն

Ձարդեղենի բոլոր պարագաները (վզնոցներ, մատանիներ, թևնոցներ, ականջօղեր, կաշվե ու ռետինե զարդեր և այլն) խստիվ արգելվում են ու խաղասկզբից առաջ պետք է հանվեն խաղացողների և փոխարինողների կողմից: Ձարդեղենը ծածկելու համար չի թույլատրվում օգտագործել կաշուն ժապավեն:

Մրցավարներին և մրցավարի օգնականներին նույնպես արգելվում է կրել զարդեղեն (բացառությամբ մրցավարի, ում՝ ժամանակաչափորդի բացակայության դեպքում, թույլատրվում է կրել ժամացույց կամ մնամատիպ սարք խաղի ժամանակը հսկելու համար):

Խաղացողների համարակալում

Մրցումների կանոնակարգը պետք է սահմանի խաղացողների համարակալումը, որը սովորաբար լինում է 1-15, որտեղ 1-ին համարը դարպասապահինն է:

Կազմակերպիչները պետք է հիշեն, որ մրցավարների համար անհնար է ազդանշանով ցույց տալ 15-ից մեծ համարները:

Յուրաքանչյուր խաղացողի համարը պետք է տեսանելի լինի նրա մեջքին և գույնով տարբերվի մարզաշապիկի հիմնական գույնից: Մրցումների կանոնակարգը պետք է որոշի համարների չափսերը և արդյո՞ք այդ չափսերը պարտադիր են, ինչպես նաև խաղացողների հիմնական համդերձանքի այլ պարագաների վրայի համարների չափսերը:

Կարգապահական պատժամիջոցներ

Մինչև խաղի սկսվելը մրցավարները պետք է ստուգեն խաղացողներին և փոխարինողներին, որպեսզի ապահովեն, որ նրանք չկրեն չթույլատրվող հագուստ կամ զարդեղեն: Մինչ փոխարինողները կմտնեն խաղահրապարակ՝ երրորդ մրցավարը պետք է կատարի նրանց կրկնակի տեսողական ստուգում: Եթե հայտնաբերվում է խաղացող, որը խաղի ընթացքում կրում է չթույլատրվող հագուստ կամ զարդեղեն, ապա մրցավարները պետք է.

- տեղեկացնեն խաղացողին, որ տվյալ իրը պետք է հանվի
- հաջորդ խաղադադարին հրահանգեն խաղացողին դուրս գալ խաղահրապարակից, եթե նա ի վիճակի չէ հանել իրը կամ չի ցանկանում դա կատարել
- զգուշացնեն խաղացողին, եթե նա համառորեն հրաժարվում է կատարել հրահանգը կամ հրահանգվելուց հետո՝ հայտնաբերվում է, որ շարունակում է կրել այն

Եթե խաղը կանգնեցվել է խաղացողին զգուշացնելու համար, ապա մրցակցի օգտին պետք է նշանակվի ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Իրավունքներ ու պարտականություններ

Ֆուտզալը մրցակցային սպորտաձև է և մրցավարները պետք է հասկանան, որ խաղացողների միջև ֆիզիկական հպումը նորմալ է ու հանդիսանում է խաղի ընդունելի մաս: Այնուամենայնիվ, եթե խաղացողները չեն հարգում «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ը և սպորտային սկզբունքները, այն է՝ «արդար խաղ»-ը, ապա մրցավարները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ, որպեսզի դրանք հարգվեն:

Մրցավարները պետք է ժամանակավորապես կանգնեցնեն խաղը, եթե, իրենց կարծիքով, լուսավորությունը բավարար չէ՝ ցանկացած տեսակի խափանման պատճառով: Եթե խափանումը հնարավոր չէ վերացնել, ապա մրցավարը պետք է ավարտի խաղը:

Եթե հանդիսատեսի կողմից նետված իրը դիպչում է խաղի պաշտոնյայի, խաղացողի կամ թիմի պաշտոնյայի, ապա մրցավարը՝ ելնելով միջադեպի լրջությունից, կարող է թույլատրել շարունակել, ժամանակավորապես կանգնեցնել կամ ավարտել խաղը: Բոլոր դեպքերում, միջադեպ(եր)ի մասին նա պետք է զեկուցի համապատասխան մարմիններին:

Մրցավարներն իրավասու են խաղացողներին զգուշացնել կամ հեռացնել խաղամիջյան ընդմիջման ընթացքում, խաղի ավարտից հետո, ինչպես նաև լրացուցիչ ժամանակի և 6 մետրանոց հարվածաշարի ընթացքում, քանի որ նշված ժամանակահատվածներում կարգապահական պատժամիջոցների կիրառումը նրանց իրավասության տակ է:

Եթե մրցավարներից մեկը, որևէ պատճառով, ժամանակավորապես ի վիճակի չէ կատարել իր պարտականությունները, ապա, մինչև մոտակա խաղադադարը՝ խաղը կարող է շարունակվել մյուս մրցավարի և մրցավարի օգնականների հսկողությամբ:

Առավելություն

Կանոնների խախտման դեպքում մրցավարները կարող են կիրառել առավելություն տալու սկզբունքը, եթե «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ն ակնհայտորեն չեն արգելում դա: Օրինակ՝ թույլատրվում է կիրառել առավելություն տալու սկզբունքը, երբ դարպասապահը ցանկանում է արագ կատարել դարպասից նետում, բայց տուգանային հրապարակում գտնվում են հարձակվող թիմի խաղացողներ, սակայն դա չի թույլատրվում, եթե սխալ է կատարվել կողագծից հարվածը:

Առավելություն չի թույլատրվում կիրառել՝ 4-վայրկյան կանոնի խախտումների դեպքում, բացառությամբ, եթե խախտումը կատարում է սեփական կիսադաշտում գտնվող դարպասապահը, ով, տիրապետելով խաղի մեջ գտնվող գնդակին՝ կորցնում է այն: Մնացած դեպքերում (տուգանային/ազատ, անկյունային, կողագծից հարվածներ և դարպասից նետումներ) մրցավարները չեն կարող կիրառել առավելություն տալու սկզբունքը:

Մրցավարներն առավելություն տալու սկզբունքը կիրառելիս կամ խաղը կանգնեցնելու որոշում կայացնելիս պետք է հաշվի առնեն հետևյալ պայմանները.

- Խախտման լրջությունը: Եթե խախտումը նախատեսում է հեռացում, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղն ու հեռացնեն խաղացողին բացառությամբ, երբ կա գուլ խփելու ակնհայտ հնարավորություն
- Խախտման տեղը: Ինչքան մոտ է մրցակցի դարպասին, այնքան դա կարող է արդյունավետ լինել
- Ամնիջապես հեռանկարային գրոհի հնարավորությունները
- Խախտումը չպետք է լինի թիմի վեցերորդ կամ ավելի կուտակային տուգանքը, բացառությամբ, երբ կա գուլ խփելու ակնհայտ հնարավորություն
- Խաղի մթնոլորտը

Եթե պետք է պատժվի սկզբնական խախտումը՝ որոշումը պետք է կայացվի մի քանի վայրկյանի ընթացքում, բայց դա հնարավոր չի լինի անել, եթե նախօրոք ցուց չի տրվել համապատասխան ազդանշանը կամ հաջորդել է խաղի նոր դրվագը:

Եթե խախտումը նախատեսում է զգուշացում, ապա այն պետք է տրվի մոտակա խաղադադարին: Ամեն դեպքում, խորհուրդ է տրվում, որ մրցավարներն ամնիջապես կանգնեցնեն խաղն ու զգուշացնեն խաղացողին (բացառությամբ, եթե կա ակնհայտ առավելություն): Եթե զգուշացումը չի տրվել մոտակա խաղադադարին, ապա այն չի կարող ցույց տրվել ավելի ուշ:

Եթե խախտում է կատարվել և խաղը պետք է վերսկսվի ազատ հարվածով, ապա մրցավարները պետք է կիրառեն առավելություն տալու սկզբունքը, որպեսզի ապահովեն խաղի սահուն ընթացքը, պայմանով, որ դա չի բերի որևէ պատասխան գործողության կամ չվնասի այն թիմին, որի նկատմամբ կատարվել է խախտումը:

Միաժամանակ կատարվում է մեկից ավելի խախտում

- Նույն թիմի 2 կամ ավելի խաղացողների կողմից կատարված խախտումներ.
 - Մրցավարները պետք է պատժեն առավել լուրջ խախտումը
 - Խաղը պետք է վերսկսվի առավել լուրջ խախտմանը համապատասխան
 - Ի լրումն վերը նշված 2 կետերի, մրցավարները, կատարած խախտումներից համապատասխան, կարող են զգուշացնել կամ հեռացնել խաղացողներին կամ նրանց նկատմամբ չկիրառել կարգապահական պատժամիջոցներ
 - Եթե կատարված խախտումները պատժվում են տուգանային հարվածով, ապա մրցավարները պետք է հրահանգեն արձանագրել համապատասխան կուտակային տուգանքները
- Տարբեր թիմերի խաղացողների կողմից կատարված խախտումներ.
 - մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, քանի որ չեն կարող կիրառել առավելություն տալու սկզբունքը և այն վերսկսել «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին խաղը կանգնեցնելիս
 - Ի լրումն վերը նշված կետի՝ մրցավարները, կատարած խախտմանը համապատասխան, կարող են զգուշացնել կամ հեռացնել խաղացողներին կամ նրանց նկատմամբ չկիրառել կարգապահական պատժամիջոցներ
 - Եթե կատարված խախտումները պատժվում են տուգանային հարվածով, ապա մրցավարները պետք է հրահանգեն արձանագրել համապատասխան կուտակային տուգանքները

Արտաքին միջամտություն

Մրցավարները կանգնեցնում են խաղը, եթե հանդիսատեսը սուլիչով սուլում է և, իրենց կարծիքով, այդ գործողությունը խանգարում է խաղին, օրինակ՝ խաղացողը ձեռքով վերցնում է գնդակը: Եթե խաղը կանգնեցվել է, ապա այն պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարները կատարում են «վիճաբանական գնդակ»-ի նետումը տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Չորս վայրկյանի հաշվարկը, երբ գնդակը խաղի մեջ է

Ամեն անգամ, երբ գնդակը խաղի մեջ է, և թիմի դարպասապահը սեփական կիսադաշտում տիրապետում է գնդակին, մրցավարներից մեկը պետք է տեսանելիորեն կատարի չորս վայրկյանի հաշվարկը:

Խաղի վերսկսում

Մրցավարները հատկապես պետք է ապահովեն, որ խաղի վերսկսումները կատարվեն արագ և խաղադադարից հետո (տուգանային/ազատ, անկյունային, կողագծից հարված և դարպասից նետում) թույլատրեն թիմին՝ տակտիկական նկատառումներով, խաղն արագ վերսկսել: Այս դեպքերում սուլիչ չի կիրառվում և սկսվում է չորս վայրկյանի հաշվարկը: Այն դեպքերում, երբ չի կատարվում չորս վայրկյանի հաշվարկ (սկզբնահարված կամ 6 մետրանոց հարված) պետք է զգուշացվեն այն խաղացողը կամ խաղացողները, որոնք ձգձգում են խաղի վերսկսումը:

Խաղի վերսկսումն արագացնելու նպատակով՝ գնդակներ վերադարձնող անձանց թույլատրվում է դիրքավորվել խաղահրապարակի շրջակայքում:

Դիրք, երբ գնդակը խաղի մեջ է

Խորհուրդներ.

- Խաղը պետք է ընթանա մրցավարի և երկրորդ մրցավարի միջև
- Մրցավարները պետք է օգտագործեն լայն անկյունագծային մեթոդիկական
- Մրցավարի համար հեշտանում է իր տեսադաշտում պահել խաղը և մյուս մրցավարին, երբ նա դիրքավորվում է կողագծից դուրս և դրան զուգահեռ
- Խաղային դրվագին ավելի մոտ գտնվող մրցավարը պետք է լինի մյուս մրցավարի տեսադաշտում
- Մրցավարներից մեկը պետք է բավականին մոտ գտնվի խաղային դրվագին, բայց չխանգարի խաղին
- Մրցավարները մտնում են խաղահրապարակ միայն ավելի լավ տեսադաշտ ստանալու համար
- «Ի՞նչ է անհրաժեշտ տեսնել»՝ դա ոչ միշտ է այն, ինչ կատարվում է գնդակի մոտակայքում: Մրցավարները պետք է մաս ուշադրություն դարձնեն.
 - գնդակին չտիրող խաղացողների ագրեսիվ բախումներից
 - հնարավոր խախտումներին այն տուգանային հրապարակում, որտեղ, ենթադրաբար, կընթանա խաղը
 - գնդակի փոխանցելուց հետո կատարվող խախտումներին

Խաղի ընթացքում հիմնական դիրքեր

Մրցավարներից մեկը պետք է գտնվի պաշտպանվող թիմի նախավերջին խաղացողի հետ նույն գծի վրա, կամ գնդակի հետ, եթե այն ավելի մոտ է դարպասային գծին, քան պաշտպանվող թիմի նախավերջին խաղացողը: Խաղի ընթացքում մրցավարները պետք է միշտ լինեն դեմքով դեպի խաղահրապարակը:

Գնդակը նետող դարպասապահ

Մրցավարներից մեկը պետք է դիրքավորվի տուգանային հրապարակի վերին սահմանագծի ուղղությամբ և վերահսկի, որ տուգանային հրապարակից դուրս դարպասապահը ձեռքով չդիպչի գնդակին, միաժամանակ կատարի նաև չորս վայրկյանի հաշվարկը:

Դարպասապահի կողմից գնդակը խաղարկելուն պես, մրցավարը պետք է հարմար դիրք գրավի՝ խաղը վերահսկելու համար:

«Գոլ է - գոլ չէ» իրավիճակներ

Երբ գոլ է խփվել և որոշման հետ կապված որևէ կասկած չկա, մրցավարն ու երկրորդ մրցավարն անմիջապես պետք է հաստատեն տեսողական կապ, այնուհետև ժամանակաչափորդի սեղանին ավելի մոտ գտնվող մրցավարը պետք է մոտենա ժամանակաչափորդին և երրորդ մրցավարին՝ գոլ խփող խաղացողի համարը պարտադիր ազդանշանով ցույց տալու համար:

Երբ գոլ է խփվել, բայց թվում է, թե գնդակը խաղի մեջ է, ավելի մոտ գտնվող մրցավարը պետք է սուլիչ տա՝ մյուս մրցավարի ուշադրությունը գրավելու համար, այնուհետև ժամանակաչափորդի սեղանին ավելի մոտ գտնվող մրցավարը պետք է մոտենա ժամանակաչափորդին և երրորդ մրցավարին՝ գոլ խփող խաղացողի համարը պարտադիր ազդանշանով ցույց տալու համար:


Դիրքեր, երբ գնդակը խաղի մեջ չէ

Լավագույն դիրքն այն է, որտեղից մրցավարը կարող է կայացնել ճիշտ որոշում: Դիրքերի մասին բոլոր խորհուրդները հիմնված են հավանականությունների վրա և պետք է կիրառվեն, հաշվի առնելով նաև մրցող թիմերի, խաղացողների մասին հատուկ տեղեկությունները և խաղի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները:

Յետևյալ գծանկարներում ներկայացված են հիմնական դիրքերը, որոնց մի մասը մրցավարների համար պարտադիր են, իսկ մնացածները՝ խորհուրդ են տրվում: «Տարածք» հասկացողությունը գծանկարներում ընդգծված է: Դա, յուրաքանչյուր գծանկարում մրցավարի գործողություններն արդյունավետ դարձնելու համար խորհուրդ տրվող ամենացանկալի դիրքն է: Տարածքը կարող է լինել ավելի մեծ, ավելի փոքր կամ ունենա այլ ձև՝ կախված հանգամանքներից:

1. Դիրք - սկզբնահարված (պարտադիր)

Խաղասկզբին փոխարինումների գոտիների մոտ, կողագծին գտնվող մրցավարը պետք է դիրք գրավի միջնագծի ուղղությամբ և հսկի, որ սկզբնահարվածը կատարվի ընդունված ընթացակարգին համապատասխան: Երկրորդ մրցավարը պետք է դիրք գրավի պաշտպանվող թիմի նախավերջին խաղացողի ուղղությամբ:




2. Դիրք - նետում դարպասից

1. Մրցավարներից մեկը առաջնահերթ պետք է ստուգի, արդյո՞ք գնդակը գտնվում է տուգանային հրապարակում.
 - Եթե գնդակը տուգանային հրապարակում չէ, ապա մրցավարը կարող է սկսել չորս վայրկյանի հաշվարկը, եթե, իր կարծիքով, դարպասապահը պատրաստ չի նետով կատարել դարպասից նետումը՝ ուշացնում է դա կամ, տակտիկական նկատառումներով, ձգձգում և չի վերցնում գնդակը գետնից:

2. Երբ գնդակը տուգանային հրապարակում է, մրցավարներից մեկը պետք է դիրք գրավի տուգանային հրապարակի վերին սահմանագծի ուղղությամբ, որպեսզի համոզվի, որ գնդակը դուրս է գալիս տուգանային հրապարակից (գնդակը խաղի մեջ է մտնում), և մրցակիցները գտնվում են տուգանային հրապարակից դուրս: Միաժամանակ նա պետք է սկսի չորս վայրկյանի հաշվարկը կամ շարունակի այն, եթե հաշվարկը սկսել էր նախորդ կետին համապատասխան:

3. Հետո մրցավարը, որը վերահսկում էր դարպասից նետումը, պետք է հարմար դիրք գրավի՝ խաղի հետագա ընթացքը հսկելու համար, որն՝ ամեն դեպքում առաջնայինն է:



3. Ղիրք - անկյունային հարված (պարտաղիր) [1]

Անկյունային հարվածի ժամանակ, հարվածի տեղին մոտ գտնվող մրցավարը պետք է ղիրք գրավի կողագծի վրա՝ անկյունային աղեղից մոտավորապես 5 մետր հեռավորությամբ: Այդ ղիրքից նա պետք է հետևի, որ գնդակը ճիշտ տեղադրված լինի անկյունային սեկտորի մեջ և, որ պաշտպանվող թիմի խաղացողները պահպանեն 5 մետր հեռավորությունը: Մյուս մրցավարը պետք է ղիրք գրավի անկյունային սեկտորի հետևում՝ դարպասային գծի ուղղությամբ: Այդ ղիրքից նա պետք է հետևի գնդակին և խաղացողների վարքագծին:



4. Դիրք - անկյունային հարված (պարտադիր) [2]




5. Դիրք – տուգանային/ազատ հարված [1]


Տուգանային/ազատ հարվածի ժամանակ հարվածի կատարման տեղին ավելի մոտ գտնվող մրցավարը պետք է դիրք գրավի այդ կետի ուղղությամբ և հսկի, որ գնդակը ճիշտ տեղադրված լինի, ինչպես նաև հետևի հարվածի կատարման ընթացքում հնարավոր խախտումներին: Մյուս մրցավարը պետք է դիրք գրավի պաշտպանվող թիմի նախավերջին խաղացողի կամ դարպասային գծի ուղղությամբ, որն՝ ամեն դեպքում, առաջնայինն է: Երկու մրցավարներն էլ պետք է պատրաստ լինեն հետևել գնդակի հետագծին ու կողագծով վազեն դեպի անկյունային սեկտորը, եթե տուգանային հարվածը կատարվի դարպասի ուղղությամբ և նրանք դարպասային գծի վրա չեն:



6. Դիրք – տուգանային/ազատ հարված [2]



7. Դիրք – տուգանային/ազատ հարված [3]



8. Դիրք – տուգանային/ազատ հարված [4]



9. Դիրք – 6 մետրանոց տուգանային հարված (պարտադիր)

Մրցավարներից մեկը պետք է դիրք գրավի 6 մետրանոց նշակետի ուղղությամբ՝ դրանից մոտավորապես 5 մետր հեռավորության վրա և հսկի, որ զնդակը ճիշտ տեղադրված լինի, մինչև ժամանակ առանձնացնի հարվածողին, ինչպես նաև հետևի հարվածի կատարման ընթացքում հնարավոր խախտումներին: Նա չպետք է տա հարվածը կատարելու ազդանշան, մինչև չհանդգլի, որ բոլոր խաղացողները ճիշտ դիրքում են գտնվում: Անհրաժեշտության դեպքում, նա կարող է օգնություն ստանալ մյուս մրցավարից: Մյուս մրցավարը պետք է դիրք գրավի տուգանային հրապարակի գծի և դարպասային գծի հատման կետում: Եթե մինչ հարվածը, դարպասապահը դարպասային գծից առաջ է շարժվում և գլխի խփվում, ապա մրցավարը սուլիչով պետք է հարվածը կրկնելու ազդանշան տա:




10. Դիրք – 10 մետրանոց տուգանային հարվածներ (պարտադիր)

Մրցավարներից մեկը պետք է դիրք գրավի 10 մետրանոց նշակետի ուղղությամբ՝ դրանից մոտավորապես 5 մետր հեռավորության վրա և հսկի, որ գնդակը ճիշտ տեղադրված լինի, միևնույն ժամանակ առանձնացնի հարվածողին, ինչպես նաև հետևի հարվածի կատարման ընթացքում հնարավոր խախտումներին: Նա չպետք է տա հարվածը կատարելու ազդանշան, մինչև չհամոզվի, որ բոլոր խաղացողները ճիշտ դիրքում են գտնվում: Անհրաժեշտության դեպքում, նա կարող է օգնություն ստանալ մյուս մրցավարից: Մյուս մրցավարը պետք է դիրք գրավի տուգանային հրապարակի գծի և դարպասային գծի հատման կետում ու հետևի, արդյո՞ք գնդակը գոլ է մտնում, թե՞ ոչ:



11. Դիրք – տուգանային հարվածներ սկսած վեցերորդ կուտակային տուգանքից (պարտադիր) [1]


Մրցավարներից մեկը պետք է դիրք գրավի գնդակի ուղղությամբ, եթե հնարավոր է դրանից մոտավորապես 5 մետր հեռավորության վրա և հսկի, որ գնդակը ճիշտ տեղադրված լինի, մինչև ժամանակ առանձնացնի հարվածողին, ինչպես նաև հետևի հարվածի կատարման ընթացքում հնարավոր խախտումներին: Նա չպետք է տա հարվածը կատարելու ազդանշան, մինչև չհամոզվի, որ բոլոր խաղացողները ճիշտ դիրքում են գտնվում: Անհրաժեշտության դեպքում, նա կարող է օգնություն ստանալ մյուս մրցավարից: Մյուս մրցավարը պետք է դիրք գրավի տուգանային հրապարակի գծի և դարպասային գծի հատման կետում ու հետևի, արդյո՞ք գնդակը գոլ է մտնում, թե՞ ոչ:




12. Դիրք – տուգանային հարվածներ սկսած վեցերորդ կուտակային տուգանքից (պարտադիր) [2]



13. Դիրք – կողագծից հարված [1]




14. Դիրք – կողագծից հարված [2]



15. Դիրք – կողագծից հարված [3]




16. Դիրք – կողագծից հարված [4]



17. Դիրք – կողագծից հարված (պարտադիր) [5]

Անկյունային աղեղին մոտ, հարձակվող թիմի օգտին նշանակված կողագծից հարվածի ժամանակ, հարվածի կատարման տեղին ավելի մոտ գտնվող մրցավարը, պետք է դիրք գրավի այդ կետից մոտավորապես 5 մետր հեռավորության վրա: Այդ դիրքից նա պետք է հետևի, որ կողագծից հարվածը կատարվի ընդունված ընթացակարգին համապատասխան: Մինևույն ժամանակ, նա պետք է հետևի, որ պաշտպանվող թիմի խաղացողները պահպանեն կողագծից 5 մետր հեռավորությունը: Մյուս մրցավարը պետք է դիրք գրավի անկյունային սեկտորի հետևում՝ դարպասային գծի ուղղությամբ: Այդ դիրքից նա պետք է հետևի զնդակին և խաղացողների վարքագծին:



18. Դիրք – խաղի կամ տուն-դուրս խաղերի հաղթողին որոշելու համար անցկացվող 6 մետրանոց հարվածաշար (պարտադիր)

Մրցավարը պետք է դիրք գրավի դարպասային գծի վրա՝ դարպասից մոտավորապես 2 մետր հեռավորությամբ: Նրա հիմնական պարտականությունն է հետևել թե արդյո՞ք գնդակը հատել է դարպասային գիծը, և արդյո՞ք դարպասապահը առաջ է շարժվել դարպասային գծից՝ մինչ հարվածը:


- Երբ գնդակն ակնհայտորեն հատում է դարպասային գիծը, մրցավարը պետք է տեսողական կապ հաստատի երկրորդ մրցավարի հետ՝ հանդգնելու համար, որ խախտում չի կատարվել:

Երկրորդ մրցավարը պետք է գտնվի 6 մետրանոց նշակետի ուղղությամբ՝ դրանից մոտավորապես 3 մետր հեռավորության վրա և հսկի, որ գնդակն ու հարվածողի թիմակից դարպասապահը ճիշտ դիրքում լինեն:

Երրորդ մրցավարը պետք է գտնվի կենտրոնական շրջանագծում և հետևի երկու թիմերի մնացած խաղացողներին:

Ժամանակաչափորոշը պետք է դիրք գրավի ժամանակաչափորոշի սեղանի մոտ ու հետևի, որ 6 մետրանոց հարվածաշարին չմասնակցող խաղացողները և թիմի պաշտոնյաները դրսևորեն պատշաճ վարքագիծ:

Բոլոր մրցավարները պետք է գրառեն կատարված հարվածները և դրանք կատարող խաղացողների համարները:



Սուլիչի կիրառում

Սուլիչ կիրառել պարտադիր է.

- սկզբնահարվածների ժամանակ.
 - խաղը սկսելու համար (1-ին, 2-րդ խաղակես և լրացուցիչ ժամանակի 1-ին, 2-րդ խաղակես)
 - գոլից հետո` խաղը վերսկսելու համար
- խաղը կանգնեցնելու համար.
 - տուգանային, ազատ կամ 6 մետրանոց հարվածներ նշանակելիս
 - խաղը ժամանակավորապես կանգնեցնելու, ընդհանրապես` դադարեցնելու, ժամանակաչափորդի կողմից խաղակեսի ավարտը ազդարարող ձայնային ազդանշանը հաստատելու կամ խաղակեսի ավարտն ազդարարելու համար, երբ մինչ այդ հարված է կատարվել դարպասներից մեկի ուղղությամբ և հարվածն ավարտվել է
- խաղը վերսկսելիս.
 - երբ տուգանային / ազատ հարվածներ կատարելու ժամանակ, մրցավարը ապահովում է պաշտպանվող խաղացողների կողմից սահմանված հեռավորության պահպանումը
 - 10 մետրանոց հարվածներ կատարելու ժամանակ
 - սկսած վեցերորդ կուտակային տուգանքից` առանց պատի տուգանային հարվածներ կատարելու ժամանակ
 - 6 մետրանոց հարվածներ կատարելու ժամանակ
- խաղը վերսկսելիս, երբ այն կանգնեցվել է.
 - դեղին կամ կարմիր քարտ ցույց տալու համար
 - մեկ կամ ավելի խաղացողների վնասվածքների դեպքում

Սուլիչ կիրառել անհրաժեշտ չէ.

- երբ խաղը կանգնեցվում է.
 - նետուն դարպասից, անկյունային հարված կամ կողագծից հարված նշանակելու համար (դա պարտադիր է, եթե տվյալ իրավիճակն ակնհայտ չէ)
 - գոլն արձանագրելու համար (դա պարտադիր է, եթե գոլն ակնհայտ չէ)
- երբ խաղը վերսկսվում է.
 - տուգանային / ազատ հարվածով, բացառությամբ, եթե չի պահանջվել պահպանել` սահմանված 5 մետր հեռավորությունը կամ հարվածը կատարող թիմի մրցակիցը չի կատարել վեց կուտակային տուգանքներ, ինչպես նաև դարպասից նետումով, անկյունային հարվածով, կողագծից հարվածով խաղը վերսկսելիս

Սուլիչ չի կարող օգտագործվել.

- խաղը «վիճաբանական գնդակ»-ի նետումով վերսկսելիս

Եթե սուլիչը հաճախակի անտեղի է օգտագործվում, ապա այն՝ անհրաժեշտ դեպքերում, կունենա ավելի քիչ ազդեցություն: Եթե տուգանային / ազատ, անկյունային կամ կողագծից հարված կատարող թիմը պահանջում է, որ պաշտպանվող խաղացողները պահպանեն սահմանված հեռավորությունը կամ ճիշտ դիրք գրավեն դարպասից նետման ժամանակ, ապա մրցավարները խաղացողներին պետք է հստակ տեղեկացնեն, որ խաղը չի կարող վերսկսվել՝ մինչ սուլիչի հնչելը: Եթե այս դեպքերում, խաղացողը խաղը վերսկսում է մինչ մրցավարների սուլիչի հնչելը, ապա նա պետք է զգուշացվի՝ խաղի վերսկսումը ձգձգելու համար:

Եթե խաղի ընթացքում մրցավարներից մեկը սխալմամբ սուլիչ է տալիս, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե, նրանց կարծիքով, այս գործողությունը խանգարել է խաղին: Եթե նրանք կանգնեցրել են խաղը, ապա այն պետք է վերսկսեն «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը պետք է կատարի տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս: Եթե սուլիչի ձայնը չի խանգարել խաղին, ապա մրցավարները պետք է խաղը շարունակելու հստակ ազդանշան տան:

Շարժումնք (body language)

Շարժումնքը միջոց է, որը մրցավարներին օգնում է.

- վերահսկել խաղը
- ցույց տալ ինքնատիրապետում և հեղինակություն

Շարժումնքը միջոց չէ.

- ընդունած որոշումը հիմնավորելու համար

Իրավունքներ ու պարտականություններ

Երրորդ մրցավարը և ժամանակաչափորդը օգնում են մրցավարներին վերահսկելու խաղը՝ համաձայն «Ֆուտզալ խաղի կանոններ»-ի: Նրանք նաև աջակցում են մրցավարներին, ելնելով նրանց խնդրանքից և հրահանգից՝ խաղի անցկացման հետ կապված մնացած բոլոր հարցերում: Սա հիմնականում ընդգրկում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- խաղահրապարակի, օգտագործվող զնդակների և խաղացողների հանդերձանքի ստուգումը
- համոզվելը, արդյո՞ք կարգավորվել են արյունահոսության կամ հանդերձանքի հետ կապված խնդիրները
- փոխարինման ընթացակարգի հսկումը
- գրառումներ կատարելը՝ կապված ժամանակի, գոլերի կուտակային տուգանքների և ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ

Մրցավարի օգնականների դիրքերը և թիմային աշխատանքը

1. Սկզբնահարված

Երրորդ մրցավարը պետք է գտնվի ժամանակաչափորդի սեղանի մոտ և հետևի, որ փոխարինողները, պաշտոնյաները և այլ անձինք գտնվեն ճիշտ դիրքերում:

Ժամանակաչափորդը պետք է գտնվի ժամանակաչափորդի սեղանի մոտ և հետևի, որ սկզբնահարվածը ճիշտ կատարվի:

2. Խաղի ընթացքում հիմնական դիրքեր

Երրորդ մրցավարը պետք է հետևի, որ փոխարինողները, պաշտոնյաները և այլ անձինք գտնվեն ճիշտ դիրքերում: Դա կատարելու համար, նա, անհրաժեշտության դեպքում, կարող է տեղաշարժվել կողագծով՝ չմտնելով խաղահրապարակ:

Ժամանակաչափորդը պետք է գտնվի ժամանակաչափորդի սեղանի մոտ ու համոզվի, որ ժամանակաչափը միացվում և կանգնեցվում է խաղի ընթացքին համապատասխան:

3. Փոխարինումներ

Երրորդ մրցավարը պետք է հետևի, որ փոխարինումները ճիշտ կատարվեն, իսկ փոխարինողները կրեն համապատասխան հանդերձանք: Դա կատարելու համար նա, անհրաժեշտության դեպքում, կարող է տեղաշարժվել կողագծով՝ չմտնելով խաղահրապարակ:

4. 6 մետրանոց հարվածաշար

Երրորդ մրցավարը, հարվածաշարին մասնակցելու իրավունք ունեցող խաղացողների հետ միասին, պետք է գտնվի խաղահրապարակի այն կիսադաշտում, որտեղ չի կատարվում հարվածաշարը: Այս դիրքից նա պետք է հետևի խաղացողների վարքագծին: Նաև երրորդ մրցավարը պետք է հետևի, որ խաղացողը երկրորդ անգամ չկատարի 6 մետրանոց հարված, քանի դեռ նրա թիմի բոլոր՝ իրավունք ունեցող խաղացողները չեն կատարել մեկական հարված: Ժամանակաչափորդը պետք է դիրք գրավի ժամանակաչափորդի սեղանի մոտ և կատարի համապատասխան գրառումներ:

Մրցավարի օգնականի ազդանշաններ (պարտադիր)

Մրցավարի օգնականները պետք է ազդանշաններ տան թիմի հինգերորդ կուտակային տուգանքի և մեկ թուպանոց ընդմիջման խնդրանքի դեպքում՝ ձեռքով ցույց տալով այն թիմի պահեստային մտարանը, որը կատարել է հինգերորդ կուտակային տուգանքը կամ խնդրել է մեկ թուպանոց ընդմիջում:

Ձայնային ազդանշան

Ձայնային ազդանշանը խաղի ժամանակ կարևոր ազդանշան է, որը, անհրաժեշտության դեպքում, կիրառվում է մրցավարի ուշադրությունը գրավելու համար:

- Իրավիճակներ, երբ ձայնային ազդանշանը պարտադիր է.
- Խաղակետերի ավարտը ազդարարելու դեպքում
- Մեկ թուպանոց ընդմիջման խնդրանքի դեպքում
- Մեկ թուպանոց ընդմիջման ավարտն ազդարարելու դեպքում
- Թիմի հինգերորդ կուտակային տուգանքն ազդարարելու դեպքում
- Փոխարինողների կամ թիմի պաշտոնյաների ոչ պատշաճ վարքագծի դրսևորման դեպքում
- Փոխարինման ընթացակարգը խախտելու դեպքում
- Մրցավարների կողմից կատարված կարգապահական սխալի դեպքում
- Արտաքին միջամտության դեպքում

Եթե խաղի ընթացքում ժամանակաչափորդը սխալմամբ հնչեցնում է ձայնային ազդանշանը, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե, իրենց կարծիքով, դա խանգարել է խաղին: Եթե նրանք կանգնեցրել են խաղը, ապա այն պետք է վերսկսեն «վիճաբանական գնդակ»-ի մետուձով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը՝ խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի մետուձունը պետք է կատարի տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս: Եթե ձայնային ազդանշանը չի խանգարել խաղին, ապա մրցավարները պետք է խաղը շարունակելու հստակ ազդանշան տան:

Եթե թիմը, որը կատարել էր չորս կուտակային տուգանք, կատարում է մեկ այլ տուգանք, բայց մրցավարները կիրառում են առավելություն տալու սկզբունքը, ապա երրորդ մրցավարը պետք է ժամանակաչափորդի սեղանի ճիշտ տեղում տեղադրի հինգերորդ կուտակային տուգանքի ազդանշանը: Այնուամենայնիվ, եթե այդ թիմը կատարում է նոր կուտակային տուգանք՝ մինչ գնդակի խաղից դուրս գալը, ապա մրցավարի օգնականները պետք է հնչեցնեն ծայնային ազդանշանը, բացառությամբ այն դեպքերի, երբ թիմը, որի նկատմամբ կատարվել է խախտումը, ստացել է ակնհայտ գոլ խփելու հնարավորություն:

Ժամանակաչափ

Եթե ժամանակաչափը չի աշխատում, ապա մրցավարի օգնականները պետք է այդ մասին տեղեկացնեն մրցավարներին: Այդ դեպքում ժամանակաչափորդը խաղի ժամանակի վերահսկումը պետք է շարունակի ձեռքի ժամանակաչափով: Այս դեպքում մրցավարի օգնականները յուրաքանչյուր թիմից պետք է հրավիրեն մեկական պաշտոնյայի, որպեսզի նրանք տեղեկացված լինեն խաղի իրական ժամանակի մասին:

Եթե խաղադադարից հետո ժամանակաչափորդը մոռանում է միացնել ժամանակաչափը, ապա մրցավարները պետք է հրահանգեն, որ չհաշվարկված ժամանակը ավելացվի:

- Խաղի վերսկսումներից հետո ժամանակաչափը միացվում է, երբ.
 - Սկզբնահարվածի ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են ոտքով և այն շարժվում է դեպի մրցակցի կիսադաշտ
 - Դարպասից նետման ընթացակարգի համաձայն՝ դարպասապահը ձեռքով նետում է գնդակը և այն դուրս է գալիս տուգանային հրապարակից
 - Անկյունային հարվածի ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են ոտքով և այն շարժվում է
 - Կողագծից հարվածի ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են ոտքով և այն մտնում է խաղահրապարակ
 - Տուգանային հրապարակներից դուրս կատարվող տուգանային հարվածների ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են ոտքով
 - Տուգանային հրապարակներից դուրս ցանկացած թիմի կամ հարձակվող թիմի կողմից տուգանային հրապարակի գծի վրայից կատարվող ազատ հարվածների ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են ոտքով
 - Տուգանային հրապարակներից պաշտպանվող թիմի օգտին կատարվող տուգանային կամ ազատ հարվածների ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են ոտքով և այն դուրս է գալիս տուգանային հրապարակից

ԿԱՆՈՆ 6 – Մրցավարի օգնականները

- 6 մետրանոց հարվածի ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են ոտքով և այն շարժվում է առաջ
- Հինգերորդ կուտակային տուգանքից հետո նշանակված տուգանային հարվածի ընթացակարգի համաձայն՝ գնդակին հարվածում են գոլ խփելու միտումով
- «Վիճաբանական գնդակի» ընթացակարգի համաձայն՝ գնդակը գետնին դիպչելուց հետո



Մեկ թուպեանոց խաղադադար



Հինգերորդ կուտակային տուգանք

Խաղամիջյան ընդմիջում

Եթե թիմերի խաղացողներից զոնե մեկը, առաջին խաղակեսից հետո խնդրում է խաղամիջյան ընդմիջման իրավունք, ապա մրցավարները պետք է թույլատրեն դա, նույնիսկ, եթե երկու թիմերի ավագները խնդրել են, որ խաղը շարունակվի առանց ընդմիջման:

Լրացուցիչ ժամանակ

Եթե խաղացվում է լրացուցիչ ժամանակ, ապա խաղակեսերի միջև ընդմիջում չի տրվում: Թիմերը միայն փոխում են կիսադաշտերը, իսկ փոխարինողները և թիմի պաշտոնյաները՝ տեխնիկական գոտիները:

Սկզբնահարված

- Մինչ սկզբնահարվածը կատարելու հրահանգ տալը՝ մրցավարներին անհրաժեշտ չէ դարպասապահին կամ մեկ այլ խաղացողին հարցնել, թե արդյոք նա պատրաստ է խաղին:

«Վիճաբանական գնդակ»

- Ցանկացած խաղացող կարող է պայքարել գնդակի համար (ներառյալ դարպասապահը)
- «Վիճաբանական գնդակ»-ի նետմանը մասնակցող խաղացողների նվազագույն կամ առավելագույն քանակ չի սահմանված
- Մրցավարները չեն կարող որոշել, թե ով կարող է մասնակցել «վիճաբանական գնդակ»-ի նետմանը
- Չկա սահմանված հեռավորություն, որը պետք է պահպանեն խաղացողները, բացառությամբ, եթե մրցակիցը շրջափակված է և «վիճաբանական գնդակ»-ի նետումը հնարավոր չէ կատարել
- Թիմը կարող է չմասնակցել «վիճաբանական գնդակ»-ի պայքարին
- Եթե մրցավարի գնդակը բաց թողնելուց հետո, մինչ այն կմտնի խաղի մեջ, խաղացողը խախտում է կատարում, ապա մրցավարը պետք է կրկնի «վիճաբանական գնդակ»-ի նետումը՝ համապատասխան կարգապահական պատժամիջոցների կիրառումից հետո:

Գնդակը խաղադաշտի սահմաններում դիպչում է մրցավարներից մեկին

Եթե գնդակը, որը խաղի մեջ է, դիպչում է ժամանակավորապես խաղադաշտում գտնվող մրցավարներից մեկին, ապա խաղը շարունակվում է, քանի որ մրցավարները հանդիսանում են խաղի մաս:

Եթե գնդակը, որը խաղի մեջ է, դիպչում է ժամանակավորապես խաղադաշտում գտնվող մրցավարի օգնականներից մեկին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը և այն վերսկսեն «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական գնդակ»-ի նետումը պետք է կատարի տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Գոլ է խփվել, երբ խաղին չմասնակցող անձ է գտնվել խաղահրապարակում

Եթե խփված գոլից հետո՝ մինչ խաղի վերսկսումը, մրցավարները պարզում են, որ գոլ խփելու պահին խաղահրապարակում այլ անձ է գտնվել, ապա.

- նրանք պետք է չարձանագրեն գոլը, եթե.
 - այդ անձը միջամտել է խաղին՝ լինելով թիմերից մեկի պաշտոնյա կամ կողմնակի անձ
 - այդ անձը հանդիսացել է գոլ խփող թիմի խաղացող, փոխարինող, հեռացված խաղացող կամ թիմի պաշտոնյա
- նրանք պետք է արձանագրեն գոլը, եթե.
 - այդ անձը չի միջամտել խաղին՝ լինելով կողմնակի անձ
 - այդ անձը հանդիսացել է գոլ բաց թողած թիմի խաղացող, փոխարինող, հեռացված խաղացող կամ թիմի պաշտոնյա

Գոլ չէ

Եթե մրցավարներից մեկը դարպասի գրավման ազդանշան է տալիս մինչ գնդակն ամբողջությամբ կհատի դարպասային գիծը և անմիջապես գիտակցում է իր սխալը, ապա խաղը պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակ»-ի նետումով տուգանային հրապարակի զծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Ֆուտզալում խաղից դուրս չկա:

Խախտում արձանագրելու համար հիմնական պահանջներ

Չետևյալ պայմանները պետք է առկա լինեն, որպեսզի արարքը զնահատվի որպես խախտում.

- Դա պետք է կատարվի խաղացողի կամ փոխարինման ընթացակարգը խախտած փոխարինողի կողմից
- Դա պետք է կատարվի խաղահրապարակում
- Դա պետք է կատարվի, երբ զնդակը խաղի մեջ է

Եթե մրցավարները խաղը կանգնեցնում են խաղահրապարակից դուրս կատարված խախտման համար (երբ զնդակը խաղի մեջ է) և դա չի կատարել խաղացող, ով դա անելու համար՝ առանց մրցավարների թույլտվության է դուրս եկել խաղահրապարակից, ապա խաղը պետք է վերսկսվի «վիճաբանական զնդակի»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր զնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը «վիճաբանական զնդակ»-ի նետումը պետք է կատարի տուգանային հրապարակի զծի այն կետում, որն անենամտոն է զնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Խախտում չէ, երբ երկու կամ ավելի խաղացողներ միաժամանակ պայքարի մեջ են մտնում մրցակցի հետ, եթե պայքարը կանոնների սահմաններում է:

Անզգուշորեն, անգիտակցաբար, օգտագործելով չափազանց մեծ ուժ

«Անզգուշորեն» (Careless) - նշանակում է, որ խաղացողը պայքարելիս ցուցաբերել է անզգուշություն կամ գործել է անշրջահայացորեն:

- Եթե խախտումը որակվել է որպես անզգուշորեն կատարված, ապա կարգապահական պատժամիջոց չի կիրառվում

«Անգիտակցաբար» (reckless) - նշանակում է, որ խաղացողը գործել է, ընդհանրապես չգիտակցելով մրցակցին սպառնացող վտանգը և դրա հետևանքը

- Խաղացողը, որը խաղացել է անգիտակցաբար, պետք է զգուշացվի

«Օգտագործելով չափազանց մեծ ուժ» (Using excessive force) - նշանակում է, որ խաղացողը չափից շատ է գերազանցել անհրաժեշտ ուժի օգտագործումը և մրցակցին վնասվածք հասցնելու վտանգ է առաջացրել

- Խաղացողը, որը օգտագործել է չափազանց մեծ ուժ, պետք է հեռացվի

Չարձակում մրցակցի վրա

Չարձակման գործողությունը ֆիզիկական հպումով պայքար է տարածության համար, առանց բազուկների և արմունկների օգտագործման, գնդակից խաղային հեռավորության վրա:

Խախտում է, երբ մրցակցի վրա հարձակվում են.

- Անզգուշորեն
- Անգիտակցաբար
- Օգտագործելով չափազանց մեծ ուժ

Մրցակցին բռնել (պահել)

Մրցակցին բռնելը (պահելը), օգտագործելով ձեռքերը, բազուկները կամ մարմինը, նրա առաջխաղացմանը կամ շրջանցմանը խոչընդոտող գործողություն է:

Մրցավարները պետք է արագ միջամտեն և ցուցաբերեն վճռականություն այդպիսի խախտումների դեմ պայքարելիս, հատկապես՝ տուգանային հրապարակում, նաև անկյունային, կողագծից, տուգանային/ազատ հարվածների ժամանակ:

- Այդպիսի դեպքերում մրցավարները պետք է՝
 - բանավոր զգուշացնեն ցանկացած խաղացողի, ով բռնում է (պահում) մրցակցին, քանի դեռ գնդակը խաղի մեջ չէ
 - զգուշացնեն խաղացողին, եթե նա շարունակում է մրցակցին բռնելը (պահելը), քանի դեռ գնդակը խաղի մեջ չէ
 - նշանակեն տուգանային կամ 6 մետրանոց տուգանային հարված և զգուշացնեն խաղացողին, եթե դա կատարվում է, երբ գնդակը խաղի մեջ է

Եթե պաշտպանը սկսում է բռնել (պահել) մրցակցին տուգանային հրապարակից դուրս և շարունակում է դա տուգանային հրապարակում, ապա մրցավարները պետք է նշանակեն 6 մետրանոց տուգանային հարված:

Կարգապահական պատժամիջոցներ

- Խաղացողը պետք է զգուշացվի՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար, եթե նա բռնում է (պահում) մրցակցին՝ զրկելով նրան գնդակին տիրելու կամ դիրքային առավելություն ստանալու հնարավորությունից
- Խաղացողը պետք է հեռացվի, եթե նա բռնելով (պահելով) մրցակցին՝ զրկում է նրան ակնհայտ գոլ խփելու հնարավորությունից
- Մրցակցին բռնելու (պահելու) այլ իրադրություններում կարգապահական պատժամիջոցներ պետք չէ կիրառել

Խաղի վերսկսում

- Տուգանային հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) կամ 6 մետրանոց տուգանային հարված, եթե խախտումը կատարվել է սեփական տուգանային հրապարակում:

Ձեռքով խաղ

Ձեռքով խաղը ներառում է խաղացողի կողմից դաստակով կամ ձեռքով գնդակին հպվելու միտումնավոր գործողություն: Մրցավարները պետք է հաշվի առնեն հետևյալը.

- Ձեռքի շարժումը դեպի գնդակը (ոչ թե գնդակի շարժումը դեպի ձեռքը)
- Մրցակցի և գնդակի միջև հեռավորությունը (ամսպասելի գնդակ)
- Ձեռքի դիրքը դեռ չի նշանակում, որ խախտում է կատարվել (ձեռքը մարմնից հեռու պահելը դեռ միտում չէ)
- Ձեռքում բռնած իրով (հանդերձանքի մաս, սրնքակալ և այլն) գնդակին հպվելը համարվում է միտումնավոր ձեռքով խաղ
- Եթե նետած իրը (խաղակոշիկ, սրնքակալ և այլն) դիպչում է գնդակին, ապա դա համարվում է միտումնավոր ձեռքով խաղ

Կարգապահական պատժամիջոցներ

Կան հանգամանքներ, երբ խաղացողին, միտումնավոր ձեռքով գնդակ խաղալու համար, անհրաժեշտ է զգուշացնել՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար, օրինակ, երբ խաղացողը.

- միտումնավոր, ձեռքով գնդակ է խաղում՝ գրկելով մրցակցին դրան տիրելու հնարավորությունից
- միտումնավոր, ձեռքով գնդակ է խաղում՝ փորձելով գրավել մրցակցի դարպասը
- ձևացնում է, որ գնդակ է խաղացել մարմնի որևէ մասով, բայց իրականում՝ դա արել է ձեռքով, նպատակ ունենալով խաբել մրցավարներին
- ձեռքով գնդակ է խաղում՝ փորձելով կանխել դարպասի գրավումը կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունը, երբ դարպասապահ իր տուգանային հրապարակում չէ, սակայն դա նրան չի հաջողվում

Այնուամենայնիվ, խաղացողը հեռացվում է, երբ միտումնավոր ձեռքով գնդակ խաղալով՝ կանխում է դարպասի գրավումը կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունը: Այդ պատժամիջոցը ոչ թե խաղացողի միտումնավոր ձեռքով գնդակ խաղալու, այլ անընդունելի և անարդար միջամտության արդյունք է, որով կանխվել է դարպասի գրավումը:

Խաղի վերսկսում

- Տուգանային հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տես Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր) կամ 6 մետրանոց տուգանային հարված:

Սեփական տուգանային հրապարակից դուրս ձեռքով գնդակ խաղալու համար դարպասապահի վրա տարածվում են նույն սահմանափակումները, ինչ որ ցանկացած այլ խաղացողի: Սեփական տուգանային հրապարակում ձեռքով գնդակ խաղալու համար դարպասապահը չի կարող մեղավոր ճանաչվել և պատժվել տուգանային հարվածով: Այնուամենայնիվ, նա ձեռքով գնդակ խաղալու համար որոշ դեպքերում կարող է մեղավոր ճանաչվել և պատժվել ազատ հարվածով:

Դարպասապահների կողմից կատարված խախտումներ

Գնդակը համարվում է դարպասապահի հսկողության տակ.

- երբ գնդակը նրա ձեռքերի կամ ձեռքի և որևէ մակերևույթի (օրինակ՝ գետնի, սեփական մարմնի) միջև է
- երբ նա գնդակը պահում է իր բացած ձեռքի ափով
- երբ նա գնդակը հարվածում է գետնին կամ օդ է մետում:

Երբ դարպասապահը ձեռքերով տիրում է գնդակին, մրցակիցը չի կարող պայքարել նրա հետ:

Տիրել գնդակին՝ նշանակում է, որ դարպասապահը վերահսկում է գնդակը:

Դարպասապահին չի թույլատրվում սեփական կիսադաշտում դիպչել գնդակին հետևյալ դեպքերում՝

- եթե նա սեփական կիսադաշտում չորս վայրկյանից ավելի տիրել է գնդակին, լինի դա
 - ձեռքերով՝ իր տուգանային հրապարակում
 - ոտքերով՝ սեփական կիսադաշտում
 - ձեռքերով՝ իր տուգանային հրապարակում և ոտքերով՝ սեփական կիսադաշտում

Նշված բոլոր դեպքերում, դարպասապահին ավելի մոտ գտնվող մրցավարը պետք է տեսանելիորեն կատարի չորս վայրկյանի հաշվարկը.

- Եթե նա, գնդակ խաղալուց հետո, սեփական կիսադաշտում կրկին դիպչում է խաղընկերոջ կողմից միտումնավոր իրեն փոխանցած գնդակին, որին դեռ չի դիպչել կամ չի խաղացել մրցակիցը.
 - ապա համարվում է, որ դարպասապահը տիրում է գնդակին, եթե մարմնի որևէ մասով դիպչում է դրան, բացառությամբ, եթե գնդակը հանկարծակի անդրադարձվում է իրենից
- Եթե նա իր տուգանային հրապարակում ձեռքերով դիպչում է խաղընկերոջ կողմից ուղքով իրեն փոխանցած գնդակին
- Եթե նա գնդակը ուղղակիորեն ստանում է՝ խաղընկերոջ կողմից կատարված կողագծից հարվածից հետո և իր տուգանային հրապարակում ձեռքերով դիպչում է դրան

Խաղի վերսկսում

- Ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր)

Դարպասապահների նկատմամբ կատարվող խախտումներ

- Խախտում է, երբ դարպասապահին խանգարում են խաղարկել՝ ձեռքերում գտնվող գնդակը, օրինակ՝ երբ նա գնդակը հարվածում է գետնին
- Խախտում է, գնդակ խաղալը կամ խաղալու փորձ անելը, երբ դարպասապահն իր բացած ձեռքի ավիով պահում է գնդակը
- Խաղացողը պետք է պատժվի՝ վտանգավոր խաղի համար, եթե նա հարվածում կամ փորձում է հարվածել գնդակին այն ժամանակ, երբ դարպասապահը խաղարկում է գնդակը
- Խախտում է, երբ դարպասապահին ոչ ճիշտ խանգարում են՝ սահմանափակելով նրա շարժումը, օրինակ՝ անկյունային հարվածի ժամանակ
- Խախտում չի համարվում, երբ հարձակվողը ֆիզիկական հպումով պայքարի մեջ է մտնում դարպասապահի հետ՝ վերջինիս տուգանային հրապարակում, բացառությամբ, եթե հարձակվողը թռչում, հարձակվում կամ հրում է դարպասապահին անզգուշորեն, անգիտակցաբար կամ օգտագործելով չափազանց մեծ ուժ

Խաղի վերսկսում

- Եթե խաղը կանգնեցվել է, քանի որ դարպասապահի նկատմամբ խախտում է կատարվել՝ համաձայն վերը նշված կետերի նկարագրերի և մրցավարները չեն կիրառել առավելության սկզբունքը, ապա այն պետք է վերսկսվի ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր), բացառությամբ, եթե հարձակվողը թռել, հարձակվել կամ հրել է դարպասապահին՝ անզգուշորեն, անգիտակցաբար կամ օգտագործելով չափազանց մեծ ուժ, որի դեպքում մրցավարները՝ անկախ կիրառվող կարգապահական պատժամիջոցներից, խաղը պետք է վերսկսեն տուգանային հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Վտանգավոր խաղ

«Վտանգավոր խաղ» նշանակում է՝ գնդակ խաղալու փորձ կատարելիս, ցանկացած գործողություն, որը սպառնում է վնասվածք հասցնել մրցակցին կամ ինքն իրեն: Դա պետք է կատարվի մրցակցի մոտակայքում և թույլ չտա մրցակցին խաղալ գնդակ՝ ինքն իրեն կամ մեկ այլ խաղացողի վնասվածք հասցնելու մտավախության պատճառով:

Մկրատածն հարվածները թույլատրելի են, եթե, մրցավարի կարծիքով, վտանգավոր չեն մրցակցի համար:

«Վտանգավոր խաղ»-ը չի ներառում խաղացողների միջև ֆիզիկական հպում: Եթե կա ֆիզիկական հպում, ապա գործողությունը դառնում է տուգանային կամ 6 մետրանոց տուգանային հարվածով պատժվող խախտում: Այդ դեպքում մրցավարները պետք է հաշվի առնեն, որ, մեծ հավանականությամբ, կատարվել է նաև ոչ պատշաճ վարքագծի դրսևորում:

Կարգապահական պատժամիջոցներ

- Եթե խաղացողը խաղում է վտանգավոր «սովորական» պայքարի ժամանակ, ապա մրցավարները չպետք է կիրառեն որևէ կարգապահական պատժամիջոց: Եթե գործողությունը կատարվել է վնասվածք հասցնելու ակնհայտ վտանգով, ապա մրցավարները պետք է զգուշացնեն խաղացողին՝ մրցակցի դեմ անգիտակցաբար պայքարելու համար
- Եթե խաղացողը, խաղալով վտանգավոր, կանխում է դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունը, ապա մրցավարները պետք է հեռացնեն նրան

Խաղի վերսկսում

- Ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր),
- Եթե կա հպում, ապա խախտման բնույթը փոխվում է և այն պետք է պատժվի տուգանային կամ 6 մետրանոց տուգանային հարվածով, կամ, եթե մրցավարների գնահատմամբ, խաղացողը պայքարել է անգ-գուշորեն, անգիտակցաբար կամ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա կրկին խախտման բնույթը փոխվում է և այն պետք է պատժվի տուգանային կամ 6 մետրանոց տուգանային հարվածով

Մրցակցի առաջընթացը խոչընդոտելը

«Մրցակցի առաջընթացը խոչընդոտել» նշանակում է՝ շարժվել դեպի մրցակցի շարժման ուղին, խոչընդոտելով, շրջափակելով, դանդաղեցնելով կամ ստիպելով նրան փոխելու շարժման ուղղությունը, երբ գնդակը խաղային տարածության մեջ չէ այդ խաղացողներից:

Բոլոր խաղացողներն իրավունք ունեն դիրքավորվել խաղահրապարակում: Մրցակցի ուղու վրա գտնվելը տարբերվում է դեպի մրցակցի ուղին շարժվելուց:

Թույլատրվում է գնդակը շրջափակել մարմնով: Խաղացողը, որը տակտիկական նկատառումներով դիրքավորվում է գնդակի և մրցակցի միջև, չի կատարում խախտում, քանի դեռ գնդակը խաղային տարածության մեջ է, պայմանով, որ նա չի պահում մրցակցին ձեռքերով կամ մարմնով:

Քարտը գրանցելու համար խաղի վերսկսման ուշացնելը

Եթե մրցավարները որոշել են խաղացողին կամ փոխարինողին քարտ ցույց տալ՝ դեղին կամ կարմիր, խաղը չի կարող վերսկսվել, քանի դեռ պատժամիջոցը չի արձանագրվել:

Զգուշացումներ ոչ սպորտային վարքագծի համար

Կան տարբեր հանգամանքներ, երբ խաղացողը պետք է զգուշացվի՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար, օրինակ, եթե խաղացողը.

- անզիտակցորեն կատարում է տուգանային հարվածով պատժվող 7 խախտումներից որևէ մեկը
- տակտիկական նկատառումներով, խախտում է կատարում՝ խանգարելով զարգացնել կամ խափանելով մրցակցի հեռանկարային գրոհը
- տակտիկական նկատառումներով բռնում/պահում է մրցակցին՝ քաշելով/հեռացնելով նրան գնդակից կամ խոչընդոտելով նրան՝ հասնել գնդակին
- ձեռքով գնդակ խաղալով՝ զրկում է մրցակցին դրան տիրելու հնարավորությունից կամ խափանում է մրցակցի գրոհը (բացառությամբ սեփական տուգանային հրապարակում գտնվող դարպասապահից)
- ձեռքով գնդակ խաղալով՝ փորձում է գոլ խփել (անկախ նրանից, փորձը հաջող է, թե՞ ոչ)
- ձևացնում է, որ գնդակ է խաղացել մարմնի որևէ մասով, բայց իրականում՝ դա արել է ձեռքով, նպատակ ունենալով խաբել մրցավարներին
- խաղալով ձեռքով՝ անհաջող փորձ է կատարում կանխելու գոլը կամ ակնհայտ գոլային հնարավորությունը՝ չլինելով դարպասապահ, որը գտնվում է սեփական տուգանային հրապարակում
- փորձում է խաբել մրցավարներին՝ ձևացնելով վնասվածք, կամ ցույց տալով, թե իբր իր նկատմամբ խախտում է կատարվել (կեղծակերպ արարք)
- խաղի ընթացքում փոխում է տեղը դարպասապահի հետ, առանց մրցավարի թույլտվության
- կատարում է գործողություն, որով ցուցաբերում է անհարգալից վերաբերմունք խաղի նկատմամբ
- խաղում է գնդակ, երբ քայլում է խաղահրապարակից դուրս՝ ստանալով այն թողնելու մրցավարների թույլտվությունը
- բառերով շեղում է մրցակցին խաղի ընթացքում կամ այն վերսկսելիս
- կատարում է չթույլատրվող գծանշումներ խաղահրապարակում
- մինչ գնդակը խաղի մեջ է, միտումնավոր հնարք է օգտագործում, որպեսզի գնդակը գլխով, կրծքով, ծնկով և այլն, փոխանցի իր դարպասապահին, Կանոն-12-ը շրջանցելու նպատակով, անկախ այն բանից, դարպասապահը դիպչո՞ւմ է գնդակին ձեռքով, թե՞ ոչ: Խաղացողի կողմից կատարված խախտումը կայանում է նրանում, որ նա փորձում է շրջանցել Կանոն 12-ի տառն ու ոգին: Խաղը պետք է վերսկսել ազատ հարվածով

Գոլի տոնում

Չնայած թույլատրելի է, որ խաղացողը գոլից հետո ցուցադրի իր ուրախութիւնը, այնուամենայնիվ, տոնումը չպետք է դուրս գա թույլատրելի սահմաններից:

Չափավոր տոնումը թույլատրելի է, սակայն չպետք է խրախուսվի «խորեոգրաֆիկ» տոնումը, որի արդյունքում չափից շատ ժամանակ է վատնվում, և նմանատիպ դեպքերում մրցավարներին հրահանգվում է միջամտել:

- Խաղացողը պետք է զգուշացվի, եթե.
 - մրցավարի կարծիքով, նա կատարում է սադրիչ, ծաղրող կամ բորբոքող ժեստեր
 - մագլցում է պաշտպանիչ ցանկապատին՝ գոլը տոնելու համար
 - հանում է մարզաշապիկը կամ դրանով ծածկում գլուխը, նույնիսկ, եթե տակից նա կրում է նմանատիպ մարզաշապիկ
 - ծածկում է երեսը կամ գլուխը դիմակով կամ նմանատիպ այլ առարկայով

Գոլը տոնելու համար խաղահրապարակից դուրս գալը թույլատրվում է, սակայն կարևոր է, որ խաղացողները խաղահրապարակ վերադառնան որքան հնարավոր է շուտ:

Խոսքով կամ գործողությամբ անհամաձայնության արտահայտում

Եթե խաղացողը կամ փոխարինողն արտահայտում է անհամաձայնություն (խոսքով կամ առանց խոսքերի) մրցավարների կամ մրցավարի օգնականների որոշման դեմ, պետք է զգուշացվի:

Թիմի ավագը չունի «Ֆուտզալ Խաղի կանոններ»-ով նախատեսված որևէ հատուկ կարգավիճակ կամ առավելություններ, սակայն ունի որոշակի պատասխանատվություն իր թիմի վարքագծի համար:

Ցանկացած խաղացող կամ փոխարինող, ով հարձակվում է խաղի պաշտոնյայի վրա կամ օգտագործում է վիրավորական, գռեհիկ կամ անպարկեշտ ժեստեր/խոսքեր՝ պետք է հեռացվի:

Խաղի վերսկսման ձգձգում

Մրցավարը պետք է զգուշացնի այն խաղացողներին, որոնք ձգձգում են խաղի վերսկսումը՝ օգտագործելով հետևյալ տակտիկան.

- դիտավորյալ սխալ տեղից է կատարում տուգանային/ազատ հարվածը, միտումով, որ մրցավարները ստիպված, հարվածը կրկնելու հրահանգ տան
- մի կողմ է հարվածում գնդակը կամ ձեռքում տանում է այն՝ մրցավարների կողմից խաղը կանգնեցնելուց հետո
- երբ բժշկական անձնակազմի՝ խաղահրապարակ մտնելուց և նրա վնասվածքը զննելուց հետո, ձգձգում է խաղահրապարակից դուրս գալը
- հրահրում է կոնֆրոնտացիա՝ միտումնավոր հպվելով գնդակին, մրցավարների կողմից խաղը կանգնեցնելուց հետո

Կեղծակերպ արարք (սիմուլյացիա)

Ցանկացած խաղացող, ով փորձում է խաբել մրցավարներին՝ ձևացնելով վնասվածք, կամ ցույց տալով, թե իբր իր նկատմամբ խախտում է կատարվել, մեղավոր է՝ կեղծակերպ արարք դրսևորելու համար և պետք է պատժվի՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Եթե խաղը կանգնեցվել է այս խախտման համար, ապա այն պետք է վերսկսվի ազատ հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13 - Տուգանային/ազատ հարվածների դիրքեր):

Սիստեմատիկ խախտումներ

Մրցավարներն ամբողջ խաղի ընթացքում պետք է ուշադիր լինեն այն խաղացողների նկատմամբ, ովքեր սիստեմատիկ խախտում են «Ֆուտզալ Խաղի կանոններ»-ը: Մասնավորապես նրանք պետք է հաշվի առնեն, որ նույնիսկ, եթե խաղացողը կատարում է մի քանի տարբեր խախտումներ, ապա, ամեն դեպքում, նա պետք է զգուշացվի «Ֆուտզալ Խաղի կանոններ»-ը սիստեմատիկ խախտելու համար:

Չկա խախտումների կոնկրետ քանակ և օրինակ, որը սահմանում է «սիստեմատիկությունը»: Դա ամբողջովին մնում է մրցավարների հայեցողությանը, և նրանք դա պետք է դիտարկեն խաղի արդյունավետ ղեկավարման համաճարտում:

Կանոնների լուրջ խախտում

Խաղացողի կատարած խախտումը որակվում է որպես «կանոնների լուրջ խախտում», եթե նա գնդակի համար պայքարում մրցակցի դեմ օգտագործում է չափազանց մեծ ուժ կամ դաժանություն, երբ գնդակը խաղի մեջ է:

Սահանկումը, որը սպառնում է մրցակցի անվտանգությանը, պետք է պատժվի որպես՝ «կանոնների լուրջ խախտում»:

Ցանկացած խաղացող, ով, գնդակի համար պայքարում, դիմացից, կողքից կամ հետևից, մեկ կամ երկու ոտքերն օգտագործելով, մետվում է մրցակցի վրա, կիրառելով չափազանց մեծ ուժ և սպառնալով նրա անվտանգությանը, մեղավոր է ճանաչվում «կանոնների լուրջ խախտման» մեջ:

«Կանոնների լուրջ խախտման» դեպքերում առավելություն տալու սկզբունքը չպետք է կիրառվի, բացառությամբ, երբ հետագայում կա զուլ խփելու ակնհայտ հնարավորություն: Նմանատիպ դեպքում մրցավարները պետք է հեռացնեն այդ խաղացողին՝ մոտակա խաղադադարին:

«Կանոնների լուրջ խախտման» մեջ մեղավոր ճանաչված խաղացողը պետք է հեռացվի խաղահրապարակից և խաղը պետք է վերսկսվի տուգանային հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք) կամ 6 մետրանոց հարվածով (եթե խախտումը կատարվել է պաշտպանվողի կողմից իր տուգանային հրապարակում):

Բռնարարք

Խաղացողը մեղավոր է ճանաչվում բռնարարք կատարելու համար, եթե մրցակցի հետ գնդակի համար չպայքարելով, նրա դեմ օգտագործում է չափազանց մեծ ուժ կամ դաժանություն:

Նա մեղավոր է ճանաչվում բռնարարք կատարելու համար նաև, եթե օգտագործում է չափազանց մեծ ուժ կամ դաժանություն թիմակցի, հանդիսատեսի, մրցավարների, մրցավարի օգնականների կամ այլ անձի նկատմամբ:

Բռնարարք կարող է կատարվել ինչպես խաղահրապարակում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, անկախ այն բանից, գնդակը գտնվու՞մ է խաղի մեջ, թե՞ ոչ:

Բռնարարքի դեպքում առավելություն տալու սկզբունքը չպետք է կիրառվի, բացառությամբ, երբ հաջորդում է զուլ խփելու ակնհայտ հնարավորություն: Նմանատիպ դեպքում մրցավարները պետք է հեռացնեն այդ խաղացողին՝ մոտակա խաղադադարին:

Մրցավարներին հիշեցվում է, որ բռնարարքը հաճախ հանգեցնում է խաղացողների միջև մասսայական կոնֆրոնտացիայի: Այդ պատճառով նրանք պետք է փորձեն կանխել դա՝ ակտիվ միջամտությամբ:

Խաղացողը կամ փոխարինողը, ով կատարել է բռնարարք, պետք է հեռացվի խաղահրապարակից:

Խաղի վերսկսում

- Եթե գնդակը խաղի մեջ չէ, ապա այն վերսկսվում է՝ համաձայն նախորդ որոշման
- Եթե գնդակը խաղի մեջ է և խախտումը կատարվել է խաղահրապարակից դուրս.
 - եթե «Ֆուտզալ խաղի Կանոններ»-ով թույլատրված դեպքի համաձայն՝ խաղահրապարակից դուրս եկած խաղացողը կատարում է խախտում, ապա խաղը պետք է վերսկսվի «վիճաբանական գնդակի»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը տուգանային հրապարակի զծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:
 - եթե խաղացողը խախտում կատարելու համար թողնում է խաղահրապարակը, ապա խաղը վերսկսվում է ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին (տե՛ս Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):
- Եթե գնդակը խաղի մեջ է և խաղացողը խախտում է կատարում խաղահրապարակում.
 - մրցակցի նկատմամբ.
 - խաղը վերսկսվում է տուգանային հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք) կամ 6 մետրանոց հարվածով (եթե խախտումը կատարվել է պաշտպանվողի կողմից իր տուգանային հրապարակում)
 - թիմակցի նկատմամբ.
 - խաղը վերսկսվում է ազատ հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք):
 - փոխարինողի նկատմամբ.
 - խաղը վերսկսվում է բռնարարք կատարած խաղացողի թիմի օգտին ազատ հարվածով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք), քանի որ փոխարինողի անօրինական խաղահրապարակ մտնելը՝ կատարված առաջին խախտումն է մրցավարների նկատմամբ.
 - խաղը վերսկսվում է ազատ հարվածով այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք):

-այլ անձի նկատմամբ.

-խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակ»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

- Եթե գնդակը խաղի մեջ է և փոխարինողը կամ թիմի պաշտոնյան խախտում է կատարում խաղահրապարակից դուրս.

- այլ անձի նկատմամբ.

- խաղը վերսկսվում է «վիճաբանական գնդակի»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելու պահին, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Խախտումներ, երբ իր է նետվում

Եթե, մինչ գնդակը խաղի մեջ է, խաղացողը կամ փոխարինողը գնդակ կամ իր է նետում մրցակցի կամ ցանկացած այլ անձի վրա՝ անգիտակցորեն, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և զգուշացնեն խաղացողին կամ փոխարինողին:

Եթե, մինչ գնդակը խաղի մեջ է, խաղացողը կամ փոխարինողը գնդակ կամ իր է նետում մրցակցի կամ ցանկացած այլ անձի վրա՝ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք ակնհայտ զոլ խփելու հնարավորության դեպքում չեն կիրառել առավելության սկզբունքը և հեռացնեն խաղացողին կամ փոխարինողին՝ բռնարարը կատարելու համար:

Խաղի վերսկսում

- Եթե սեփական տուգանային հրապարակում կանգնած խաղացողը իր կամ գնդակ է նետում տուգանային հրապարակից դուրս կանգնած մրցակցի վրա, ապա մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով տուգանային հարված այնտեղից, որտեղ իրը դիպել կամ կարող էր դիպչել մրցակցին (տե՛ս Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք)
- Եթե սեփական տուգանային հրապարակից դուրս կանգնած խաղացողը իր կամ գնդակ է նետում տուգանային հրապարակում կանգնած մրցակցի վրա, ապա մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով 6 մետրանոց տուգանային հարված

- Եթե խաղահրապարակում կանգնած խաղացողը որևէ իր կամ գնդակ է նետում խաղահրապարակից դուրս կանգնած որևէ անձի վրա, ապա մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գնդակն էր խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք): Այս դեպքում համարվում է, որ խաղացողը թողել է խաղահրապարակը առանց մրցավարների թույլտվության և «Ֆուտզալ խաղի կանոններ»-ով չթույլատրվող պատճառով:
- Եթե խաղահրապարակից դուրս կանգնած խաղացողը որևէ իր կամ գնդակ է նետում խաղահրապարակում կանգնած մրցակցի վրա, ապա մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով տուգանային հարված այնտեղից, որտեղ իրը դիպել կամ կարող էր դիպչել մրցակցին կամ 6 մետրանոց տուգանային հարված (եթե խախտումը կատարվել իրը նետած խաղացողի տուգանային հրապարակում):
- Եթե խաղահրապարակից դուրս կանգնած փոխարինողը իր կամ գնդակ է նետում խաղահրապարակում կանգնած մրցակցի վրա, ապա մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գնդակն էր խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք): Այս դեպքում համարվում է, որ փոխարինողը խաղահրապարակ է մտել առանց մրցավարների թույլտվության՝ խախտելով փոխարինման ընթացակարգը:
- Եթե խաղահրապարակում կանգնած փոխարինողը, ունի շնորհիվ տվյալ թիմն ունի լրացուցիչ խաղացող, իր կամ գնդակ է նետում խաղահրապարակում կամ դրանից դուրս կանգնած ցանկացած այլ անձի վրա, ապա մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գնդակն էր խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք): Այս դեպքում համարվում է, որ փոխարինողը խաղահրապարակ է մտել առանց մրցավարների թույլտվության:
- Եթե փոխարինման ընթացակարգը խախտած փոխարինողն իր կամ գնդակ է նետում խաղահրապարակում կամ դրանից դուրս կանգնած ցանկացած անձի վրա, ապա նա կպատժվի այնպես, ինչպես կպատժվեր խաղացողը:
- Եթե խաղահրապարակում կամ դրանից դուրս կանգնած թիմի պաշտոնյան իր կամ գնդակ է նետում խաղահրապարակում կամ դրանից դուրս կանգնած ցանկացած անձի վրա, ապա մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ «վիճաբանական գնդակի»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը՝ տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Խախտումներ, երբ իրը նետում են դեպի գնդակը

Եթե խաղացողը (ոչ դարպասապահը) իր կամ գնդակ է նետում դեպի գնդակը.

- եթե գնդակը խաղի մեջ է և իրը դիպչում է գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը և զգուշացնեն խաղացողին՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար կամ հեռացնեն նրան, եթե նա այդպես կանխել է գոլը կամ ակնհայտ գոլ խփելու հնարավորությունը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով տուգանային հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք) կամ 6 մետրանոց տուգանային հարված, եթե գնդակը գտնվել է խախտումը կատարած խաղացողի տուգանային հրապարակում:
- եթե գնդակը խաղի մեջ է և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):

Եթե երկու դարպասապահներից մեկը իր կամ գնդակ է նետում դեպի գնդակը.

- եթե գնդակը խաղի մեջ է, և իրը դիպչում է գնդակին դարպասապահի տուգանային հրապարակում, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը և զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):
- եթե գնդակը խաղի մեջ է և իրը դիպչում է գնդակին՝ դարպասապահի տուգանային հրապարակից դուրս, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը և զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար կամ հեռացնեն, եթե նա այդպես կանխել է գոլը կամ ակնհայտ գոլ խփելու հնարավորությունը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով տուգանային հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս:
- եթե գնդակը խաղի մեջ է և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):

Եթե խաղացողը՝ ներառյալ երկու դարպասապահները, մարմնի որևէ մասով (ոչ ձեռքերով) իր է ուղղում դեպի գնդակը:

- Եթե գնդակը խաղի մեջ է և իրը դիպչում է գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը և զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք)
- Եթե գնդակը խաղի մեջ է և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք):

Եթե փոխարինողը խախտում է փոխարինման ընթացակարգը, բայց արդյունքում նրա թիմը չի խաղում լրացուցիչ խաղացողով և նա իր է նետում դեպի գնդակը:

- Եթե գնդակը խաղի մեջ է և իրը դիպչում է գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը: Նրանք պետք է հեռացնեն նրան կամ երկու զգուշացում ստանալու համար, որոնցից առաջինը փոխարինման ընթացակարգը խախտումով խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորումը, կամ միանգամից հեռացնեն, եթե նա այդպես կանխել է գոլը կամ ակնհայտ գոլ խփելու հնարավորությունը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով տուգանային հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք) կամ 6 մետրանոց հարված, եթե գնդակը գտնվել է փոխարինողի տուգանային հրապարակում:
- Եթե գնդակը խաղի մեջ է և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և հեռացնեն նրան երկու զգուշացում ստանալու համար, որոնցից առաջինը փոխարինման ընթացակարգը խախտումով խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորումը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13-Տուգանային/ազատ հարվածների դիրք):

Եթե փոխարինողը խախտում է փոխարինման ընթացակարգը, բայց արդյունքում նրա թիմը չի խաղում լրացուցիչ խաղացողով և նա մարմնի որևէ մասով (ոչ ձեռքերով) իր է ուղղում է դեպի գնդակը.

- եթե գնդակը խաղի մեջ է և իրը դիպչում է գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը: Նրանք պետք է հեռացնեն նրան կամ երկու զգուշացում ստանալու համար, որոնցից առաջինը փոխարինման ընթացակարգը խախտումով խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ ոչ սպորտային վարքագծի դրսևորումը, կամ միանգամից հեռացնեն, եթե նա այդպես կանխել է գոլը կամ ակնհայտ գոլ խփելու հնարավորությունը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):
- եթե գնդակը խաղի մեջ է և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և հեռացնեն նրան երկու զգուշացում ստանալու համար, որոնցից առաջինը փոխարինման ընթացակարգը խախտումով խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ ոչ սպորտային վարքագծի դրսևորումը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):

Եթե փոխարինողը իր է նետում դեպի գնդակը, այսինքն, այդ փոխարինողը սկսում է համարվել, որպես իր թիմի լրացուցիչ խաղացող.

- եթե գնդակը խաղի մեջ է և իրը դիպչում է գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը: Նրանք պետք է հեռացնեն նրան կամ երկու զգուշացում ստանալու համար՝ երկու ոչ սպորտային վարքագծի դրսևորման արդյունքում, որոնցից առաջինը՝ առանց մրցավարների թույլտվության խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ իրը նետելը, կամ միանգամից հեռացնեն, եթե նա այդպես կանխել է գոլը կամ ակնհայտ գոլ խփելու հնարավորությունը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):
- եթե գնդակը խաղի մեջ է և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և հեռացնեն նրան երկու զգուշացում ստանալու համար՝ երկու ոչ սպորտային վարքագծի դրսևորման արդյունքում, որոնցից առաջինը՝ առանց մրցավարների թույլտվության խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ իրը նետելը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):

Եթե փոխարինողը մարմնի որևէ մասով (ոչ ձեռքերով) իր է ուղղում դեպի գնդակը, որի արդյունքում այդ փոխարինողը սկսում է համարվել որպես իր թիմի լրացուցիչ խաղացող:

- Եթե գնդակը խաղի մեջ է և իրը դիպչում է գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը: Նրանք պետք է հեռացնեն նրան կամ երկու զգուշացում ստանալու համար՝ երկու ոչ սպորտային վարքագծի դրսևորման արդյունքում, որոնցից առաջինը՝ առանց մրցավարների թույլտվության խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ իրը նետելը, կամ միանգամից հեռացնեն, եթե նա այդպես կանխել է գոլը կամ ակնհայտ գոլ խփելու հնարավորությունը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):
- Եթե գնդակը խաղի մեջ է և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը և հեռացնեն նրան երկու զգուշացում ստանալու համար՝ երկու ոչ սպորտային վարքագծի դրսևորման արդյունքում, որոնցից առաջինը՝ առանց մրցավարների թույլտվության խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ իրը նետելը: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ մրցակից թիմի օգտին նշանակելով ազատ հարված այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):

Եթե թիմի պաշտոնյան մարմնի որևէ մասով իր է ուղղում դեպի գնդակը.

- Եթե գնդակը խաղի մեջ է, և իրը դիպչում է գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը: Նրանք պետք է հեռացնեն նրան տեխնիկական գոտուց և դրա հարակից տարածքներից: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ «վիճաբանական գնդակի»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:
- Եթե գնդակը խաղի մեջ է, և իրը չի դիպչում գնդակին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը, եթե նրանք չեն կարող կիրառել առավելության սկզբունքը ու հեռացնեն նրան տեխնիկական գոտուց և դրա հարակից տարածքներից: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ «վիճաբանական գնդակի»-ի նետումով այնտեղից, որտեղ գտնվում էր գնդակը խաղը կանգնեցնելիս, բացառությամբ, եթե խաղը կանգնեցվել է տուգանային հրապարակում, որի դեպքում մրցավարներից մեկը կատարում է «վիճաբանական գնդակ»-ի նետումը տուգանային հրապարակի գծի այն կետում, որն ամենամոտն է գնդակի գտնվելու տեղին՝ խաղը կանգնեցնելիս:

Եթե գնդակը խաղի մեջ չէ և խաղացողը իր է նետում դեպի գնդակը, ապա մրցավարները պետք է զգուշացնեն նրան՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար: Մրցավարները պետք է վերսկսեն խաղը՝ «Ֆուտզալ խաղի կանոններ»- ի համաձայն:

Եթե գնդակը խաղի մեջ չէ, և փոխարինողը իր է նետում դեպի գնդակը, ապա, անկախ այն բանից, թե փոխարինողը կսկսի համարվել որպես իր թիմի լրացուցիչ խաղացող, թե ոչ, մրցավարները պետք է հեռացնեն նրան՝ երկու զգուշացում ստանալու համար՝ երկու ոչ սպորտային վարքագծի դրսևորման արդյունքում, որոնցից առաջինը՝ առանց մրցավարների թույլտվության խաղահրապարակ մտնելն է, իսկ երկրորդը՝ իրը նետելը:

Եթե գնդակը խաղի մեջ չէ, և թիմի պաշտոնյան իր է նետում դեպի գնդակը, ապա մրցավարները պետք է հեռացնեն նրան տեխնիկական գոտուց և դրա հարակից տարածքներից:

Գոլ կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից զրկելը

Կա հեռացումով պատժվող երկու խախտում, կապված մրցակցին՝ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից զրկելու հետ: Պարտադիր չէ, որ խախտումը կատարվի տուգանային հրապարակում:

Եթե մրցավարներն՝ ակնհայտ գոլ խփելու հնարավորության ժամանակ կիրառում են առավելություն տալու սկզբունքը և ուղղակիորեն գոլ է խփվում, չնայած մրցակիցը փորձում էր կանխել դա՝ ձեռքով միտումնավոր գնդակ խաղալով, ապա այդ խաղացողը չի կարող հեռացվել, նա կարող է միայն զգուշացվել:

Եթե մրցավարներն՝ ակնհայտ գոլ խփելու հնարավորության ժամանակ կիրառում են առավելություն տալու սկզբունքը և ուղղակիորեն գոլ է խփվում, չնայած մրցակիցը՝ խախտում կատարելով փորձում էր կանխել դա, ապա այդ խաղացողը չի կարող հեռացվել՝ գոլը կանխելու փորձ կատարելու համար, բայց նա՝ խախտման բնույթից կախված, դեռ կարող է զգուշացվել կամ հեռացվել:

Մրցավարները պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները, երբ որոշում են հեռացնել խաղացողին՝ գոլից կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար.

- Խախտման տեղի և դարպասի միջև եղած հեռավորությունը
- Խաղացողի կողմից գնդակին տիրելու կամ իր վերահսկողության տակ պահելու հավանականությունը
- Խաղի ուղղությունը
- Պաշտպանների քանակն ու դիրքը
- Խախտումը, որը մրցակցին զրկում է գոլ խփելու ակնհայտ հնարավորությունից, կարող է պատժվել տուգանային կամ ազատ հարվածով
- Եթե խախտումը կատարվել է փոխարինողի կողմից, ապա նա միշտ պետք է հեռացվի

Խաղացողը չի կարող հեռացվել, երբ ձեռքով, միտումնավոր, գնդակ խաղալով փորձում է կանխել գոլն այն իրադրությունում, երբ «Ֆուտզալ խաղի կանոններ»-ով խաղը վերսկսելուց հետո ուղղակիորեն խփված գոլը չի կարող արձանագրվել: Նա պետք է զգուշացվի՝ ոչ սպորտային վարքագիծ դրսևորելու համար, իսկ նրա թիմը պատժվի տուգանային կամ 6 մետրանոց տուգանային հարվածով:

Եթե փոխարինողը խաղահրապարակ է մտնում՝ գոլը կամ գոլ խփելու ակնհայտ հնարավորությունը կանխելու նպատակով, ապա նա պետք է հեռացվի՝ անկախ նրանից, հասնու՞մ է իր նպատակին, թե՞ ոչ:

Ընթացակարգ

- Գնդակը խաղի մեջ է, երբ նրան հարվածում են ոտքով և այն շարժվում է
- Տուգանային/ազատ հարվածները կարող են կատարվել՝ գնդակը վեր բարձրացնելով մեկ կամ միաժամանակ երկու ոտքով
- Մրցակցին ապակողմնորոշելու նպատակով, թույլատրվում է տուգանային/ազատ հարվածները կատարել խաբբով, որպես ֆուտզալի մաս: Այնուամենայնիվ, եթե, մրցավարների կարծիքով, խաբբը իր մեջ պարունակում է ոչ սպորտային վարքագծի դրսևորման տարր, ապա խաղացողը պետք է զգուշացվի
- Եթե խաղացողը տուգանային/ազատ հարվածը ճիշտ կատարելով, գնդակին կրկին տիրելու նպատակով՝ գնդակով միտումնավոր հարվածում է մրցակցին, բայց ոչ անզգուշորեն, ոչ անգիտակցորեն և ոչ էլ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա մրցավարները պետք է թույլատրեն խաղը շարունակել
- Եթե ազատ հարվածը կատարելուց հետո գնդակն ուղղակիորեն գուլ է մտել, սակայն մրցավարները մոռացել էին բարձրացնել ձեռքը, ցույց տալու համար, որ դա ազատ հարված էր, ապա հարվածը պետք է կրկնվի: Մրցավարների սխալի պատճառով, նախապես մշանակված ազատ հարվածը չեղյալ չի համարվում:
- Եթե, որպես խաղային շարժման մաս, դարպասապահը հայտնվում է սեփական դարպասից դուրս կամ ցանկացած խաղացող (ներառյալ դարպասապահը) հայտնվում է խաղահրապարակից դուրս, ապա մրցակից թիմը կարող է արագ կատարել տուգանային հարվածը, պայմանով, որ դա խախտում կատարած թիմի վեցերորդ կուտակային տուգանքը չէ:
- Եթե դարպասասյուներից մեկին կամ հեծանին դիպչելուց հետո գնդակը պայթում է և գուլ չի մտնում, ապա մրցավարները չեն հրահանգում կրկնել հարվածը: Նրանք կանգնեցնում են խաղը և վերսկսում այն «վիճաբանական գնդակ»-ի նետումով՝ գնդակի պայթելու տեղից (տես Կանոն 8 - «վիճաբանական գնդակ»):
- Եթե, սկսած վեցերորդ կուտակային տուգանքից, տուգանային հարվածը կատարող խաղացողը հարվածում է գնդակն առաջ, միտումով, որ թիմակիցը հարվածի դարպասին, ապա մրցավարները պետք է կանգնեցնեն խաղը և վերսկսեն այն ազատ հարվածով այնտեղից, որտեղ հարվածողի թիմակիցը դիպել է գնդակին, եթե նրանք չեն կիրառել առավելություն տալու սկզբունքը (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք):
- Եթե մրցավարները հրահանգում են կրկնել տուգանային/ազատ հարվածը, ապա նոր հարվածը կարող է կատարվել ցանկացած խաղացողի կողմից
- Եթե տուգանային կամ ազատ հարված կատարող խաղացողը (մինչ վեցերորդ կուտակային տուգանքը), մինչ հարվածը, խնդրանքով դիմում է մրցավարներին, որ մրցակիցները պահպանեն սահմանված հեռավորությունը, բայց կատարում է հարվածը մինչ մրցավարների ազդանշանը, ապա մրցավարները պետք է հրահանգեն կրկնել հարվածը և զգուշացնեն խաղացողին, եթե նրանք չեն կիրառել առավելություն տալու սկզբունքը:

- Եթե տուգանային հարված կատարող խաղացողը (սկսած վեցերորդ կուտակային տուգանքից), հարվածը կատարում է մինչ մրցավարների ազդանշանը, ապա մրցավարները պետք է հրահանգեն կրկնել հարվածը և զգուշացնեն խաղացողին
- Եթե խաղակեսի ժամանակը երկարաձգվում է, որպեսզի կատարվի տուգանային հարվածը (սկսած վեցերորդ կուտակային տուգանքից) և հարվածից հետո գնդակը դիպչում է դարպասասյուներից մեկին, հեծանին կամ դարպասապահին և գոլ է մտնում, ապա մրցավարները պետք է արձանագրեն գոլը
- Եթե խաղակեսի ժամանակը երկարաձգվում է, որպեսզի կատարվի տուգանային հարվածը (սկսած վեցերորդ կուտակային տուգանքից), ապա պաշտպանվող թիմի դարպասապահը կարող է փոխարինվել խաղահրապարակում գտնվող խաղացողով կամ փոխարինողով: Այս դեպքում պետք է պահպանվի փոխարինման ընթացակարգը:

Չեռավորություն

Եթե խաղացողը որոշում է արագ կատարել տուգանային/ազատ հարվածը, իսկ մրցակիցը, ով 5մ-ից մոտ է գտնվում գնդակին, խլում է այն, ապա մրցավարները պետք է թույլատրեն խաղը շարունակել:

Եթե խաղացողը որոշում է արագ կատարել տուգանային/ազատ հարվածը, իսկ գնդակի մոտ գտնվող մրցակիցը՝ միտումնավոր խանգարում է նրան կատարել այն, ապա մրցավարները պետք է զգուշացնեն մրցակցին՝ խաղի վերսկսումը ձգձգելու համար:

Եթե պաշտպանվող թիմը, սեփական տուգանային հրապարակից կատարում է տուգանային /ազատ հարված, իսկ մեկ կամ մի քանի մրցակիցներ դեռ տուգանային հրապարակում են, քանի որ պաշտպանը որոշել էր արագ կատարել հարվածը և մրցակիցները ժամանակ չէին ունեցել թողնել այն, ապա մրցավարները պետք է թույլատրեն խաղը շարունակել, եթե գնդակն առանց որևէ խաղացողի դիպչելու՝ ուղղակիորեն դուրս է գալիս տուգանային հրապարակից:

Սուլիչից հետո և մինչ գնդակի խաղի մեջ մտնելը կատարված խախտումներ՝ սկսած վեցերորդ կուտակային տուգանքից

Խախտումներ	Հարվածի արդյունքը	
	Գոլ է	Գոլ չէ
Հարձակվող խաղացողի կողմից	Հարվածը կրկնվում է	Ազատ հարված
Հարձակվողը չի հարվածում դարպասին	—	Ազատ հարված
Այլ խաղացողի կողմից կատարված հարված (նախապես որոշված խաղացողի փոխարեն)	Ազատ հարված	Ազատ հարված
Պաշտպանվող խաղացողի կողմից	Գոլ	Հարվածը կրկնվում է
Երկու թիմերի կողմից	Հարվածը կրկնվում է	Հարվածը կրկնվում է

Ընթացակարգ

- 6 մետրանոց հարված կատարելիս, մրցակցին ապակողմնորոշելու համար, թույլատրվում է կատարել խաբբով թափավազք, որպես ֆուտզալի մաս: Այնուամենայնիվ, երբ խաղացողն արդեն ավարտել է թափավազքը, խաբբով գնդակին հարվածելը համարվում է Կանոն 14-ի խախտում՝ ոչ սպորտային վարքագծի դրսևորում, որի համար խաղացողը պետք է զգուշացվի
- Եթե դարպասասյուներից մեկին կամ հեծանին դիպչելուց հետո գնդակը պայթում և գոլ է մտնում, ապա մրցավարները պետք է արձանագրեն գոլը
- Եթե դարպասասյուներից մեկին կամ հեծանին դիպչելուց հետո գնդակը պայթում և գոլ չի մտնում, ապա մրցավարները չպետք է 6 մետրանոց հարվածը կրկնելու հրահանգ տան, բայց պետք է կանգնեցնեն խաղը և այն վերսկսեն «վիճաբանական գնդակ»-ի նետումով՝ տուգանային հրապարակի գծի այն կետից, որն ամենամոտն էր գնդակի պայթելու տեղին
- Եթե 6 մետրանոց հարված կատարող խաղացողը հարվածում է գնդակն առաջ, միտումով, որ թիմակիցը հարվածի դարպասին, ապա մրցավարները պետք է արձանագրեն գոլը, եթե պահպանվել է Կանոն 14-ով սահմանված՝ 6 մետրանոց տուգանային հարվածի ընթացակարգը
- Եթե մրցավարները հրահանգում են կրկնել 6 մետրանոց հարվածը, ապա նոր հարվածը կարող է կատարվել ցանկացած խաղացողի կողմից
- Եթե 6 մետրանոց հարված կատարող խաղացողը հարվածը կատարում է մինչ մրցավարների ազդանշանը, ապա մրցավարները պետք է հրահանգեն կրկնել հարվածը և զգուշացնեն խաղացողին
- Եթե խաղակեսի ժամանակը երկարաձգվում է, որպեսզի կատարվի 6 մետրանոց հարվածը և հարվածից հետո գնդակը դիպչում է դարպասասյուներից մեկին, հեծանին կամ դարպասապահին և գոլ է մտնում, ապա մրցավարները պետք է արձանագրեն գոլը
- Եթե խաղակեսի ժամանակը երկարաձգվում է, որպեսզի կատարվի 6 մետրանոց հարվածը, ապա պաշտպանվող թիմի դարպասապահը կարող է փոխարինվել խաղահրապարակում գտնվող խաղացողով կամ փոխարինողով: Այս դեպքում պետք է պահպանվի փոխարինման ընթացակարգը

6 մետրանոց հարվածի նախապատրաստում

Մինչև 6 մետրանոց հարվածն իրացնելը, մրցավարները պետք է համոզվեն, որ կատարված են հետևյալ պահանջները.

- Հարվածը կատարողը հստակ առանձնացված է
- Գնդակը համապատասխան ձևով դրված է 6 մետրանոց նշակետին
- Դարպասապահը դարպասասյուների միջև դարպասային գծի վրա է դեմքով դեպի հարվածողը
- Հարվածողի թիմակիցները.
 - դուրս են տուգանային հրապակից
 - 5մ հեռու են գնդակից
 - հետ են գնդակից

Սուլիչից հետո և մինչ գնդակի խաղի մեջ մտնելը կատարված խախտումներ

	Հարվածի արդյունքը	
	Գոլ է	Գոլ չէ
Խախտումներ		
Հարձակվող խաղացողի կողմից	Հարվածը կրկնվում է	Ազատ հարված
Հարվածողը հետ է հարվածում	Ազատ հարված	Ազատ հարված
Այլ խաղացողի կողմից կատարված հարված (նախապես որոշված խաղացողի փոխարեն)	Ազատ հարված	Ազատ հարված
Պաշտպանվող խաղացողի կողմից	Գոլ	Հարվածը կրկնվում է
Երկու թիմերի կողմից	Հարվածը կրկնվում է	Հարվածը կրկնվում է

Եթե հարձակվողը կամ պաշտպանը մրցակցի նկատմամբ խախտում է կատարում՝ մինչ գնդակը կմտնի խաղի մեջ, բայց մրցավարներից մեկի կողմից հարվածը կատարելու ազդանշանից հետո, ապա մրցավարները պետք է թույլատրեն կատարել հարվածը: Եթե գոլ է խփվում և խախտում կատարել էր պաշտպանվող թիմը, ապա մրցավարները պետք է արձանագրեն գոլը: Եթե խախտում կատարել էր հարձակվող թիմը, ապա մրցավարները պետք է հրահանգեն կրկնել հարվածը: Եթե գոլ չի խփվում և խախտում կատարել էր պաշտպանվող թիմը, ապա մրցավարները պետք է հրահանգեն կրկնել հարվածը: Եթե խախտում կատարել էր հարձակվող թիմը, ապա մրցավարները պետք է նշանակեն ազատ հարված այնտեղից, որտեղ կատարվել է խախտումը (տես Կանոն 13- Տուգանային/ազատ հարվածների դիրք): Բացի դրանից, մրցավարները պետք է կիրառեն համապատասխան կարգապահական պատժամիջոցներ:

Ընթացակարգ խախտումների դեպքում

Մրցավարները պետք է հիշեն, որ մրցակիցները կարող են լինել 5մ-ից ոչ մոտ այնտեղից, որտեղից կատարվելու է կողագծից հարվածը: Անհրաժեշտության դեպքում, նրանք պետք է նախազգուշացնեն այդ տարածությունում գտնվող ցանկացած խաղացողի՝ մինչև կողագծից հարվածի կատարվելը և զգուշացնեն նրան, եթե վերջինս դրանից հետո էլ չի պահպանում սահմանված հեռավորությունը: Խաղը վերսկսվում է կողագծից հարվածով և չորս վայրկյանի հաշվարկը սկսվում է սկզբից, եթե այն արդեն սկսվել էր:

Եթե խաղացողը, ճիշտ կատարելով կողագծից հարվածը, միտումնավոր հարվածում է գնդակը մրցակցի վրա՝ կրկին գնդակին տիրելու համար, բայց ոչ անզուշորեն, ոչ անգիտակցորեն և ոչ էլ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա մրցավարները պետք է թույլատրեն խաղը շարունակել:

Եթե կողագծից հարվածով գնդակը ուղղակիորեն մտնում է մրցակցի դարպասը, ապա մրցավարները պետք է նշանակեն նետում դարպասից: Եթե կողագծից հարվածով գնդակն ուղղակիորեն մտնում է հարվածողի դարպասը, ապա մրցավարները պետք է նշանակեն անկյունային հարված:

Եթե կողագծից հարվածից հետո գնդակը չի մտնում խաղահրապարակ, ապա մրցավարները պետք է հրահանգեն, որ մրցակից թիմի խաղացողը վերսկսի կողագծից հարվածը:

Եթե, որպես խաղային շարժման մաս, դարպասապահը հայտնվում է սեփական դարպասից դուրս կամ ցանկացած խաղացող (ճերամշալ դարպասապահը) հայտնվում է խաղահրապարակից դուրս, ապա մրցակից թիմը կարող է արագ կատարել կողագծից հարվածը:

Եթե կողագծից հարվածը սխալ է կատարվել, ապա մրցավարները չեն կարող կիրառել առավելություն տալու սկզբունքը, նույնիսկ, եթե գնդակն ուղղակիորեն գնում է դեպի մրցակիցը, այլ պետք է հրահանգեն, որ մրցակից թիմի խաղացողը կատարի կողագծից հարվածը:

Ընթացակարգ խախտումների դեպքում

Եթե՝ մինչ գնդակի խաղի մեջ մտնելը, մրցակիցը մտնում է տուգանային հրապարակ կամ դեռ այնտեղ է և, պաշտպանը խախտում է կատարում նրա նկատմամբ, ապա դարպասից նետումը կրկնվում է, իսկ պաշտպանը, կախված խախտման բնույթից, կարող է զգուշացվել կամ հեռացվել:

Եթե դարպասապահը կատարում է նետում դարպասից, սակայն մրցակից թիմի մեկ կամ մի քանի խաղացողներ գտնվում են տուգանային հրապարակում, քանի որ չեն հասցրել դուրս գալ այնտեղից, որովհետև դարպասապահը որոշել էր արագ կատարել դարպասից նետումը, ապա մրցավարները պետք է թույլատրեն խաղը շարունակել, եթե գնդակը դուրս է եկել տուգանային հրապարակից՝ առանց որևէ խաղացողի դիպչելու:

Եթե դարպասապահը, ճիշտ կատարելով դարպասից նետումը, միտումնավոր նետում է գնդակը տուգանային հրապարակից դուրս գտնվող մրցակցի վրա, բայց ոչ անզգուշորեն, ոչ անգիտակցորեն և ոչ էլ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա մրցավարները պետք է թույլատրեն խաղը շարունակել:

Եթե դարպասապահը կատարում է դարպասից նետում, և գնդակը դուրս չի գալիս տուգանային հրապարակից, ապա մրցավարները պետք է հրահանգեն կրկնել դարպասից նետումը, այնուամենայնիվ, չորս վայրկյանի հաշվարկը շարունակվում է, երբ դարպասապահը պատրաստ է լինում կրկնել նետումը:

Պարտադիր չէ, որ գնդակը լինի դարպասապահի ձեռքերում, որպեսզի մրցավարներն սկսեն չորս վայրկյանի հաշվարկը:

Եթե դարպասապահը ճիշտ կատարում է դարպասից նետումը և, գնդակը տուգանային հրապարակից դուրս գալուց հետո, միտումնավոր, կրկին դիպչում է դրան ձեռքով՝ մինչ մեկ այլ խաղացող կդիպչի գնդակին, ապա մրցավարները մրցակից թիմի օգտին պետք է նշանակեն տուգանային հարված և, անհրաժեշտության դեպքում, նրա նկատմամբ կիրառեն նաև կարգապահական պատժամիջոցներ՝ համաձայն «Ֆուտզալ խաղի կանոն-ներ»-ի:

Եթե դարպասապահը կատարում է դարպասից նետումը ոտքով, ապա մրցավարները պետք է մախազգուշացնեն նրան և հրահանգեն կատարել դա ձեռքով: Երբ դարպասապահը պատրաստ է լինում կրկնել նետումը՝ չորս վայրկյանի հաշվարկը պետք է շարունակվի:

Եթե, որպես խաղային շարժման մաս, դարպասապահը հայտնվում է սեփական դարպասից դուրս կամ ցանկացած խաղացող (ներառյալ դարպասապահը) հայտնվում է խաղահրապարակից դուրս, ապա մրցակից թիմի դարպասապահը կարող է արագ կատարել դարպասից նետումը:

Եթե դարպասապահը կատարում է դարպասից նետումը և գնդակը հատում է նրա դարպասային գիծը՝ առանց դուրս գալու տուգանային հրապարակից, ապա մրցավարները պետք է հրահանգեն կրկնել այն: Երբ դարպասապահը

պատրաստ է լինում կրկնել նետումը՝ չորս վայրկյանի հաշվարկը պետք է շարունակվի:

Եթե դարպասից նետումից հետո, մինչ տուգանային հրապարակից դուրս գալը, գնդակը դիպչում է մրցավարներից մեկին և մտնում խաղի մեջ, ապա մրցավարները թույլատրում են շարունակել խաղը:


Ընթացակարգ խախտումների դեպքում

Մրցավարները պետք է հիշեն, որ մրցակիցները, մինչ գնդակը խաղի մեջ մտնելը, պետք է անկյունային աղեղից գտնվեն առնվազն 5մ հեռավորություն վրա: Անհրաժեշտության դեպքում, նրանք պետք է նախագգուշացնեն այդ տարածությունում գտնվող ցանկացած խաղացողի՝ մինչև անկյունային հարվածի կատարվելը և զգուշացնեն նրան, եթե վերջինս դրանից հետո էլ չի պահպանում սահմանված հեռավորությունը:

Եթե խաղացողը, ճիշտ կատարելով անկյունային հարվածը, միտումնավոր հարվածում է գնդակը մրցակցի վրա՝ կրկին գնդակին տիրելու համար, բայց ոչ անզգուշորեն, ոչ անգիտակցորեն և ոչ էլ օգտագործելով չափազանց մեծ ուժ, ապա մրցավարները պետք է թույլատրեն խաղը շարունակել:

Գնդակը պետք է տեղադրված լինի անկյունային սեկտորի ներսում և համարվի խաղի մեջ, երբ դրան հարվածում են ուղքով, ուստի պարտադիր չէ, որ խաղի մեջ մտնելու համար՝ գնդակը դուրս գա անկյունային սեկտորից:

Եթե, որպես խաղային շարժման մաս, դարպասապահը հայտնվում է սեփական դարպասից դուրս կամ ցանկացած խաղացող (ներառյալ դարպասապահը) հայտնվում է խաղահրապարակից դուրս, ապա մրցակից թիմը կարող է արագ կատարել անկյունային հարվածը:



ԼՐԱՅՈՒՑԻՉ ԺԱՄԱՆԱԿ

Ընթացակարգ

- Լրացուցիչ ժամանակի երկու խաղակետերը խաղի մաս չեն
- Լրացուցիչ ժամանակի երկու խաղակետերի ընթացքում խաղացողները կան փոխարինողները կարող են զգուշացվել կամ հեռացվել
- Լրացուցիչ ժամանակի երկու խաղակետերի ընթացքում ստացած կուտակային տուգանքները գումարվում են խաղի երկրորդ խաղակեսի կուտակային տուգանքներին
- Լրացուցիչ ժամանակի խաղակետերի ընթացքում թիմերը չունեն մեկ րոպեանոց խաղադադարի իրավունք, նույնիսկ, եթե նրանք չեն օգտագործել այն՝ խաղի երկրորդ խաղակեսի ընթացքում

6 ՄԵՏՐԱՆՈՑ ՀԱՐԿԱԾԱՇԱՐ

Ընթացակարգ

- 6 մետրանոց հարվածաշարը խաղի մաս չէ
- Տուգանային հրապարակը, որտեղ անցկացվում է 6 մետրանոց հարվածաշարը, կարող է միայն փոխվել կամ անվտանգության նկատառումներով, կամ, եթե դարպասը կամ խաղային ծածկույթը դարձել են ոչ պիտանի Այն բանից հետո, երբ իրավունք ունեցող բոլոր խաղացողները կատարել են հարվածներ 6 մետրանոց մշակետից, պարտադիր չէ պահպանել հարվածաշարի առաջին շրջանի հերթականությունը
- Յուրաքանչյուր թիմ է իր խաղացողներից և փոխարինողներից ընտրում այն խաղացողներին, որոնք պետք է մասնակցեն 6 մետրանոց հարվածաշարին, որոշում՝ նրանց կատարելիք հարվածների հերթականությունը և մինչ հարվածաշարի սկիզբը այդ մասին պարտադիր տեղյակ պահում երրորդ մրցավարին
- 6 մետրանոց հարվածաշարի սկսվելուց հետո, վնասվածք ստացած ցանկացած խաղացող, դարպասապահից բացի, չի կարող փոխարինվել իրավունք ունեցող այլ խաղացողով, եթե այդպիսիք կան
- Եթե դարպասապահը, 6 մետրանոց հարվածաշարի ընթացքում հեռացվում է, ապա նա կարող է փոխարինվել իրավունք ունեցող այլ խաղացողով, բայց ոչ այլ դարպասապահով՝ ով ընդգրկված չի եղել 6 մետրանոց հարվածաշարի հարված կատարողների կազմում
- 6 մետրանոց հարվածաշարի ընթացքում խաղացողը կամ փոխարինողը կարող է զգուշացվել կամ հեռացվել
- Մրցավարները չպետք է դադարեցնեն 6 մետրանոց հարվածաշարը, եթե այդ ընթացքում թիմերից մեկի կազմում մնա 3-ից պակաս խաղացող

- Եթե 6 մետրանոց հարվածաշարի ընթացքում խաղացողը վնասվածք է ստանում կամ հեռացվում և թիմը մնում է 1 խաղացող պակաս, ապա մրցավարները չպետք է պակասեցնեն մյուս թիմի հարված կատարող խաղացողների քանակը
- Յուրաքանչյուր թիմում հավասար քանակի խաղացողներ ունենալը պարտադիր է միայն 6 մետրանոց հարվածաշարի սկզբի համար
- Եթե դարպասասյուներից մեկին, հեծանին կամ դարպասապահին դիպչելուց հետո գնդակը պայթում և գոլ է մտնում, ապա մրցավարները պետք է արձանագրեն գոլը
- Եթե դարպասասյուներից մեկին կամ հեծանին դիպչելուց հետո գնդակը պայթում կամ դառնում է ոչ պիտանի և գոլ է մտնում, ապա մրցավարները պետք է արձանագրեն գոլը
- Եթե դարպասասյուներից մեկին կամ հեծանին դիպչելուց հետո գնդակը պայթում կամ դառնում է ոչ պիտանի և գոլ չի մտնում, ապա մրցավարները չպետք է հրահանգեն կրկնել հարվածը, այլ պետք է համարեն, որ հարվածը կատարված է
- Եթե մրցաշարի կանոնակարգը, դաշտի տեր-հյուր խաղերի արդյունքում հաղթողին որոշելու համար պահանջում է անցկացնել 6 մետրանոց հարվածաշար, սակայն թիմերը հրաժարվում են կատարել դա, ապա մրցավարներն այդ մասին պետք է տեղեկացնեն մրցումներն անցկացնող կազմակերպությանը
- Եթե մինչ 6 մետրանոց հարվածաշարի սկիզբը, վնասվածք չստացած մեկ կամ մի քանի իրավունք ունեցող խաղացողներ թողնում են խաղահրապարակը կամ հարվածաշարը սկսվելուց հետո հրաժարվում են կատարել հարվածներ, ապա մրցավարները պետք է դադարեցնեն 6 մետրանոց հարվածաշարը և այդ մասին տեղեկացնեն մրցումներն անցկացնող կազմակերպությանը
- 6 մետրանոց հարվածաշարի ընթացքում՝ մրցավարները խաղահրապարակում չպետք է թույլատրեն տեսախցիկներ